© յԱյծեղիսիւրն ժ. 3. ր. 15

ՏՏ. Պուրցի ձեօր

© Առ. Բռ. ժ 5, ր. 40

Յրտաքեր հոգմունք

24 11 **ԲԵ** — Հց. Պահչբ. — Սբբոցն՝  
Մինասայ, Երմոզինեայ,  
Գրաբոսի, և Կամաւոր աղ  
քատացն՝ Յովհաննու և Ա-  
լեքսիանոսի: — Հհց Պահչբ.  
Նւսառատիոսի, Օքսենտիո-  
սի. Նւգինէսի, Ովրեստեսի  
և Մարդարիոնի:

Ա ԷՎ

25 12 **ԳԵ**. — Հց. Պահչբ. Սբբոցն՝  
Կուռնելիոսի Հարիւրապե-  
տին և Եմաւոնի ազգակա-  
նին Քրիստոսի, և Պողիկար-  
պոսի Հայրապետին: — Հհց.  
Պահչբ. Իգնատիոսի Աստ-  
ուածազգեաց Հայրապե-  
տին, և Թէոպոմպայ եպիս-  
կոպոսին, և Թէոֆիլայ վկա-  
յին, և չորից զինուորացն՝  
Բաստի, Նւսերի. Նւտիքի  
և Բասիլիդեայ: — Յն՝  
Սպիրիտի եղիւպոսին: —  
Լր Մուսնք Տեառն Յիսուսի  
Քրիստոսի:

Գ ԷԱ

26 13 **ԴԵ** — Հց և Հհց Պահչբ. —  
Լր Ստեփանոսի Կաթակոպին:  
Տար. Ծննդ. Երկիրս Ա.  
Թագ. Յուստատանի. 1845

Վ ԷԳ

27 14 **ԵԵ**. — Հց. Պահչբ. Սբբոցն՝ Ե-

ՎՎ 0.

ւստաւատիոսի, Օքսենտիոսի,  
Նւգինէոսի, Ովրեստեսի և  
Մարտարիոնի: — Հհց. Աղ-  
դէի Հայրապետին և Ար-  
դարու թագաւորին: — Լր.  
Յովհաննու ատրուսին: —  
Հր. Մոս Էմաւոնի Եր-  
մոզի և Կամաւոր աղքատացն  
Յովհաննու:

28 15 **ՈՒՐ**. — Հց. և Հհց Պահչբ. — 15 01  
Լր Մուսնքի Բեթլէհէմի:

29 16 **ՇԱ**. Հց. և Հհց Սբբոցն՝ Յա- 15 05  
կոբայ Մծբնայ Հայրապե-  
տին, Մարուգէի Ճգնաւո-  
րին, և Մելիտոսի եպիսկո-  
պոսին: Ա. Արամ. օր 30:

30 17 **ՃԱՐ**. — Հց. Գ. Յիսնակաց: 15 07  
Հարաւիտի: — Հհց. Բարե-  
կենդան Մննդեանն Քրիս-  
տոսի: — Յն. Դանիէլի Ժո-  
զորի:

31 18 **ՌԵ**. — Հց Սբբոց Հայրապե- 10 02  
տացն՝ Իգնատիոսի և Աղ-  
դէի, և Մարութայի եպիս-  
կոպոսին: — Հհց. Ա օր պա-  
հոց Մննդեան — Լր. Սեղբե-  
րոսի Հարաւայ Հայրապետին:

Ⓞ Լր. Լս ժ. 4, ր. 5  
Անճրիւարեր հողմուեր

1 19

ԳԵ. — Հց. Սրբոցն՝ Թէոպոլ-  
պայ եպիսկոպոսին. և Թէո-  
փնայ վկային, և չորից զին-  
ուորացն Բաստսի, Եւսեփի,  
Եւտիքի և Բասիլիդէայ —  
Հհց Բ. օր պահոց Մննդե-  
եան: — ԼԳ. Յանուար և  
դարեմար 1907 Բասիլիդէ  
Քրիստոսի. և ոմն Տնօրէնու-  
թեան Տեառն:

17 00

2 20

ԳԵ. — Հց. Պահք: — Հհց. Գ.  
օր պահոց Մննդեան:

17 07

3 21

ԵՇ. — Հց Սրբոց կուսանացն՝  
Ինգոսի, և Գոմնայի, և Գը-  
ղերիկոսի քահանային, և  
Երկուց բերքուցն որք յայ-  
րեցան յեկեղեցին Նիկո-  
միդացւոց: — Հհց. Գ. օր  
պահոց Մննդեան:

18 07

4 22

ՈՒՐ. — Հց. Պահք: — Պհց. Ե.  
օր պահոց Մննդեան:

19 08

5 23

ՇՐ. — Հց. Սրբոցն Գաւթի  
մարգարէին և Յակորայ ա-  
ռաքելոյն: Եւս Հհց. որոց և  
Զ. օր պահոց Մննդեան:

19 09

6 24

ՃԱՐԵ. — Հց. Ե. Յիսնակաց: —  
Հհց. Է. օր պահոց Մննդեան.  
Եւ ճրագալոյց Մննդեանն  
Քրիստոսի: Եւս Յն. — ԼԳ.

19 10

7 25

Յայրնս-Թեան Տեառն:  
ԳԵ. — Հց Սրբոցն Ստեփանոսի  
նախասարկաւագին և ա-  
ռաջին մարտիրոսին: — Հհց. Գ.  
Մնուկ Տեառն Յիսուսի  
Ուտիք և նոցա ութ օր ան-  
ընդհատ: — Յն. Գ. օր  
Տեառն. և սարիք և ֆնլե  
Յանուար 4 շարունակ:

19 11

Յ Վր. Բն ժ. 18, ր. 55  
Զիւնարեր հողմունք

8 26

ԳԵ. — Հց. Սրբոց առաքելոցն  
Պետրոսի և Պողոսի: — Հհց. Գ.  
օր Մննդեան: Եւ Ստե-  
փանոսի նախավկային:

19 12

9 27

ԳԵ. — Հց Պահք: — Հհց. Գ.  
օր Մննդեան: — Յն. Գ. օր  
Մննդեան և Սարեֆանոսի նա-  
խավկային:

19 13

10 28

ԵՇ. — Հց. Սրբոց որդւոցն Ո-  
րոտման, Յակորայ առաքե-  
լոյն և Յովհաննու աւետա-  
բանչին: Բարեկենդան պա-  
հոց Մննդեան: — Հհց. Գ.  
օր Մննդեան, և սրբոց ա-  
ռաքելոցն Պետրոսի և Պո-  
ղոսի:

19 14

11 29

ՈՒՐ. — Հց. Պահք: — Հհց.

19 15



2

12 30

Ե. օր Ծննդեան  
 ՇՐ. — Հց. Ա. օր պահոց Ծը-  
 ննդեան: Եւ սրբոյն Քարա-  
 զի հայրապետին, և եղբօրն  
 Գրիգորի Նիւսացւոյն, Սեղ-  
 րեսարոսի Հռոմոյ հայրա-  
 պետին, և Աբբայ Եփրեմի  
 Խուրին Ասորւոյ: — Հհց.  
 Զ. օր Ծննդեան: Եւ սրբ-  
 ւոցն Որոտման Յակովբայ  
 աւաքելոյն և Յովհաննու  
 աւետարանչին:

ԸՎ ԴԴ

13 31

\*ՎԻՐ. — Հց. Զ. Յիսնակայ  
 — Հհց. Է. օր Ծննդեան:

ԸԱ ԴՎ

Յօրինեց

Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ



ԺԱՄԱՆՆՈՒԿԱՎՐՈՒԹԻՒՆՔ

ԵՆԵՆԵԼԻ ԱՆՅԻՑ ԻՆՉ ԱՇԽԱՐՀԻ

Ի սեղոմանէ աշխարհի մինչեւ ցայժմ են ամբ . . . . .	7334
Ի ջրհեղեղէ . . . . .	5069
Ի գիւտոյ ապակոյ . . . . .	3546
Ի ծննդեան Քրիստոսի . . . . .	1906
Ի նահապետութեան Թադէոսի ա- ռաբելոյն եւ Սանդիսոյ կուսին	1858
Ի ծննդեան Ս. Գրիգոր Լուսաւորչի	1649
Ի լուսաւորութեան Հայոց ի ձեռն Գրիգորի Լուսաւորչի . . . . .	1603
Ի շինութեան Ս. Էջմիածնի, ուր նաստեայ կայ Հայրապետ- քին ամենայն Հայոց . . . . .	1602
Ի սիեգերական ժողովոյն Նիկիոյ	1581
Ի գիւտոյ Խաչին Քրիստոսի յերու- տալէմ ի Հեղինեայ թագուհոյ	1579
Ի շինութեան Կ. Պոլսոյ . . . . .	1577
Ի սիեգերական ժողովոյն Կ. Պոլսոյ	1525
Ի գիւտոյ Հայրեան, այլու բեցից ի ձեռն Մեսրոպայ . . . . .	1470
Ի սիեգերական ժողովոյն Եփեսոսի	1475
Ի քարգնամութեան Ասուածա- տունչ գրոց ի Հայ . . . . .	1470
Ի շինութեան տմարին Հայոց . . . . .	1355
Ի յայտնելոյ Ս. Խաչին ի Վարապայ	1253



ՅԻՇՈՏԱԿՈՐԱՆ

ՆՐՈՒԿՈՏՈՂԻՑ

# ՕՍՄԱՆԵԱՆ

## Կ Ա Յ Ս Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ս Ո Ւ Լ Թ Ա Ն Ք

ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ

Թողանք քահանայ  
Հեղինակ Գրիգոր

1. Սուլթան Օսման Ա. Ղազի 699 1299
2. Սուլթան Օրխան Ա. Ղազի 726 1327
3. Սուլթան Մուրադ Ա. Ղազի 761 1360
4. Սուլթան Պայազիս Ա. Երսրբբմ 791 1389
5. Սուլթան Մեհեմետ Ա. Չելեպի 816 1413
6. Սուլթան Մուրադ Բ. Ղազի 824 1421
7. Սուլթան Մեհեմետ Բ. Ֆաթիհ 855 1451
8. Սուլթան Պայազիս Բ. Ղազի 886 1481
9. Սուլթան Սելիմ Ա. Եավուզ 918 1512
10. Սուլթան Սիլվեյման Ա. Գանձնի 926 1520
11. Սուլթան Սելիմ Բ. Ղազի 974 1566
12. Սուլթան Մուրադ Գ. Ղազի 983 1574
13. Սուլթան Մեհեմետ Գ. Ղազի 1003 1595
14. Սուլթան Ահմետ Ա. Ղազի 1012 1603

15. Սուրբան Մուսրաճա Ա.	1026	1617
16. Սուրբան Օսման Բ. Կէնն	1028	1618
17. Սուրբան Մուրաւս Գ. Ղազի	1032	1622
18. Սուրբան Իպրահիմ Ա.	1049	1640
19. Սուրբան Մէհէմմէտ Գ. Ղազի	1058	1648
20. Սուրբան Սիւլէյման Բ.	1099	1687
21. Սուրբան Ահմէտ Բ.	1102	1691
22. Սուրբան Մուսրաճայ Բ.	1106	1695
23. Սուրբան Ահմէտ Գ. Ղազի	1115	1702
24. Սուրբան Մահմուտ Ա. Ղազի	1143	1730
25. Սուրբան Օսման Գ.	1168	1754
26. Սուրբան Մուսրաճա Գ. Ղազի	1182	1757
27. Սուրբան Ապս-իւլ-Համիտ Ա. Ղազի	1187	1773
28. Սուրբան Սէլիմ Գ. Ղազի	1203	1789
29. Սուրբան Մուսրաճա Գ.	1222	1807
30. Սուրբան Մահմուտ Բ. Ասիլ	1223	1808
31. Սուրբան Ապս-իւլ-Մէնիտ Ա. Ղազի	1255	1839
32. Սուրբան Ապս-իւլ-Ազիզ Ա.	1277	1861



**ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ**  
**ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏ Բ.**

Խան Ղազի

ԲԱՐԵԽՆԱՄ ԻՆՔՆԱԿԱԼ

34<sup>րդ</sup> Կայսր Օսմանեան Հարսու-  
թեան Եւ 28<sup>րդ</sup> Կայսր յառմանէ Կոս-  
տանդնուպոլսոյ, որդի Սուրբան Ապս-  
իւլ-Մէնիտ Խանի, ծնեալ 16 Շա-  
պան 1258 (10/22 Սեպտեմբեր 1842),  
գահակալէ ի 11 Շապան 1293 (19/31  
Օգոստոս 1876) :

ԱՒԱԳԱՆԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԱՆ

Մեծ ներքինացեալ (Տար-խոս-սաաւեր իւր եւ-  
րիձէ աղասր) — ԱՊՏԻՒՂԱՆԻ ԱՂԱՒ:

Առաջին սենեկացեալ (Սեր գորէնայի հազ-  
րէքի Շէհրիեարի) — ՀԱՃԻ ԱԼԻ ՓԱՇԱ:

Երկրորդ սենեկացեալ — ՆՈՒՐԻ ՓԱՇԱ:

Առաջին քարտուղար (Մալէյնի Հիւմայուն  
պաշտեալի) — ՀԱՍԱՆ ՓԱՇԱ:

Մեծ արարողացեալ եւ կայս. քարգման (Թե-  
րիձար ումու միյէ նազրը վէ Տիվանը Հիւ-  
մայուն քերնիմանը) — ԻՊՐԱՀԻՄ ՓԱՇԱ:

Առաջին քիկնապան (Տամաս վէ Սեր եավեր  
Հազրէքի Շէհրիեարի) — ՄԷՀՄԻՏ ՓԱՇԱ:

Բ. քիկնապան (Մայէքի Շահանէ երեանը  
հարպիյէ միւսի) — ՇԱՔԻՐ ՓԱՇԱ:

Առաջին Աղօթասաց (Իմանը էվվէ Հազրէքի  
Շէհրիեարի) — ԲԱՇԻՏ ԷՃԷՆՏԻ:

Նախարար Կայսերական գանձոն (Խազնի  
Խասսաի Շահանէ նազրը) — ՍԱԸԳՁ ՅՈՂ-  
ՀԱՆՆԷՍ ԷՃԷՆՏԻ:

Մասակարար Կայսերական ընտանեաց (Հա-  
րէմի Հիւմայուն մէարիձար նազրը եւլն.)  
— ՀԱՃԻ ԱՔԻՑ ՓԱՇԱ:

Հրահանատար պալատականաց եւ նուազա-  
ձուաց պալատան (Խասէմէի Խասսա վէ  
Միզիբայի Հիւմայուն Քերիբի) — ՍԻՒ-  
ԼԷՏՄԱՆ ՓԱՇԱ:

Ախոռացեալ Արժունի (Սթապըր ամիւրէ միւսի-  
րի) — ՏԱՅԻԳ ՓԱՇԱ:

ՆԱԽԱՐԱՐՔ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԻՐԱՆ

Մեծ եպարհոս (Սասրազան) — ՃԷՐԻՏ ՓԱՇԱ:  
Կրօնացեալ (Շէյխ-իւլ-Խոլան) — ՃԷՄԱԼԷՏ-  
ՏԻՆ ԷՃԷՆՏԻ:

Նախարար Արդարութեան եւ Կրօնից (Ասիյէ  
վէ Մէզանիպ նազրը) — ԱՊՏԻՒՂԱՆ  
ՓԱՇԱ:

Սպարացեալ (Սերասեր) — ԲԻՋԱ ՓԱՇԱ:  
Նախարար Ծովային գործոց (Պահրիյէ նազր-  
րը) — ՃԷՄԱԼ ՓԱՇԱ:

Նախագահ Պետական Խորհրդոյ (Շուրայի  
Տէօլլէք ըրիսի) — ՍԱՅԻՏ ՓԱՇԱ:

Նախարար Արտաքին գործոց (Խարիբիյէ նա-  
զրը) — ՓԷՎԷՏԻՑ ՓԱՇԱ:  
Նախարար Ներքին գործոց (Տախիլիյէ նազր-  
րը) — ՄԷՄՏՈՒՀ ՓԱՇԱ:

Վերանստույ Թնդանօրանի (Թօփհանէ մի-  
չիրի) — **ՋԷՔԻ ՓԱՇԱ:**

Նախարար Կրօնապատկան կայուածոց (Էվգա-  
ճը Հիւմայուն նազրր) — **ԹԻՐԻԿԱՆ ՓԱՇԱ:**

Նախարար Հանքային կրօնութան (Մէարիճ  
նազրր) — **ՀԱՇԻՄ ՓԱՇԱ:**

Նախարար Առեւտրական եւ Հանքօգուտ շի-  
նութանց (Թիհարէթ վէ Նաճա'ա նազր-  
ր) — **ՋԻՀՆԻ ՓԱՇԱ:**

Նախարար Ելեմսական գործոց (Մալիյէ նա-  
զրր) — **ԲԷՀԱՏ ՓԱՇԱ:**

Խորհրդական Եպարհոսութան (Միսրէտար  
Սասր Ալի) — **ԹԷՎՁԻԳ ՓԱՇԱ:**

—

**ՄԵԾ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՔ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ**

Քաղաքապետ Մայրաքաղաքիս (Շէհիր Էմիրի)  
— **ԲԷՏՎԱՆ ՓԱՇԱ:**

Նախարար Ոստիկանութան (Զապրիյէ նա-  
զրր) — **ՇԷՁԻԳ ՓԱՇԱ:**

Վերանստույ նաւահանգսի (Լիման ռէիսի)  
— **ՍԱՄԻ ՓԱՇԱ:**

Վերանստույ Մահաանց (Րուսումաթ Էմի-  
րի) — **ՀԱՍՍԱՆ ՁԷՀՄԻ ՓԱՇԱ:**

Վերանստույ Կայուածական տմարաց (Տէճ-  
թերի Խազանի նազրր) — **ՋԻՅԱ ՓԱՇԱ:**

Վերանստույ Թղթասարութան եւ Հեռագրու-  
թան (Բօսթա վէ Թէլէկրաճ նազրր) —  
**ՀԻՒՍԷՑԻՆ ՀԱՍԻՊ ՊԷՑ:**

Վերանստույ Անտառաց, Հանքաց եւ Երկրա-  
գործութան (Օրման վէ Մասէն վէ Զրաաթ  
նազրր) — **ՍԷՂԻՄ ՄԷԼԶԱՍԷ ՓԱՇԱ:**

Ոստիկանապետ Պէճիքաճի (Պէճիքաճ մու-  
հաճըրր վէ Փօլիս միսիրի) — **ՎԱՍԷՁ  
ՓԱՇԱ:**

Ոստիկանապետ Կ. Պոլսոյ (Սամպօլ Փօլիս  
միսիրի) — **ՄԱԶՀԱՐ ՊԷՑ:**

Կառավարիչ Բերայի (Պէյոլլու միսրէտարճը)  
— **ՀԱՄՏԻ ՊԷՑ:**

Կառավարիչ Իսկիսարու (Իսկիսար մի-  
սրէտարճը) — **ՀԱՄՏԻ ՊԷՑ:**

Հրամանատար Զրհանկրաց (Իքճայիէ ալայր  
գօմանանը) — **ՋԻԶԷՆՆԻ ՓԱՇԱ:**



# ՕՍՄ. ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

## 1. ԵՐԿԻՐՆԵՐ

	Քլմ.	Բճ.
Եւրոպական մաս.	169,300	6,130,200
Պուլկարիա և } Արև. Բուսէլի }	96,345	3,744,283
Թասուս	393	12,140
Կրետէ	8,618	310,362
Սամոս	468	54,830
Ասիական մաս	1,766,800	16,898,700
Ամերիկեան »	2,027,700	10,821,045
<b>Համագումար</b>	<b>4,069,624</b>	<b>37,971,560</b>

## 2. ՎԻԼԱՅԷԹՆԵՐ

	Բճ.	Քլմ.	Կուսակալք
Այտըն	1,396,000	55,900	Քեամիլ փաշա
Ատանա	425,000	39,900	Պահրի փաշա
Գասթեմուշի	961,000	50,700	Էնէս փաշա
Գօնեա	1,069,000	102,100	Ֆայիբ պէյ
Գոսովա	1,038,000	32,900	Շաքիր փաշա
Եանեա	527,000	17,900	Օսման փաշա
Եմէն	750,000	191,100	Թէվֆիբ պէյ

	Բճ.	Քլմ.	Կուսակալք
Էնգարէ	932,000	70,900	ձէվատ պէյ
Էտիրնէ	1,028,000	38,400	Արիֆ փաշա
Էրզրում	645,700	49,700	Նազըմ պէյ
Թրպլ. Ղպ.	1,261,000	1,033,400	Նազըմ փաշա
Թրսպիզոն	948,000	32,400	Րէշատ պէյ
Խիւսովէն.	1,636,000	65,800	Րէշիտ փաշա
Հալէպ	995,000	86,600	Քեազիմ պէյ
Հիճազ	300,000	250,000	Րամիպ փշ.
ձէգ. Պահրը			
Սէֆիտ	323,200	6,900	Ապէտտ. փշ.
Մ. իւլ-Ազիզ	575,200	32,900	Հասան պէյ
Մանասթըր	338,000	28,500	Նազըմ պէյ
Մուսուլ	351,200	91,000	Նուրի փաշա
Շգօտրա	294,000	10,800	Հայտար փշ.
Պաղտատ	614,000	141,000	Ապտ. Վ.ճ. փշ.
Պասրա	433,000	138,000	Մուխլիս փշ.
Պէյրուժ	533,000	16,000	Խալիլ փաշա
Պիժլիզ	398,000	27,100	Ֆէրիտ պէյ
Սելանիկ	1,130,000	35,000	Րէուֆ փաշա
Սթամպուլ	1,300,000	3,900	
Սըվազ	1,057,000	62,100	Արիֆ պէյ
Սուրիա	719,500	65,900	Նազըմ փաշա
Վան	379,800	39,300	Թահիր փշ.
Տիարպէքիբ	471,500	37,500	Նազըմ փաշա



3. ԱՆՁԱՏ ՍԱՆՃԱԳՆԵՐ

Գալայի Սուրբ Բն.	Քլմ.	Կուսակալի
Թանիէ 129,000	6,600	Հըֆզի փաշա
Դուստը Շրֆ. 341,000	17,800	Րէշիտ պէյ
Զօր 100,000	78,800	Րէշիտ փաշա
Իզմիտ 229,000	8,100	Բեագիւմ պէյ
Ճէպէլ Լպն. 200,000	3,100	Մուզաֆ. փշ.
Զաթալճա 60,000	1,900	Ճէվատ պէյ
Պէնկազի 1,261,000	1,033,400	Թահիր փաշա
Սաճու 54,840	468	Եանքօ Վ. էֆ.

4. ԵՐԿԱՅՈՒՂԻՆԵՐ

Ա. Եւրոպայի մէջ 1994 Քլմ.

1. Կ. Պօլիս-Բարիզ 3,045 Քլմ. 65 ժամէն  
(2 ժամ դադար)

Կ. Պոլիսի կայարանէն

	Քլմ.
Եէտի Գուլէ	8
Մաքրի բէօյ	13
Ս. Սթէֆանօ	18
Բիւչիւք չէքմէճէ	22
Զաթալճա	72
Զէրբէս բէօյ	130

	Քլմ.
Զօրլու	155
Լիւլէ Պուրկազ	214
Ուզուն Քէօրբիւ	272
Դուլէլի Պուրկազ	283
Էտիրնէ	319
Հարլմ բէօյ	337
Մուսթաֆա փաշա	356
Հէպէպչէվօ	357
Հարմանլլ	383
Յիլիպէ	499
Սօֆիա	654
Նիշ	815
Պելկրատ	1059
Պուտարէշօ	1418
Վիէննա	1696
Միւնիխ	2024
ՇՅուՍկարտ	2366
ՍՅրազպուրկ	2542
Բարիզ	3045
2. Տէտէ աղան-Տիմքօքա	99 Քլմ.
3. Սելանիկ-Սկիւպ-Մէքրովիցա	327 »
մասնաճիղ Սկիւպ-Զիպէֆճէ	86 »
4. Սելանիկ-Տէտէ աղան	444 »
5. Սելանիկ-Մանասքրր	219 »

Բ. Ասիոյ մէջ

1. Հայտար փաշա-Իզմիտ-Էնկիւրի 578 քմ.

Հայտար փաշայի կայարանէն

	Քլմ.
Ֆէնէր եօլու	5
Էրէնքէօյ	7
Պօսթանօրք	10
Մալթէփէ	15
Գարթալ	21
Փէնտիգ	25
Թուզլա	35
Կէպզէ	45
Տիլ Իսկէլէսի	56
Թափշանօրք	60
Հէրէքէ	64
Եարլմա	74
Թիւթիւն Չիֆլիկ	81
Տէրինճէ	84
Իզմիտ	92
Պէօյիւք Տիրպէնտ	111
Սապանճա	125
Համիտիյէ	142

(Ատարագարի մասնածիւղը ասկէ կ'սկսի)

	Քլմ.
Մէքէճէ	183
Լէֆքէ	197
Պիլէճիկ	233
Գարաքէօյ	250
Ինէօնիւ	281
Ջուքուր Հիսար	296
Էսկիշէնիլ	315
Ալբիքէօյ	354
Պէյլիք ախր	376
Սարը քէօյ	407
Պիչէր	434
Սազլար	454
Պէյլիկ քէօրիւ	468
Բօլատլը	488
Մալի քէօյ	523
Սինճան քէօյ	553
Էնկիւրիւ	578

2. Էսկիշէնիլը-Գոնեսա 435 քմ.

	Քլմ.
Ալայունտ	382
Քէօթահեսա մասնագիծոյ	393

	Քլմ.
Զէքիւրլէր	402
Ինսանիյէ	443
Աֆիոն Գարահիսար	477
Պէօյի բ Զօպանլար	496
Ազշէհիր	575
Մէրտան	700
Բունար պաշի	727
Գօնեա	750
Էրէյլի	950

3. Իզմիր-Մանիսա-Աֆիոն Գարահիսար  
420 քլմ.:

Կայարաններ. Իզմիր, Մանիսա, Գասպա,  
Սարտիկէ, Ալաշէհիր, Թոզճազ և Աֆիոն Գարա-  
հիսար:

Մանիսա-Սօմա 92 քլմ.

» Իզմիր-Պուրնօվա 77½ քլմ.:

4. Իզմիր-Սօմա 158 քլմ.:

Կայարաններ. Իզմիր, Մանիսա, Ազհիսար,  
Սօմա:

5. Իզմիր-Զեվրիլ 512 քլմ. ունի Թիրեի  
ճիւղ 47 քլմ և Էօտեմիշ ճիւղը 25 քլմ.:

6. Մուտանիա-Պրուսա 42 քլմ.:

Կայարաններ. Մուտանիա, Եօրիէլի, Գօրու,  
Աճէմլէր, Եէհուտիլէր, Պրուսա:

7. Մերսին-Ատանա 69 քլմ.:

8. Եաֆա-Երուսաղէմ 100 քլմ.:

9. Պերուք-Շամ-Պապլպէք 405 քլմ.:

10. Շամ-Մէքքէ կամ Համիտիյէ-Հիճազ,  
Ամրոզը գիծը 1800 քլմ. Մինչև Մաան 497  
քլմ. արդէն բացուած:

Լ. ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա.

ԾԱՅՐԱԳՈՅՆ, ՊԱՏՐԻԱՐԻՔ

Ե Ի

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ծնեալ ի Վան 4 Ապրիլ 1820. Ձեռնադրեալ  
Եպիսկոպոս 18 Հոկտեմբեր 1868. ընտրեալ Կա-  
թողիկոս 5 Մայիս 1892. օծեալ 26 Սեպտեմբեր  
1893.

Տ. Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ

Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԻՔ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Ծնեալ Եգիպտոս 1819. Ձեռնադրեալ Եպիս-  
կոպոս 2 Յունիս 1860. Պատրիարք 15 Նոյեմբեր  
1885.

Տ. Տ. ՄԱՂԱՔԻԱ

Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԻՔ Կ. ՊՈԼՍՈՅ

Ծնեալ Կ. Պոլիս 1841 Փետրուար 11. Ձեռ-  
նադրեալ Եպիսկոպոս 1886 Յունիս 8. Պատրիարք  
1896 Նոյեմբեր 6.

Տ. Տ. ՍԱՀԱԿ Բ.

Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵԱՊԱՆՆԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈՅ

Ծնեալ Եղեգի (Խարբերդ) 1849. Ձեռնա-  
դրեալ Եպիսկոպոս 1885. ընտրեալ Կաթողիկոս  
1902 Հոկտեմբեր 12. Օծեալ 1903 Ապրիլ 20.

ՀԱՅՈՑ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Գրիգորիս Արքեպ	Յովհաննեսեան Ա.	Ատնայտ
Վահրամ »	Մանկունի Բ.	Ատենապետ
Գարրիէլ Եպիսկ.	Ճեվահիրճեան	
Գեորգ »	Իւրիճեան	
Եղիշէ »	Գուրեան	Ատենաղպիր
Կարապետ Ա. Գ.	Սեքեան	
Կարապետ Բհնյ.	Սանտալճեան	
Յովհաննէս »	Շահպազեան	

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Տիգրան Էֆէնտի	Եուսուֆեան	Ատենապետ
Զարեհ »	Տիլպեր	
Գարրիէլ »	Նորատունկեան	
Գրիգոր »	Գարակէօզեան	
Գրիգոր »	Խրտրբեան	
Սենեքերիմ »	Մանուկեան	
Միրան »	Սեքեան	Ատենապետ
Կարապետ »	Գափամաճեան	
Մկրտիչ »	Ասասեան	
Սեպուհ »	Տեմիրճիպաշեան	
Տիգրան »	Տեր-Ներսէսեան	

2. ՀԱՅ ՀՈՌՎՍԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Տ. ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԲ.  
ՍԱՊՊԱՂԵԱՆ

Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Ո Ս - Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք

Ծնեալ 1836, ընտրեալ 22 Յուլիս 1904.



ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Կ. ՊԱՏՐԻԱՐԳ, Գահերէց

Ա Ն Դ Ա Մ Ք

Սահակ	Թգգ. Ծ. Վ.	Ճիգմեճեան
Նիկողայոս	Թգգ. »	Պագշեան
Հ. Եղիշէ	Թգգ. Ծ. Վ.	Գաֆրանեան
Պօղոս	Կերպծ.	Գազրիկեան
Գեորգ	»	Թերգիպաշեան
Յովսէփ	Ծ. Վ.	Արիկեան
Յովսէփ	»	Ռոքոսեան
Հ. Գրիգորիս	»	Գալեմքեարեան
Հ. Եղիա	»	Քիլճեան
Լեւոն	»	Քէրէճեան
Հ. Սամուէլ	»	Գանթարեան
Ներսէս	»	Աճէմեան Ատենաղպիր

ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Կ. ՊԱՏՐԻԱՐԳ, Գահերէց

Ա Ն Գ Ա Մ Ի

Պօղոս	Գեր.	Գագրիկեան
Հ. Եղիա	Ծ. Վ.	Քիւճեան
Միշէլ	ԷՖ.	Մըսրըր
Անտոն	»	Քեօսէեան
Յովհաննէս	»	Գարտեաշեան
Գրիգոր	»	Սինապեան
Անտոն	»	Ազնաւոր
Միհրան	»	Երազեան
Վիչէն	»	Հէքիմեան
Յովհան	»	Փիլիպպոսեան
Մկրտիչ	»	Էնքտերճեան
Վիչէն	»	Գասապեան (Դեղավանա)
Ներսէս	Ծ. Վ.	Աճեմեան Առնաղայիր



3. ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ա.ԶԳԱ.ՊԵՏԻ

ՍՏԵՓԱՆ ՍԵՐՈՎԲԵԱՆ 1850—1865

ՂԱԶԱՐՈՍ ՊՕՂՈՍԵԱՆ 1865—1868

ՅԱԿՈԲ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ 1868—1888

Ա. ՅԱԿՈԲ ԷՖ. ՊՕՅԱՃԵԱՆ

ընտրեալ 1889

ԱԶԳԱՊԵՏ ԸՆԴՀ. ԲՈՂՈՔԱԿԱՆԱՅ ԹՈՒՐԿԻՈՅ

Դիւան

Կարապետ ԷՖ. Սննքերիմեան

*Բարսուղար քղրակցութեանց*

*և զործակատար*

Գարրիէլ ԷՖ. Մինասեան

*Բարսուղար արձակագրութեանց*

Առաքել ԷՖ. Կեօղիպէօյիքեան

*Գործակատար*



ԱԶԳԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՁԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ներկայացուցիչ *Կիլիկիոյ Եկեղեցեաց*  
Վեր. Յ. Գ. Գրիգորեան  
Կ. էֆ. Սենեքերիմեան

Ներկայացուցիչ *Բիւրանիոյ Եկեղեցեաց*  
Բրօֆ. Յակոբոս ձեճիզեան  
Յովհ էֆ. Մինասեան

Ներկայացուցիչ *Խարբուրդի Եկեղեցեաց*  
Արշակ էֆ. Շմաւոնեան  
Գեորգ էֆ. Խարբուրդեան

Ներկայացուցիչ *Կեդր. Թուրքիոյ Եկեղեցեաց*  
Յարութիւն էֆ Կոստիկեան  
Պետրոս էֆ. Տօնճեան

Ներկ. *Մայրաքաղաքի ժողովրդեան*  
Յովհաննէս էֆ. Թէֆեան  
Մինրան էֆ. Յովհաննէսեան


ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԺՈՂՈՎՆԵՐ

Նահանգային ժողով *Բիւրանիոյ*  
Վեր. Յովսէփ ձեճիզեան, Նախագահ  
Վեր. Արսէն Շմաւոնեան Բարտուղար

Կեդրոնական Թուրքիոյ Եկեղեցեաց ժողով  
Վեր Յակոբ Պիւլպիլեան, Նախագահ  
Վեր. Մինրան Գազանճեան, Բարտուղար

Կիլիկիոյ Եկեղեցեաց ժողով  
Վեր. Նազարէք Հեղեան, Նախագահ  
Արքանամ էֆ. Պերպլերեան, Բարտուղար

Խարբուրդի Եկեղեցեաց ժողով  
Պատ. Կիրակոս Խաչատուրեան  
» Արմենակ Սիմոնեան



4. ՅՈՅՆ ԵԿԵՂԵՑԻ

Յ. ՅՈՎԱԿԻՄ Գ., Արք. և Տիեզերական  
Պատրիարք Յունաց. ունի 72 վիճակներ:

Յ. ԳՕՏԻՆՈՍ, Պատրիարք Յունաց Աղէք-  
սանդրեայի. ունի 3 վիճակներ:

Յ. ՄԷԼԷՏԻՈՍ, Պատրիարք Յունաց Ան-  
տիոքի. ունի 15 վիճակներ:

Յ. ԳԱՄԻԱՆՈՍ, Պատրիարք Յունաց Երու-  
սաղէմի. ունի 12 վիճակներ:

5. ՊՈՒԼԿԱՐ ԵԿԵՂԵՑԻ

Յ. ՅՈՎՍԷՓ, Էկզարք. Պուլկարաց. Աթոռ  
Պոլիս. ունի 20 վիճակներ:

6. ԱՍՈՐԻ ԵԿԵՂԵՑԻ

Յ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱՐԳՂՄՍԵԶ, Պատրիարք  
Ասորաց Անտիոքի. Աթոռ Տէյր էլ Չաֆրան.  
ունի 16 վիճակներ:

7. ՔԱՂԴԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Յ. ՄԱՐ ԵՒՄՈՒՆ, Պատրիարք Նեստորա-  
կանաց. Աթոռ Շէմտինանի մէջ. ունի 2 վիճակ:

8. ՂՊՏԻ ԵԿԵՂԵՑԻ

Յ. ԱՄՊԱ ԿԻՒՐՂՈՍ, Պատրիարք Ղպտինե-

րու Աղէքսանդրիոյ. Աթոռ Գահիրէ. վիճակ  
Եցիպտոս և Եթովպիա:

9. ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՄԱՐՈՆԻ ԵԿԵՂԵՑԻ

Յ. ԵՂԻԱ ՊԵՏՐՈՍ ՀՈՅԷՔ, Պատրիարք.  
Աթոռ Լիբանանի մէջ. վիճակ 8:

10. ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՄԷԼՔԻԹ ԵԿԵՂԵՑԻ

Յ. ԿԻՒՐՅՂ ՃԷՀԱ, Պատրիարք. Աթոռ Շամ.  
վիճակ 12:

11. ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԱՍՈՐԻ ԵԿԵՂԵՑԻ

Յ. ԵՓՐԵՄ ԸԱՀՄԱՆԻ, Պատրիարք. Աթոռ  
Մէրաին, վիճակ 9:

12. ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՔԱՂԴԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Յ. ՅՈՎՍԷՓ ԷՄՄԱՆՈՒԷԼ ԹՈՎՄԱՍ,  
Պատրիարք. Աթոռ Մուսուլ. վիճակ 11:

13. ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՂՊՏԻ ԵԿԵՂԵՑԻ

Յ. ԿԻՒՐՂՈՍ ՄԱԿԱՐ, Պատրիարք. Աթոռ  
Գահիրէ. վիճակ 2:

ՀՐԵԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄՕՋԷ ԼԷՎԻ, Բարունապետի տեղակալ,  
Աթոռ Պոլիս.



# ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐ

## Հ Ա Յ Ո Ց

- ԷՅԻՐՆԷ. Տ. Արսէն Ա. Գճոյ. Դերձակեան:
- ՌՈՏՈՍԹՈՅ. Տ. Վահրիճ Ծ. Վ. Շահլամեան:
- ԻԶՄԻՏ. Տ. Ստեփանոս Արք. Յովակիմեան:
- ԱՐՄԱՇ. Վանահայրական Փոխանորդ Թոր-  
գոմ Ծ. Վրդ. Գուշակեան:
- ՊՐՈՒՍԱ. Տ. Յովհաննէս Եպս Արշարունի:
- ՊԱԼԸՔԷՍԷՐ } Տ. Թամուշ Ծ. Վրդ. Դուրեան:
- ՊԱՆՏՐՄԱ }
- ՊԻԼԷՃԻԿ
- ՔԷՑԹԱՀԵԱ } Տ. Կարապետ Վրդ.
- ԱՅ.-ԳԱՐԱՀԻՍԱՐ } Մազլըմեան:
- ԻԶՄԻՐ. Տ. Եղիշէ Եպս. Դուրեան:
- ԷՆԿԻՐԻՒ. Տ. Եղիշէ Ծ. Վ. Գալֆոսեան:
- ԿԵՍԱՐԻԱ. Տ. Տրդատ Եպս. Պալեան:
- ԳԱՍԹԷՄՈՒՆԻ. Տ. Դրիգորիս Վ. Պա-  
լաբեան:
- ԳՕՆԵԱ. Տ. Յովհաննէս Քհ. Դուլումեան:
- ՍԸՎԱԶ } Տ. Պետրոս Արք. Թահմիզեան:
- ԹՈԳԱԹ }
- ԱՄԱՍԻԱ } Տ. Սահակ Վրդ. Ստապաշեան
- ՍԱՐՁՈՒԱՆ } Պատր. պատուիրակ:

- ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. Տ. Սմբատ Ծ. Վ.
- ՍաատէՊեան:
- ՃԱՆԻԿ. Տ. Յակոբ Եպս. Ա. Փափագեան:
- ՏՐԱՊԻՋՈՆ. Տ. Ներսէս Եպ. Ասլանեան:
- ԷՐԶՐՈՒՄ. Տ. Զաւէն Ծ. Վ. Տէր-Եղիսեան:
- ԴԵՐՁԱՆ. Տ. Համազասպ Վ. Վարդանեան:
- ՐԱՍԷՆ.
- ՔՂԻ. Տ. Երուանդ Վ. Փէրտահճեան:
- ՊԱՅՊՈՒՐԴ. Տ. Դէորդ Վ. Իրբանոսեան:
- ԷՐԶՆԵԿԵԱՆ } Տ. Արտաւազդ Վ. Գալէն-
- ՔԷՄԱՀ } տէրեան:
- ՊԱՅԱԶԻՏ. Տ. Էմմանուէլ Վ. Պալեան:
- ՎԱՆ. Տ. Մեսրոպ Քհ. Ճանիկեան:
- ԼԻՄ } Տ. Ստեփան Վ. Աղազատեան:
- ԿՏՈՒՑ }
- ՀԷՔԵԱՐԻ, Տ. Ներսէս Քհ. Տ. Գալուստեան:
- ՊԻԹՂԻԶ. Տ. Եզնիկ Ծ. Վ. Գալփարճեան:
- ՍՂԵՐԻ. Տ. Կորիւն Վրդ. Սրապեան:
- ՄՈՒՇ Տ. Կորիւն Վրդ. Էլիսիրէմեան:
- ՏԻԱՐՊԷՔԻՐ. Տ. Եզեկիէլ Ծ. Վ. Արշակունի:
- ՐԱԼՈՒ. Տ. Յովհաննէս Վ. Յակոբեան:
- ԱՐՂՆԻ-ԶՆՔՈՒՇ, Տ. Յակոբ Վրդ. Յով-  
սէփեան:
- ԽԱՐԵՆԴ. Տ. Խոսրով Ծ. Վ. Պէհէրիկեան:
- ԷԿԻՆ. Տ. Կորիւն Վ. Եսայեան:

ԱՐԱՐԳԻՐ. Տ. Մերուժան Ծ. Վրդ. Աշխա-  
րունի:

ՋԱՐՍԱՆՃԱԳ

ՋՄՇԿԱԾԱԳ

ՈՒՐՑԱ. Տ. Անանիա Վ. Հազարապետեան:

ՊԱՂՏԱՅ. Տ. Սերովբէ Վ. Սամուէլեան:

ԵԳԻՊՏՈՍ. Տ. Մկրտիչ Ծ. Վ. Ալլաւնունի:

ՊՈՒԼՎԱՐԻԱ

ՌՈՒՄԱՆԻԱ

ՐԵԹԼԵՉԷՄ. Տ. Մովսէս Վ. Ոսկերիչեան:

ՌԱՄԼԷ. Տ. Բարձուկիմէոս Վ. Գրիգորեան:

ԴԱՄԱՍԿՈՍ. Տ. Վահան Վ. Քէշիշեան:

ՅՈՊՊԷ

ՊԷՅՐՈՒԹ. Տ. Սմբատ Վ. Գազազեան:

ԿԻՊՐՈՍ. Տ. Պետրոս Վ. Սարածեան:

ԼԱԹԱՔԻԱ. Տ. Թադէոս Վ. Եկաւեան:

ԱՏԱՆԱ. Տ. Մուշեղ Ծ. Վ. Սերովբեան:

ՀԱՃԸՆ. Տ. Վահան Քհ. Մանուկեան:

ՀԱԼԷՊ

ԻՍԿԷՆՏԷՐՈՒՆ } Տ. Կարապետ Ծ. Վ. Տէր  
ԱՅՆԹԱՊ } Կարապետեան:

ԱՆԹԱՔԻԱ. Տ. Թադէոս Վ. Եկաւեան:

ՄԱՐԱՇ. Տ. Փառէն Վ. Մելլրոնեան:

ՋԷՅԹՈՒՆ. Տ. Ներսէս Վրդ. Խապանեան:

ՄԱԼԱԹԻԱ. Տ. Գէորգ Վ. Ալլանեան:

ԵՕՁԿԱՏ. Տ. Խորէն Ծ. Վ. Դիմաքսեան:  
ԿԻՒՐԻՆ

ՄԱՆՃԸԼԸՔ

ՏԵՎԵՐԿ. Տ. Գրիգոր Քհ. Զարդարեան:

ՏԱՐԷՆՏԷ. Տ. Ղևոնդ Ա. Քհ. Մուրատեան:

ԱՂԹԱՄԱՐ. Տ. Ներսէս Եպս. Խոստեղեան:

ԽԵՁԱՆ. Տ. Պետրոս Վ. Գրիգորեան:

ԵՐԵՒԱՆ. Տ. Կարապետ Վ. Մկրտիչեան:

ՀԻՆ ՆԱԽԵՁՅԻԱՆ. Տ. Իսահակ Վ. Տէր

Մինանեան:

ԱՂԷՔՍԱՆԳՐՕՐՕԼ.

ԿԱՐՍ. Տ. Կիւրեղ Վ. Կիւրեղեան:

ՏԱԹԵԻ. Տ. Ներսէս Վ. Մելիքճանքեան:

ՏՓՂԻՍ. Տ. Գարեգին Եպս. Սամուէլեան:

ԳՕՐԻ.

ԱԽԼՅԵԱ.

ԳԱՆՋԱԿ. Տ. Կորիւն Վրդ. Սահակեան:

ՇՈՒՇԻ. Տ. Աշոտ Վրդ. Շախեան:

ՆՈՒԽԻ. Տ. Սիոն Վ. Տ. Մանուէլեան:

ՇԱՄԱԽԻ. Տ. Անանիա Եպ. Համազասպեան:

ՊԱԳՈՒ. Տ. Ընձակ Վ. Եազրճեան:

ԱՍՏՐԱԽԱՆ. Տ. Արիստակէս Արքեպ. Սեղ-

րաքեան:

ՂՁԼԱՐ.

ՊԵՍԱՐԱՊԻԱ. Տ. Ներսէս Կրքեպ Խիւտա-  
վէրտեան:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ.

ԲՆԴՐՍՊՈՒՐԿ. Տ. Գէորգ Ա. Բհ. Խան-  
Սարճեան:

ՄՕՍԿՈՒԱ. Տ. Յարութիւն Ա. Բհ. Պօպովեան:

ՍՊԱՀԱՆ. Տ. Սահակ Կրքեպ. Այվազեան:

ԹԷՀՐԱՆ. Տ. Բագարատ Վ. Վարդազարեան:

ԿԱԼԿԱԹԱ. Տ. Վարդան Բհ.:

ՄԱՏՐԱՍ. Տ. Մաշտոց Բհ. Խարաէլեան:

ՊՈՄՊԱ. Տ. Մարգար Բհ. Դաւթեան:

ՊԱԹԱՎԻԱ. Տ. Անդրէաս Բհ. Արգարեան:

ՌԱՆԿՈՒՆ. Տ. Համբարձում Բհ.

ՍԻՆԿԱՐՈՒՐ.

ԱՊՐՊԱՏԱԿԱՆ. Տ. Մես. Վ. Մաքսուտեան

ՍԱԼՄԱՍ. Տ. Մաշտոց Վ. Փափազեան:

ՀԱՄԱՏԱՆ. Տ. Խորէն Վ. Տ. Վարդանեան:

ՅԱՐԻՋ. Տ. Վռամշապուհ Բհ. Քիպարեան:

ՄԱՐՍԻԼԻԱ. Տ. Յովհ. Բհ. Մանդակունի:

ՄԱՆՁԷՍԹ. Տ. Գէորգ Եպիս. Իւթիճեան:

ՍՈՒՉՕՎԱ. Տ. Արսէն Վ. Վեհունի:

ՌԻՍՔԸՐ. Տ. Յովսէփ Եպս. Սարաճեան:

ՆԻՒԵՕՐԲ. Տ. Ղեւոնդ Վ. Մարգուկէսեան:

ՊՕՍԹԸՆ

ԲՐՕՎԻՏԷՆՍ.

ՁԻՔԱԿՕ. Տ. Վահրամ Բհ. Մարլեան:

ՅՐԷՋՆՕ. Տ. Ահարոն Վ. Սահրոյեան:

ԼՕՐԷՆՍ.

Ըստ մասնաւոր խնդրանքի Կր զնենք այս  
ցուցակ Օրացոյցիս մէջ:



Ծանօթութիւնք և վիճակագրական տեղե-  
կութիւնք փակուած են՝ 1 Օգոստոս 1905:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑԻ

Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

1906

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ





## Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

### Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Ո՞րն է այն մտանքն, որ առաւել  
մարդոց սրտին հետ կը խօսի քան  
թէ մտաց. ո՞վ է այն մտանքն ու  
բազազիր դպիր. որուն լեզուէն ու  
չրթունքներէն շնորհ եւ սէր կը  
բզկի. իր խօսքեր բոլոր աշխարհ կը  
զրուէ. եւ մարդոց հոգին վարելով  
ի գերագոյն սէր՝ երկրէս երկինք կը  
հանէ. ի՞նչ է այն մեղմախօս բար-  
բառ, որ Հրէաստանի խորէն փեղե-  
րաց չորս կողմ հասաւ. ի՞նչ զօրաւոր  
լեզու էր այն, որ ընտրեալ յիմարնե-  
րուն բերնով աշխարհիս իմաստնոց  
միտքեր յազթահարեց ու նուաճեց :  
Աւետարանն է այս յախտենական  
կենաց բան. զոր Յիսուս քարոզեց.  
կտակ թողուց աշխարհի ու գնաց.  
Սուրբ Հոգին յիջեցուց. Աւետարա-  
նիչներն գրեցին :

Աւետարան Յիսուսի շունջն է . ուրով չէ թէ միայն Բարեւոյնի դաշտին մէջ ցրուած հրէական ազգին չորցած ոսկորներ կենդանացոյց այլ համատարած աշխարհիս երես սփռուած կենդանւոյն մեռած ընդհանուր մարդկութեան հոգիներն ի նոր կեանս վերանորոգեց :

Ինչ որ Աւետարան գործեց , կարող չեղան գործել իմաստասիրաց գիւտք : Աւետարանին փառք բարձրացաւ տիրեց աշխարհիս վրայ քանի մը տկար ձկնորսներու ձեռքով . Աւետարանին փառաւոր դահ Բեթլեհէմի մտուր եւ աղքատներու խրճիթներ եղան :

Չկայ բնաւ գիրք մի կամ մարդկային հանճար եւ իմաստութիւն , որ կարողանայ մարդոց ստահակ հոգին ուղղել , դաստիարակել եւ բարւոյքել միշտ ի չարն արձանացած՝ ի բարին վերածել , բայց միայն Աւետարանն :

Այս փոքրիկ հրաշագիր մտտեան աշխարհ կարդաց ու հասկցաւ . այս մանրիկ մանանեխի սերմէն ծառ մը

բուսաւ , որուն ապաստանարար ճիւղերուն վրայ վաստակեալ մարդիկ թռչունի պէս նստան ու հանգիստ առին :

Յիսուս իւր Աւետարանին պատուական մարգարիտ Հրէաստանի հրապարակին մէջ ի վտճառ հանեց . աղքատն եւ հարուստն վազեցին ի գնել մարգարտին տէր ձրի կը բաշխէր , ոչինչ չէր պահանջէր . այլ միայն հաւատք , ո՛վ որ կը հաւատար , նա միայն կ'ստանար մարգարտն :

Աւետարանին մարգարիտ յիմարնեբու որտին մէջ հաւատք է , իմաստնոց մտքին մէջ անհերքելի ճշմարտութիւն , մէկն առանց քննելոյ կը հաւատայ . միւսն Տեքարթի պէս քննել ուղեւով՝ կ'աւելի եւ կ'սքանչանայ :

Աւետարանին կերակուր անմահաւոր է . կաթէն աւելի անուցիչ , մեղրէն աւելի քաղցր է . Դաւիթ ճաշակեց զայն հոգւով եւ անուշտ թեւէն զմայլելով կ'ասէր .

«Որպէսզի՛ քաղցր են ի քիմս իմ

բանք քո, քան զմեզր բերանոյ իմոյ»:

Այս ամենահամ սիրոյ ճաշակ Յիսուս բերաւ երկնքէն, Գողգոթայի Խաչի փեթակին նորաճաշակ մանանայ մի կազմեց, Աւետարանին սուրբ օրէնքներն կարմիր արիւնով գրօջեց, զոր չկարացին եղծել եւ ոչ նշանախեց մի աշխարհիս բռնաւորութեանց ձեռք: Ի՞նչ կարողացան շինել Պղատոն, Արիստոտէլ, Սոկրատ իւրեանց իմաստասիրութեան փեթակին մէջ: Յիսուս միայն շինեց կրօնի սուրբ մեղր. որով քաղցրացաւ հանուր մարդկութեան բերան. որ դառնացած էր Ադամայ ճաշակած պտղով: Աւետարան Աստուածորդոյն երեսաց արտափայլող լոյսն է. եկեղեցին մութ է, եթէ սորա լուսով չի լուսաւորի. եկեղեցին կը խոտորի, եթէ սորա լոյս չառաջնորդէ. եկեղեցին հաստատ չէ, եթէ սորա սուրբ քուրբերով չհիմնուի:

Հայ եկեղեցւոյ մեր երանելի նախնիք ո՞րչափ երկիւղածութեամբ պաշտեր են Աւետարան. յորոց ոմանք

մեկնութեանց պարապելով՝ Աւետարանին գիտութիւն ժողովրդոց ընտելացուցեր են. եթէ ապացոյց կ'ուզես՝ գնա՛ չրջիր Ասիոյ վանօրէից, քաղաքաց եւ գիւղերու մէջ, ուր կը տեսնես բիւրաւոր գրչագիր Աւետարաններ եւ նոցա մեկնութիւնք մագաղօթներու վրայ վայելուչ ծաղկենկարներով գրուած. եւ այսօր խոկ եկեղեցոյն մէջ ամէն ընթերցուածներէն առաւել Աւետարան կը պաշտուի. վասն զի ժողովրդոյ խնկելի գիրք Աւետարանն է. զոր կը համբուրէ յաճախ ամենայն ջերմեռանդութեամբ. թէ հիւանդանայ, Աւետարանին կը դիմէ. թէ զլուխ ցաւի, նորա տակ կը դնէ. թէ հաւատայ, կատարելապէս իւր ցաւեր կը փարատին. Աւետարանին հրաշալիք մեծ է. միայն մարմնոյ ախտեր չրժչկեր. այլ առաւել եւս հոգւոյն ախտեր կ'ապաքինէ:

Առէք ընդունեցէք ուրիմն, ո՛վ եկեղեցւոյ մօր հոգեծին մանկունք, Յիսուսէն աւանդեալ արքայութեան սոյն մարգարիտ, զոր իբրեւ փոքրիկ

մանեակ մի ընկելով ձեզ կը նուիրեմ :

Սողոմոնի ձայն կը յորգորէ զձեզ . որ այս մանեակ ձեր պարանոցէն կախէք , որպէս իմաստուն վաճառական ամէն բան վաճառելով , միայն Յիսուսի մարգարիտն ստացէք , որուն հետ բնաւ հաւասարութիւն չունին բոլոր աշխարհիս գանձեր :

Ի՞նչ գին կը խնդրէ հազա այս մարգարային տէր . ուրիշ ոչինչ , սիրտ միայն : Տուր ուրեմն քո սիրտ . սրգեակ . ինչպէս կը խրատէ իմաստունն եւ ահա կ'ստանաս մարգարիտն :

Կարողիկոս Հայրիկ

ՅՍՍՈՒՍ Ի ԲԵՅԵԼԱՅ ՍԱՐ

Ձահիգ ժամ հասաւ , եւ դու հասար Բեթելայ սարին գլուխ , Յիսուս , Խաչի ի գետին դիր , ո՛վ դու խաչի մշակ , արեւակէզ ճակատիգ քիրան սրբէ , աչերդ ի վեր ա՛ն . տե՛ս ահա կուգայ անառակ որդին , մարդկութեան թշուառ զաւակ , վեց հազար տարի է երկրիս վրայ կը թափառի ,

եւ այժմ խաղառ չքաւորեալ անօթի քաղցած կը վերադառնայ հայրենի տունը : զքեզ Գողգոթային գլուխը գտաւ եւ դու Երկինքէն մինչեւ Բեթլեհէմի մուտ եւ անտի մինչեւ այսր՝ զայն կ'սրտնէիր եւ ահա գտեր : Գիրկս ա՛րկ , համբուրէ՛ , զի դու Երկնից շօր գորովոյն// բազուկներն ես . զքեզ Երկինքէն մինչեւ յերկրի պարզեց որ գրկես անառակ որդին . յուսիդ վերայ բառնաս մոլորեալ ոչխարը :

Տե՛ս , Տէր կորսուած դրամն եւս ոտքիդ տակն է . ժանգոտած եղծուած բոլորովին , կը ճանչե՞ս արդեօք , ա՞յդ է՝ քո տիրական պատկերն ու կնիքը :

Տէր , դու այս անգին գիւտերուդ համար զի՞նչ գին կը վճարես , արդէն գիտես շօրդ կամք . դու նորա ի յաւիտենից պահեալ պարարակ եղն ես , նա կը հրամայէ որ անառակ որդւոյն դարձին համար զենուեն զքեզ . խընձոյից սեղան կազմուի , հրեշտակներ ու մարդիկներ առհասարակ հրաւիրուին . երկինք եւ երկիր զիրար զըրօ



կախառնեն, հաշտութեան աղեղն  
 Գողգոթայի գլխէն ձգէ դէպ երկինք,  
 եւ հասնի Աստուած պետական արթո-  
 սին առջ, խառոված Հայրն — հաշ-  
 տութի աշխարհին հետ :

Փրկութեան աւուր երբորդ ժամն  
 եհաս, տարածիր՝ Յիսուս, պարզէ  
 ամենազօր բազուկներդ քասաթեւ  
 սեղանին վերայ, թոյլ աուր, որ գե-  
 նուն զքեզ, լուս ու մունջ բերանդ  
 մի՛ բանար, դու անխօս որոշ մի ես  
 քո կտրիճներուն առջ, ճիշդ այն-  
 պէս կա՛ց ինչպէս գուշակեց Յօսային :

Զմասեալ գինի կուտան քեզ, չգի-  
 տեմ, քեզ կը կարեկցի՛ն, որպէս զի  
 թմրիս եւ սաստկագոյն ցաւ չզգաս .  
 թէ վասն այն կարրուցանեն քեզ,  
 որ անագան մեռնիս, ընդերկար ողջ  
 մնաս Սաչին վրայ, թշնամիներդ  
 վա՛շ վա՛շ կարգան քո դէմդ եւ զքեզ  
 աւելի եւս զկծեցուցանեն :

Այսպէս վարեցան ընդ քեզ կատա-  
 զի սխերիմներդ, չգիտնալով թէ դու  
 մարդոյն սիրով արբեալ՝ կամաւդ  
 անզգայեալ ես :

Սարեկայ Սաչի ծառէն կախուած,  
 ո՛վ ճշմարիտ զո՛հ, քանի՛ անուշահոտ  
 է ծուխդ որ կը ծաւալի եւ կը ծա-  
 ւանայ դէպ երկինքը, աշխարհ՝ բո-  
 վանդակ զո՛րդ փրկութեան հոտով  
 լցաւ :

Եւ ահա Քո Հայր Աստուած եր-  
 կինքէն իջեր է Գողգոթային գլուխը,  
 հրեշտակներ ու մարդիկ Սաչիդ սան-  
 զուղէն ելեւէջ կ'առնեն հաշտութեան  
 կամար կապեր է մէկ ծայրն յԱստ-  
 ուած, միւսն ի մարդիկ, երկինք ու  
 երկիրը ի հաշտութիւն կը կապէ . եւ  
 այսպէս կը լրանայ եւ կ'աւարտի,  
 Տէ՛ր, փրկաւէտ զո՛հիդ մեծահրաշ  
 խորհուրդ : Կաթողիկոս Հայրիկ

Խ Ա Զ Օ Գ Ն Ե Ա՛ Ի Ն Զ

(ՆՈՒՆԻ ՄԵՂԱՍՏԻՐ ՄԱՆԿԱՆՅԵ)

Օրորանիս մտ հոտած՝  
 Մայրբոս անոյշ երգելով  
 Ինձ շատ անգամ՝ քուն էր արած՝  
 Խաչանըշան կընքելով,  
 Աջն ու խաչը քեզ պահտպան՝  
 Անթիւ անգամ կրկնել էր,

Խաչն իւր սիրոյն միշտ ապաստան՝  
 Ամէն ժամում կանչել էր,  
 Երբոր թո՛թով լեղրւս բացաւ,  
 Խաչի դասքն աւանդեց,  
 Խաչ օգնեա՛ ինձ, կրկնիր ասաց  
 Քրթնս սիրով պատուիրեց.  
 Քանի՛ տարի էս սիրուն դասն,  
 Ես շարունակ կրկնեցի.  
 Մորք հետը ժամ՝ գընացի՝  
 Խաչելութիւն սիրեցի,  
 Ուխտասեղի թէ մատուռներ,  
 Ուր որ ես ուխտ գընացի,  
 Համրութեցի ես խաչքարեր,  
 Խաչ օգնեա՛ ինձ, կրկնեցի.  
 Երբոր փոքր ինչ ես մեծացայ,  
 Մայրքս տուաւ Քերական,  
 Խաչ օգնեա՛ ինձ, կրկնիր. ասաց,  
 Խաչն է ուսման օգնականն,  
 Խաչն օգնական ինձ կանչելով՝  
 Այրուբենէն բակրայ.  
 Ամէն դատում միշտ կրկնելով՝  
 Շուտով կարգալ սորվեցայ.  
 Քերականն աւարտեցի  
 Յետոյ մըտայ վարժարան  
 Եթ՛ր տարի ես կարգացի,  
 Ուսմունք առի զանազան.  
 Քանի՛ քանի՛ շարագրածներ,  
 Որ ես ինձէն գրեցի,  
 Դեռ չ'սկսած՝ ճակատներըն,  
 Խաչ օգնեա՛ ինձ գրովեցի.  
 Աստուածաշունչ՝ Աւետարան,

Որչափ սիրով կարդացի,  
 Այնքան Խաչին սիրոյ նըշան,  
 Սրբախ մէջը ըզգացի.  
 Զգացի որ Խաչի ճառըն  
 Մեծ ուսմունք է մարդկութեան,  
 Մեր փրկութեան գրքոյն է նա,  
 Ճշմարտութեան սուրբ նըշան.  
 Զգացի որ նախատանքով,  
 Գողգոթմայում տընկուեցաւ,  
 Քայց և յետոյ անհուն փառքով՝  
 Քրմբէթներում փայլեցաւ.  
 Զգացի որ խաչեալն Աստուած  
 Սիրոյ համար Խաչ շայկեց  
 Մարդկանց սիրով Խաչը գըրկած՝  
 Խաչ մեր աւելուլ քարոզեց.  
 Զգացի որ Խաչ կայ պատրաստ  
 Ամէն մարդու առաջին,  
 Ով կը ցածկայ լինիլ զգաստ  
 Քընալ զհետ մեր Փրկչին.  
 Զգացի որ ես էլ ունիմ՝  
 Իմ յատուկ Խաչն աշխարհքում,  
 Որ անարտունջ պիտի տանիմ՝  
 Սիրով ամէն գիպուածքում.  
 Խաչ կայ մարդուն իր կըբերեց,  
 Խաչ ամէն տեղ, ամէն ժամ,  
 Խաչ կայ կենաց աղէտներեց՝  
 Խաչ գըժուարին, ծանրատար,  
 Խաչ կայ անմիտ տըգէտներեց՝  
 Իմաստասէր հանճարին,  
 Խաչ կայ աշխարհ պաշտողներեց՝  
 Աշխարհի հետ մըրցողին.

Խաչ կայ անշարժ թող զառեբից՝  
 Յառաջագէտ՝ ճրգատողին,  
 Խաչ կայ մուր կարծիքներից՝  
 Ճրշմարտասէր գիւցաղին.  
 Խաչ կայ նենգժոռ խարդախներից՝  
 Պարզ և ուղիղ սրտերին,  
 Խաչ կայ ըստուկ օգիներից՝  
 Պարտք իրաւունք խնդրողին,  
 Զգացի որ, որ էսքան խաչերն  
 Էն Խաչի մօտ ոչինչ և,  
 Որ մարդասէր Գրթնոս Տէրըն  
 Բարձաւ իւր ուսն Տեղորէն  
 Նա է սիրոյ անհուն նշան  
 Խաչեալըն Սէր գլխովին  
 Ափոփանաց մեծ ապտտան  
 Սիրով իր Խաչ բարձողին.  
 Զգացի որ Փրկչի Խաչն էր  
 Որ օգնական ինձ կոչեց  
 Երբոր մայրս, Տեղ, որդեակեր,  
 Խաչ օգնեա՛ ինձ, դառ տուեց,  
 Քանի՛ քանի՛ նեղութիւններ  
 Որ իմ՝ Տանգէպ դուրս եկան,  
 Միաբն բերի մօրս պատուէր  
 Կոչեցի Խաչըն օգնական,  
 Քանի՛ քանի՛ Տեշտութիւններ  
 Որ ես ինձէն գրրկեցի,  
 Թափեցի յորդ արտասուքներ  
 Խաչ օգնեա՛ ինձ, գոչեցի,  
 Վիշա ու վրտանդ փարատեցան,  
 Զգացի մեծ ըսփոփանք.  
 Բուք փոթորիկ կուտակեցան,

Անցի մէջէն անկրտանդ  
 Օրհնուի քո գերեզմանը,  
 Որդեբնոմ մա՛յր գըթոտ,  
 Որ դու խաչի փրկարար դասն  
 Ուսուցիր ինձ համառօտ  
 Թէ որ անուկ թարմ հասակէս  
 Զազեկէիր ինձ Խաչին սէր,  
 Ինչպէս պիտի լինէի ես  
 Մըրրկաց մէջ անպէհեր,  
 Թէ որ Խաչի անյաղթ ոյժը  
 Ինձ յարատւամ՝ չբափփէր,  
 Ինչպէս պիտի տանէի ես՝  
 Սուտ, անիրաւ զրրկանքներ.  
 Մա՛յր իմ, դատրդ չեմ՝ մոռանալ  
 Քանի որ ես կենդան եմ,  
 Նեղութեանց մէջ չեմ թուլանալ  
 Խաչն ինձ պարծանք կանուանեմ.  
 Ուրախութեամբ ես կը տանեմ՝  
 Ամէն զրկանք, ամէն Խաչ  
 Քանի՛ սիրով ես կը տեսնեմ՝  
 Փրկչին ի Խաչ բարձրացած:  
 Մեքիսեղեկ եպօ. Մուրատեանց

Ն Ո Ր Ա Ս Տ Ե Ղ Ծ Ե Ա Լ

Արրոյն Ներսեսի Շնորհալոյ

1. Նոր ստեղծեց Բանն ոչինչէն  
 «Երկնից երկինք»ն ու այն ամէն  
 Զօրքերն աննիւթ ու երկնային

- Որ զուարթուհներն են անմարմին  
Ստեղծեց իւրթին տարրերն քառեակ  
Իրարու հաշտ ու հակառակ  
Գործ մը՝ որով կը փառաարուի  
Երրորդութիւնն անճառելի
2. Երեքբրեանն մէկ տէրութիւն  
Մէկ բնութեամբ Աստուածութիւն  
Արարչական լոյսն ինքն է նա  
Որ հրամայեց զձող լոյս ըլլայ  
Ու ծագեցաւ լոյսն ու ժգնակի  
Միաշարած օրն՝ կիրակի  
Գործ մը՝ որով կը փառաարուի  
Երրորդութիւնն անճառելի
3. Իսցատարութեամբ մը ո՛չ խրթին  
Կը թափանցենք այս խորհրդին  
Զի անտես լոյսն այն գերագոյն  
Որ կ'երեւի մարուր հողոյն՝  
Միաշարած օրուանն ի ցոյց  
Յարութեան շողը փայլեցուց,  
Ո՛վ փրկուածներ, հրեշտակին հետ  
Օ՛ն, Յարուցեալն օրհնէք յաւէտ
4. Սէք, դու սիրով խոնարհեցար  
Մեր փրկութեան օգտին համար  
Ու խաչուած նոյն մարմնով կար  
Գերեզմանին մէջ դրուեցար  
Այսօր Յարեա՛ր Աստուածօրէն  
Քարոզեցար հրեշտակներէն  
Ո՛վ փրկուածներ, հրեշտակին հետ  
Օ՛ն, Յարուցեալն օրհնէք յաւէտ
5. Պատահելով սուրբ կիներուն՝  
Կեանքի զուարթ տուր որջոյն՝

- Ու Քայլիլոյ լեռանն ի սար  
Առաքելոցդ ալ երեւցար  
Արժանացու՛ր մեզ անոնց պէս  
Վերջին օրը տեսնել զքեզ  
Ո՛վ փրկուածներ, հրեշտակին հետ  
Օ՛ն, Յարուցեալն օրհնէք յաւէտ
6. Արթնցէ՛ք, Արօնի որդեք  
Աւետեցէք Հարսին գողարիկ  
Թէ Յարութիւնն առնող Փետոյդ  
Իշխանութեամբ մասէն ազատ՝  
Կուգայ պատկել զքեզ փառքով  
Դուն զարդարուած՝ փութա՛ իր քով  
Ու նոր երգով օրհնէ՛ կրկին  
Ննջեցելոց պտուղը կեանքին

Եզիլէ Եպ. Կուրեան

Ն Ա Յ Ե Ա Յ Ս Ի Ր Ո Վ

Սրբոյն Ներսեսի Ծնորհաւոյ

1. Նայէ՛ սիրով, ո՛վ Հայր գրթաց,  
Մեղի որ քու ենք բատեղճուած,  
Հրեշտակներուն գունդն ու բանակ  
Տկարներուն զի՛ր պահպանակ  
Փորձանքէ զմեզ փրկէ վերէն  
Ու խաւարի չար դեւերէն  
Որ թէ՛ ցորեկ և թէ՛ գիշեր  
Քեզ անդադար փառք տանք, ո՛վ Տէր՝
2. Ով անսկիզբ Աստուծոյ Հօր  
Որդի և բան՝ ծնունդ համազօր

- Օրը՝ գործի գիշերն ալ իր  
Ինչ որ հանգստին սահմանեցիր  
Տո՛ւր որ մեղի աչքն էրը ննջէ  
Հոգին արթուն մեր մէջ մընջէ  
Որ թէ՛ ցորեկ է թէ՛ գիշեր  
Քեզ անդադար փառք տանք, **ճ՛վ Տէր՛**
3. Ով առաջնորդ հոգիներու  
Լոյսի աղբիւր, և շնորհատու  
Երբ մարմնեղէն դուռներն փակուին  
Լոյս տո՛ւր ներսի մեր նայուածքին  
Ու գիշերանց ելլելուն պէս՝  
Հրեղէններուն հետ օրհնենք Քեզ  
Որ թէ՛ ցորեկ և թէ՛ գիշեր  
Քեզ անդադար փառք տանք, **ճ՛վ Տէր՛**
4. Ամենատուրը Երրորդութիւն  
Ըզմեզ մաքուր շինէ Քեզ սուն  
Ո՛ւ առաքատի տղայոց նրման  
Թո՛ղ որ՝ հանգչինք Քեզ մօտ միայն  
Բարեկամին տո՛ւր խնդրածը՝  
Իր փոխ ուզած երեք հասը  
Որ թէ՛ ցորեկ և թէ՛ գիշեր  
Քեզ անդադար փառք տանք, **ճ՛վ Տէր՛**
5. Ըտեղծելով լոյսն երկնածիր՝  
Տիւն ու գիշերը բաժնեցիր  
Բայց գիշերուան մէջ ծագէ, Տէր  
Իմանայի ճառագայթներ  
Ամեն ստեղծ Աջք Հայրենի  
Մեզի տալով իբր հովանի  
Որ թէ՛ ցորեկ և թէ՛ գիշեր  
Քեզ անդադար փառք տանք, **ճ՛վ Տէր՛**
6. Զրգած կրակովդ՝ ամէն հոգի՛

- Սիրոյդ կրակովն՝ թող բորբոքի  
Մեր խորհուրդներն մաքրելով ան՝  
Արծարծէ լո՛յսդ գիտութեան  
Թող զմեզ հանէ մահուան քունէն  
Վ՛ առէ բոցովդ միջքերն ամէն  
Որ թէ՛ ցորեկ և թէ՛ գիշեր  
Քեզ անդադար փառք տանք, **ճ՛վ Տէր՛**
7. Անմտոց լոյս Քեզ նայինք փոյթ  
Որ զգալի լոյսն ունիւ ծածկոյթ  
Մեզի համար գուրն իջնուր դու  
Գերեզմանին մէջ նրնջելու  
Մեր մօտ քնացիր, բնութիւն արթուն  
Վ՛ անէ չարին ներգործութիւնն  
Որ թէ՛ ցորեկ և թէ՛ գիշեր  
Քեզ անդադար փառք տանք, **ճ՛վ Տէր՛**
8. Անտուեր լոյս էիդ դիմաց  
Պաշտատանքով կանք ժողովուած  
Երբ դուռն էր փակ՝ այն իրկուան՝  
Աշակերտացդ երեւցար Գուն  
Թովմայով ձայն բարձրացուցած՝  
Քեզ դառանիմք Տէր և Աստուած  
Մեզի՛ ալ դաս այս իրկուան  
Տարու ողջոյնդ հոգիներուն
9. Տէր, կ՛ազաչենք Քեզ բոլորս ալ  
Քու օգնութիւնդ քաղցր է յուսալ  
Խարսէլի դու պահապան  
Մեր անձերուն եղիր պաշտպան  
Խաղաղացո՛ւր, հանգչէ՛ մեզ հետ  
Որ անխրտով նրնջենք յաւետ  
Ո՛ւ առտուն կանուխ ելլելու պէս՝  
Հետ Հօր՝ Հոգւով օրհնենք ըզքեզ՛

10. Զայնը փողին Գարրիէլեան  
 Վերջին այն լուռ մէջ գիշերուան  
 Մեզ լրտեցո՛ւր, ու աջ դասին  
 Արժանացո՛ւր զմեզ միասին  
 Լապտերներու լուսովն սնչէջ  
 Հինգ իմաստուն կոյսերուն մէջ՝  
 Հարս հոգիներ, փեսայ, քու քով  
 Թող աւագաստ մըանենք փռաքով:

Եղիշէ Եպ. Գուրեան

## Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ք

Քարոզիչ մը կը կանգնի քար կոտորոցի մը առջին, որ ծուներ դրած մեծ քարեր կը փշրէր:

Յովհաննէս, կ'ըսէ Քարոզիչը, եւրանի թէ ես ալ կարող ըլլայի քարացեալ սրտեր փշրել:

Պահ մը վար դրաւ Յովհաննէս մուրճը, եւ Քարոզիչին երեսը նայելով ըսաւ, գուցէ ինձ նման ծնկան վրայ չես գար, քարեր եւ քարեղէն

սրտեր փշրելու միակ կերպը ծնկան վրայ գալն է:

Լուսավիք ԺԴ, ուզեց լսել հուշակաւորն Մասիլիօն/ բեմբասացը, քարոզէն շատ գոճ մնալով, սապէս ըսաւ անոր. շատ քարոզիչներ եմ լսած եւ զոն մնացած եմ ինձմէ. երբ սակայն ձեր քարոզ լսեցի ինձմէ դժգոհ մնացի: Էն լաւ քարոզն այն է որ ունկընդիրն անձնագոհութենէ կը դադրեցնէ եւ աղաղակել կուտայ, ի'նչ ընեմ որ փրկուիմ:

Քանի՞ ոսկիի պէտք ունիք, հարցուց մեծահարուստ մարդ մը Քարոզչին, որ բարեգործական հաստատութիւն մը կը վարէր եւ մեծ կարօտութեան մէջ էր:

Հարուստը գրիչը հանեց, մելանին մէջ թաթխեց. եւ կ'ուպասէր որ փոխ-գիրը պատրաստէ: Միայն 50 ոսկի կը բաւէ, ըսաւ քարոզիչը եւ 50 ոսկինոց չէք մը ընդունեց: Քարոզիչը սակայն 110 ոսկի պէտք ունէր. բայց

չլստահեցաւ որ հարուստը պիտի յօ-  
ժարէր տալ այդ զուճար : — Զոր  
ինչ խնդրէք պիտի տրուի, կ'ըսէ Տէր  
Յիսուս : Լայն բաց բերանդ, կ'ըսէ  
Աստուած : Դուրիժի միջոցով, եւ ես  
պիտի զայն լեցունեմ :

Ծերացեալ հայր մը տեսնելով որ  
իր որդւոյն բնու կ'ըլլայ, խնդրեց որ  
զինքը ձերանոց խրկէ. որդին բերկ-  
րութեամբ ընդունեց այս առաջարկ  
եւ հայրը ձերանոց փոխադրուեցաւ  
նոյն օր, դեռ արեւ մարչմտած : Քա-  
նի մը օրէն ետեւ հայրը որդւոյն լուր  
խրկեց եւ խնդրեց որ իրեն երկու  
սաւան շնորհէ : Սաւաններուն էն  
անշաշնեան զատելով որդին իր տաս-  
նամեայ մանչուն յանձնեց, որ իր մեծ  
հօր տանի : Տղան սաւաններն առաւ,  
սակայն մին անկիւն մը պահեց :  
Հայրը տեսաւ զայս, բայց ձայն չհա-  
նեց : Երբ մանչը ձերանոցէն վերա-  
դարձաւ, հայրը հարցուց թէ ինչո՞ւ  
սաւաններէն մէկը պահեց եւ միայն  
մէկ հատ սարաւ իր մեծ հօրը : Հայ-

րիկ, բսաւ աղան, անկեղծ պարզու-  
թեամբ. օր մը երբ ես ալ քեզ ձերա-  
նոց խրկելու ըլլամ, այնպահած սա-  
ւանս քեզի պէտք պիտի ըլլայ :

Ծնողք սիրով եւ անձնուիրաբար  
կը հոգան, կը խնամեն եւ կը մեծցնեն  
իրենց զաւակներ, սակայն որդիք, սո-  
վորաբար կը մոռնան «պատուել ի-  
րենց հայր եւ մայր» :

Հոսմի պալատներէն մէկուն ձե-  
ղունը հոչակաւոր նկար մը կայ :  
Ապաղոն, Արեգակին չաստուածը,  
բազմած է կառքի մը մէջ, որոյ առ-  
ջեւէն մէկը ծաղիկներ կը սփռէ .  
ճաճանչագեղ յաւերժահարսներ կը  
չըջապատեն կառքը, դեղնագոյն  
նժոյգներ մը քաշեն զայն, նկարը  
արշալոյսը կը ներկայացնէ : Դիտողը  
չյագենար նկարը ուսումնասիրելէ,  
որով աչքերը կը յոգնին, եւ վիզը,  
չարունակ դէպի ձեղուն ուղղուելով,  
կը ցաւի : Պալատին տէրը այս դրժ-  
ուարութիւն վերցնելու համար այն-  
պիսի զիրքով հայելի մը զետեղեց

գետինը , որոյ մէջ նկարին ամէն մաս  
այնքան յստակօրէն կ'երեւի , որ հարկ  
չմնար վեր նայելու : Տէր Յիսուսի  
Մարդեղութիւն անա այն հայելին է ,  
որով Աստուած մեզի կը յայտնուի ,  
ուչի ուչով քննենք Յիսուսի կեանք  
եւ կարելի կ'ըլլայ մեզ տեսնել մեր  
Երկնաւոր Հայրը իր բոլոր սքանչելի  
ստորոգելիքներով :

Անգլ. քերթող , Թէնիսըն , օր մը իր  
բարեկամին հետ ծաղկաւէտ պարտէզ  
մը կը շրջէր . սա հարցուց անոր .  
Քրիստոսի նկատմամբ ի՞նչ գաղափար  
ունիք : Թէնիսըն լռեց պահ մը , ապա  
ծաղիկ մը ցոյց տալով ըսաւ . կը  
տեսնէ՞ք այս ծաղիկ , ինչ որ է ա-  
րեգակ այս ծաղիկին համար , նոյնն  
է Քրիստոս ինձ համար :

Անկրօններ եւ անհաւատներ իսկ  
կը վկայեն քրիստոնէութեան գոր-  
ծած հրաշքներուն համար , եւ անոր  
բարերար ազդեցութիւն չեն ուրանար :  
Ի՞նչ է , սակայն ըրած անհաւատու-

թիւն : Ծառը իր պտուղէն կը ճանչ-  
ցուի : Ինչո՞ւ անհաւատներ բարբա-  
րոս երկիրներ չեն երթար քարոզե-  
լու . ո՞ր անհաւատը երբէք հանած է  
մարդ մը իր ապականութենէն եւ  
թշուառութենէն . հանած է կին մը  
կամ այր մը մոլորութենէ , մաքրած  
է կեանք , բերած է արեւցոյզ մը  
ուզլութեան , կանանչ սեղանին աւե-  
րիչ բոյնին առջեւէն խալառ հեռա-  
ցուցած է խաղամուր . ազատած է  
անկեալը իր ամօթալի վիճակէն , Բիրտ  
եւ գաղան մարդ մը գորովագութ  
հօր կամ ամուսինի փոխած է . մա-  
համերձին մխիթարութիւն մատակա-  
րարած է . ունի՞ անհաւատութիւն  
իր պատմութեան էջերուն մէջ բա-  
րոյական յաղթանակներու նկարա-  
գրութիւն : Ծառը իր պտուղէն կը  
ճանչցուի :

Եթէ աղօրթին քարին մէջ ցորեն  
լեցնես քարը կը կտրէ ցորենը ,  
կ'աղայ եւ ալիւր կը շինէ , իսկ եթէ  
ցորեն չլեցուի , ոչ թէ քարը պարսպ կը  
դառնայ այլ նաեւ ինքզինք կը մաշե-



ցընէ : Սիրտն ալ այսպէս է . երբ պարապ է կը թառամի , կը տառապի , կը մաշի եւ կը հիւծի : Պէտք է սրտերնիս գրաւեն լաւ , օգտակար , ազնիւ , առաքինի խորհուրդներ :

Ամենաջնջին եւ անօգուտ համարած աշխատութիւն իսկ յանձն առ , որպէս զի սատանան քեզ գործի վրայ տեսնէ , զի շատ որոգայթ ունի սատանան ծոյլին համար : Սողոնի օրէնք ծոյլը մահուան կը դատապարտէր , Սենեկա աւելի կ'ուզէր հիւանդ ըլլալ քան ծոյլ :

Անշարժ , կայուն , լծացեալ ջուրեր որդեր կը գոյացնեն , անգործութեան մատնուած մտքեր ալ չար խորհուրդներ կ'արտադրեն . որոնք կ'աճին եւ կը զօրանան ,

Տօքթ. Շթայն . Պէննի Համալսարանի Բրօֆէսօրը . 1904ին սա'պէս ճառախօսած է . «Ս . Գրոց Արարչագործութեան նկարագրութիւնը , այսօր

ստուգուած իրողութիւն մ'է . բոլոր մարդիկ մէկ զոյգէ մը յառաջ են եկած , Այսօրուան գիտութիւնը ոչ թէ միայն Ադամի եւ Եւայի վերագործած է , այլ նաեւ Սեմի , Քամի եւ Յարէթի , Բալիշընուժ . Տարվինականութիւն այսօր առասպելի կարգէ անցած . այսօրուան գիտութիւն վերադարձ կ'ընէ դէպ ի Ս . Գրոց ճշմարտութեանց :

Երկու տեսակ են քրիստոնեայներ . ոմանք լուցկիի եւ ոմանք օդաչափի կը նմանին . Օդաչափ էն փոփոխական առարկան է , մերթ փառաւոր օր ցոյց կուտայ , մերթ անձրեւ , մերթ փոթորիկ , մերթ ձիւն եւ հով : Այս տեսակէ եղող քրիստոնեայներ մերթ լի են հաւատով , քաջ եւ անվեհեր , մերթ յուսահատ եւ երկչոտ , նման եղէգի : Այսօր յուսալից աչքերով դէպ յառաջ կը նային , վաղը արտում եւ ախուր են , մերթ ժայռի նման ալիքներուն դէմ կը դնեն , մերթ նման եղէգի՝ որ ամէն հովէ կը շարժի : Լուցկիի նմաններն փոքր

չարժման կ'սպասեն որ վառին եւ մեծ շառաջիւնով կայծեր արձակեն՝ բայց սպասէ մի վայրկեան եւ բոցաճաճանչ լուցկին կը մարի եւ սեւցած գետին ձգուի :

Երկու հանքագործք կրակեցին պատրոյզը եւ մտան սակաւը՝ որ վեր ելլեն եւ պայթման պատճառած վրտանդէն զերծ մնան. սակաւ քաշողը սակալն, չէր կարող երկու հոգի ի միասին վեր քաշել, պէտք էր որ, մէկը դուրս ելլեր: Հանքագործներէն մին խսկոյն դուրս ցաակեց եւ ընկերին ըսաւ, դու ազատէ կեանքդ որ ժամանակ ունենաս ապաշխարութեան, Փառք Աստուծոյ, ես Աստուծոյս հետ հաշտ եմ եւ վստահ որ մեռնելուս պէս Երկինք պիտի գնամ: Ահռելի պայթիւն մը լսուեցաւ, սակալն ո՛վ քանդուեցաւ, քարին կտորներն այս դիւցազն մարդուն շուրջը եւ վրան կամար մը ձեւացնելով նա ստոյգ մահուանէ ազատեցաւ: «Ասկէ աւելի մեծ սէր ոչ ոք կրնայ ունենալ, քան

որ մէկը ի կեանքը բարեկամաց համար զոհէ»:

Նաւն խորտակեցաւ, նաւարեկեալք մտան նաւակը եւ ընդարձակ ովկիանին վրայ աստ անդ կը տարուբերուէին. պաշարն հատնելու վրայ էր. օգնութեան յոյս չկար. ուստի որոշեցին որ քուէ ձգելով նաւակին մէջ եղողներուն թիւն պակսեցնեն ծովը նետելով, որպէս զի պաշարն քանի մ'օր եւս զիմանայ, Քուէն երկու եղբայր մեկուն ելաւ. մինչ սակը պատրաստուէր ծովն նետուելու, միւս եղբայրն կեցուց զնա եւ առաջարկեց որ ինք ձգուի ի ծով փոխան իր եղբոր. զի սա հայր է մի բազմամտամ ընտանեաց. յուզիչ պայքարէ մը յետոյ ծովն նետուեցաւ արի եղբայրը իր եղբոր փրկանք ըլլալով:

Հարաւային Ափրիկէի մէջ բորոտներու յատկացեալ տեղ մը կայ, բարձր պատերով շրջապատեալ, մէկ

դուռ միայն հոն կ'առաջնորդէ եւ հոն մտնողն այլեւս դուրս չելլեր : Միսիօնարք օր մը պատին վրայէն նայելով տեսան որ բորոտներէն մին՝ որոյ թեւ փտտած, ինկած էր, իր կռնակն առաւ ընկերը՝ որոյ սրունք փտտած եւ ինկած էր բորոտութենէ : Այսպէս երկուքն ի միասին կը մշակէին իրենց հող : Երթանք, ըսին Միսիօնարք, եւ անոնց Աւետարան տանինք : սակայն այլեւս դուրս ելլել չկայ : ըսին միմեանց : «Քրիստոսի սէր կ'ստիպէ» գացին : հոն քարոզեցին : եւ հոն ալ մեռնելով թաղուեցան եւ ի Տէր հանգեան :

Հնդկաստանի գերիներուն Աւետարան քարոզելու համար մի քանի Միսիօնարներ զրկուեցան : գերիներուն քով երթալ սակայն խաթիւ արգիլեալ էր : ինչ ըրին արդ այս միսիօնարք իրենց նպատակի իրագործման համար : ինքզինքնին ծախեցին իրր գերի եւ միշտ անոնց մէջ ընակելով քարոզեցին Աւետարան :


Դեղձանիկ կը գրուի վանդակին մէջ եւ սենեակին մէջ կը կախեն վանդակը : ինչո՞ւ : որպէս զի իր քաղցր երգերով հրճուեցնէ մեր սրտեր :

Աստուած ալ ունի իր վանդակներ : ուր բանտարկէ մերթ այս, մերթ այն : հիւանդութիւնք, կարօտութիւնք, կորուստներ եւլն : վանդակներ են, որպէս զի մենք անոնց մէջ մեր՝ երգերով փառարանենք զԱստուած : Ո՛վ դեղձանիկ, մի՛ չարչարեր զքեզ վանդակին կողմերուն զարնուելով : թառէ հանդարտիկ, եւ երգէ քաղցրիկ քու երգեր : այդ է քու միակ պաշտօն :

Պատերազմի դաշտին վրայ երբ թշնամոյն գունտեր զինուորներուն վրայ կը տեղան, ասոնք իսկոյն երեսի վրայ գետին կիյնան, թողլով որ գունտեր իրենց վրայէն անցնին : Աշխարհի կերպ կերպ փորձանաց ատեն անոնք որ կ'երկրպագեն — կ'աղօթեն — անոնց սղոցեցութենէն կրնան ազատիլ :

Առ սա սակաւոր եւ ջուր բեր , ըստ հայր մը իր որդւոյն . տղան ազրիւր գնաց . փորձեց եւ նորէն փորձեց . ապա հօրը գալով ըսաւ . Հայր , սակաւով ջուր բերել անհնար է . Այո՛ , ըսաւ հայրը , բայց տե՛ս սակաւոր ճէփ ձերմակ է եղեր , ո՛րքան մաքուր է : Ասանկ են քեզի տրուած խրատներ . թէեւ չպահես դանոնք մտացդ մէջ , սակայն կրկնուելով կը մաքրեն միաքդ եւ սիրադ . ուստի յօժար եղիր լսել խրատ եւ յորդոր :

Ծովը ինկած մարդ մը կ'աղօթէ Աստուծոյ որ զինք ազատէ , անդիէն մարդիկ տեսնելով զինքը չուան մը կը նետեն . սա կը բռնէ չուանը երկու ձեռքով եւ կը գոչէ . ո՛վ Աստուած , այլեւս պէտք չունիմ քու օգնութեանդ . ձանձրոյթ մի՛ առներ , ես կրնամ ինքզինքս ազատել : — Ո՛րքան ապերախտ եւ յիմար էր այս մարդ . միթէ չուան նետել տուողը չէ՞ր բռն ինքն Աստուած , ի պատասխան իր խնդրուածքի :



## Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

Սենեակի մը մէջ երբ 2—3 հոգի պառկին առտուն բոլորն ալ «ծանր գլուխ» կ'ունենան, ո՛րքան աւելի վնասակար է այն սենեակին օգը, ուր ամբողջ ընտանիք բոլոր օր կը նստին, կը գործեն, կերակուր կ'եփեն և կը քնանան, ուստի բնական է որ այն տան կիներ շուտ կը խամրին և մի քանի զաւակ ունենալէ ետեւ կը պառուին, մինչ այրեր, ցերեկներն ուրիշ օդի մէջ անցրնելով, առոյգ և կայտառ կը մնան: Մաքուր օդ աւելի կարեւոր է քան կերակուր:

Մանուկին առողջական վիճակ կը ստուգուի կշռելով. 5 տարեկան մանուկին երկայնութեան իւրաքանչիւր 10 սանթիմէթը 1800 կրամ պէտք է կշռէ. սովորաբար 18 քիլօ ծանր կ'ըլլայ 5 տարեկան առողջ

տղան, ասկէ աւելին քաջառողջ է, նուազը աննպաստ նշան է. երբ ծանրութիւն փոփոխակի նուազի և աւելնայ վտանգաւոր է, պէտք է բժիշկին դիմել և լուրջ քննութիւն ընել:

Տիֆթէրին այնքան մանուկներ զոհ չի պիտի ըներ, եթէ տղայք կանուխէն վարժուած ըլլային կարկարա ընել. կանուխ հասակէն վարժեցուր տղան կարկարա ընել պարզ ջրով, ասիներքին թաղանգներն կը զօրացնէ: Ընդհակառակն երբ հիւանդութեան ատեն սկսիս կարկարա ընել վարժեցնել, մինչեւ որ տղան վարժուի, ախտը իր աւերում գործադրած կ'ըլլայ:

Ակոսներն ծակելուն պէս պէտք է լեցնել տալ, որով անոնք երկար ատեն կը դիմանան և միւս ակոսներուն փրտութիւնը կ'արգիլեն. որքան շատ մաքրենք ակոսներն այնքան առողջ և սպիտակ կ'ըլլան անոնք, վրձինդ ոչ խիստ կարճր ոչ ալ խիստ կակուղ ըլլայ, մի քանի

ամիսն անգամ մը փոխէ վրձինդ :

Մագերը յաճախ սանտրել եւ վրձինել խիստ կարեւոր է անոնց աճման եւ պահպանման համար , ամիսը մէկ անգամ ալ պէտք է լուալ գլուխը :

Ջուրի սառած խողովակներուն ջուրջր չմարած կիր դիր . վրան ջուր թափէ , ստով խոշորվալը ա՛յնպէս կը տաքնայ որ մէջի սառած ջուրը կը հալի :

Ճերմակ լուրիան թոլոր ընդեղէններէն աւելի սնունդ կը պարունակէ . պէտք է սակայն լաւ եփել եւ աղէկ ծամել : Ստամոքսի հիւանդութիւն ունեցողներն պէտքէ ուտեն լուրիան :

Մետաղէ դրամներուն եւ թղթադրամներուն վրայ անթիւ միջրոպներ կը գտնուին . Անգլիոյ Ալէքսանտրա թագուհին ընաւ ձեռքը դրամ չառներ մինչեւ որ նախ չհականխուի : Հաշուած է որ ձեռքին վրայ 80,000 միջրոպ կայ . ալ խորհէ թէ ձեռքէ

ձեռք անցնող դրամներ ի՛նչ վիճակի մէջ կը գտնուին . պէտք է սա աջհամբոյրի սովորութիւն , մանաւանդ զեռատի մանկանց համար , արգիլուի :

Քունը յոգնած ընութեան կենսատու բաղասանն է . որ կորսուած ոյժերը կը վերանորոգէ , մարմինի ալ աճոււր կը փութացնէ , միտքն ալ նոր եւ հզօր գաղափարներով կ'օժտէ . շափահաս մը 8 ժամ քնոյ պէտք ունի , աւելին կամ պակասը վնասակար է :

Իգական սեռին համար ընտիր եւ խոհեմ տնտեսագիտութիւնը , — տընական պարտականութեանց վարժութիւնը — , ամուսնական տեսակէտով , աւելի գովելի եւ արժէքաւոր է քան ուսում , գիտութիւն եւ գեղարուեստ :

Ստամոքս երբեմն մանրէներով լեցուած կ'ըլլայ , յայնժամ պէտք է ծով կենալ , այս պարագային պտուղի գործածութիւն հրաշալի գործ կը տեսնէ , մանրէները կը ջնջէ ստամոքսին մէջ :

Թոքատապ — սաթլըճան — խոնրուած բնակարանի մէջ բնակելէ , չափազանց շատ հանդերձ հագնելէ , ուտելու , խմելու չափազանցութենէ եւ անկանոնութենէ եւ փափկասուն կեանք անցնելէ յառաջ կուգայ . կերակուրդ պարզ ըլլայ , փնտռէ արեւ , մաքուր օդ . բնակարանդ խճողուած չըլլայ : Պարզ հանդերձ հագիր , օդի հոսանքէ , ցրտառութենէ եւ հարբուխէ զգոյշ կեցիր , ստամոքսդ մի՛ ծանրաբեռներ , բացօդեայ տեղեր աշխատէ , ման եկուր , ցատկէ , խաղայ :

Ինչ որ մտադիր ես ընել մի՛ յետաճգեր , շուտ ըրէ . ստացած նամակդ անմիջապէս պատասխանէ , հիւանդին խոստացած այցելութիւնդ մի՛ յետաճգեր , խոստացած նուէրդ . վարձքդ , իսկոյն խրկէ , գործաւորդ մի՛ տանջեր , գնա՛ եկո՛ւր ըսելով , տրտմածին կարեկից եղիր , քաջալերական խօսքդ խօսէ ճիշդ վայրկեանին :

Այրուածքի համար էն կարեւորն է :

օդը արտաքսել վէրքէն , եւ ճնշումէ ու շփումէ ազատ պահել վէրքը , դիր հասարակ սօտայի լուծուածքի մէջ կտոր մը ֆանէլա , դիր վէրքին վրայ , վրան ալ մոմլաթ — բարակ մուշամպա — մը զնելով կապէ :

Տղայոց հնազանդութիւնը , վայրկեանական հնազանդութիւն , խօսքը ըսուածին պէս իսկոյն կատարել , կենսական խնդիր է : Կառախումբ մազ մնաց կոխոտէր տղան . հայրը «պառկէ» դռնէ . տղան , որ վարժուած էր անմիջական հնազանդութեան , հօրը հրամանին , պառկեցաւ եւ կառախումբ վրայէն սահեցաւ անցաւ առանց ո՛ր եւ է մէսս պատճառելու տղուն :

Առ այս 7 բան պէտք է .

1. Զանա՛ տղուդ սրտին մէջ կատարեալ վստահութիւն , հաւատք , գոյացնել քու սիրոյդ եւ իմաստութեանդ նկատմամբ :

2. Տուած հրամաններդ շիտակ , սիրով եւ քաղցրութեամբ ըլլան :

3. Տուած հրամաններուդ ճիշդ եւ

անմիջական հնադանդութիւն պահանջէ :

4. Զուկէդ պէտք եղածէն աւելի բան մի՛ պահանջէր :

5. Սորվեցուր զաւկիդ միտքը ինկածը . խելքին փշածը չընել :

6. Վարժեցուր զաւակդ միշտ խորհիլ թէ իր կամք կատարած ատեն պէտք է նսեւ ուրիշին կամքն ալ նկատողութեան առնել :

7. Ատեն ատեն բացատրէ զաւկիդ տուած հրամաններուդ եւ տան կանոններուն պատճառը եւ նպատակը :

Իշխանուհի մը իր նոր ամուսնացեալ ազջկան սա խրատը տուաւ . սիրեցեալ դուստր իմ , ամուսնոյդ հետ այնպէս վարուէ որ ուրախութենէն միրտը բերկրի եւ խայտայ : Իր որդւոյն ալ սա խրատը տուաւ , երբ ամուսնացաւ . սիրեցեալ որդեակ , կընծջդ հետ այնպէս վարուէ որ նա տխրի , արամի . երբ հեռանաս տունէն , եւ ի սրտէ բերկրի երբ տուն վերադառնաս :

Հարցուցին Ալֆօնս թագաւորին թէ ամուսնացեալ ամուլներ ի՛նչպէս կրնան միշտ համբերալիս ըլլալ : «Կինը», ըսաւ թագաւորը , «պարտի հարկ եղած ատեն մունճ ըլլալ , իսկ այրը պէտք եղած ժամանակ պէտք է խուլ ըլլայ» :

Բարի կին մը խիստ բարկացոտ եւ կատաղի այր մ'ունէր . որ մը իր գինետան ընկերներով տունը եկաւ եւ կնոջը լաւ ծեծ մը քաշեց եւ հրամայեց որ երգէ : Լալագին ձայնով կինը երգեց . «Տէր իմ Աստուած պարգեւէ դուն , մեր երկուքիս խաղաղութիւն» : Այրը եւ իր չար ընկերներ դառն արտասուք թափեցին երբ կինը կ'երգէր : Գանակոծութիւն այլ եւս չկրկնուեցաւ :

Ուրիշ մի կին , այրէն զանակոծուելով , խուցը մտաւ եւ դառնապէս լացաւ . այրը հարցուց թէ ինչո՞ւ կուլայ աղու նման : Լաւագոյն չէ՞ , ըսաւ կինը , որ հոս , առանձին , ող-



բամ իմ թշուառութիւն , քան թէ պոռամ եւ գոչեմ , որով միայն փողոցէն անցնողներն ուրախացուցած պիտի ըլլամ :

Ամուսնանալու ժամանակը ե՞րբ կուգայ . կարեւոր հարց մ'է այս . ահա գործնական , թուարանական , պարզ մի կանոն . որ այս հարց ամենաճիշդ կերպով կը պատասխանէ : Աթող ներկայացնէ այրր . Կ ալ կինը : Ան առեն  $\frac{m}{2} + 7 = Կ$  : Կամ , թուարանութիւն չգիտցողներու համար , այրին տարիքին կէսը ա՛ռ . վրան 7 գումարէ եւ կ'ունենաս կնոջ ամուսնութեան յարմար տարիքը : Օրինակ . 30 տարեկան այրր քանի՞ տարեկան կին մը պէտք է առնէ : 30ին կէսն է 15 առաւել 7 հաւասար է 22 , ուրեմն 30 տարեկան այր մը 22 տարեկան կնոջ մը հետ պէտք է ամուսնանայ : Այլ օրինակ , 22 տարեկան այր մը քանի՞ տարեկան կնոջ հետ ամուսնանալու է : 22ին կէսն է 11 , առաւել 7 , հաւասար է 18 ,

ուստի կինը 18 տարեկան ըլլալու է : Այլ օրինակ , 60 նոց այր մը քանի՞ տարեկան կնոջ հետ ամուսնանալու է : 60ին կէսն է 30 + 7 հաւասար է 37 , պատասխան : Գանք կնոջ . երբ աղջիկ մը կ'ուզէ գիտնալ թէ իր ընտրելի ամուսին քանի՞ տարեկան ըլլալու է , պէտք է սա կանոնի հետեւի ,  $Կ - 7 \times 2 =$  այրին տարիքին : Օրինակ , օրիորդ Մարիամ 24 տարեկան է 7 հանէ 24 է կը մնայ 17 , բազմապատկէ 2ով , կ'ունենաս 34 , որ է իր ընտրելի ամուսինին ճիշդ տարիքը :

Այլ օրինակ , հարաւային երկիրներու համար , ուր կանուխ կ'ամուսնանան : Կարապետ 18 տարեկան է , քանի՞ տարեկան աղջիկ վնտռելու է , 18ին կէսը 9 է , 9 առաւել 7 կ'ընէ 16 , պատասխան : Թագուհի 15 տարեկան է , քանի՞ տարեկան ըլլալու է իր ապագայ ամուսին : 15 էն 7 հանէ , կը մնայ 8 , բազմապատկէ 2ով , կ'ընէ 16 , պատասխան :

Լանսէթ բժշկական անդլ . թերթը

կը պնդէ որ երբ երկու հոգի շարունակ ի միասին մէկ անկողին պառկին , մին կ'աճի կը զարգանայ , մինչ միւսը կ'սպառի եւ կը տկարանայ : Փոքրիկ տղայք տարէցներու , մեծ մայրերու , ծոցը պառկելու չեն բնաւ , ծերուկը կը քամէ , կը ծծէ դեռահասին կենաց ոյժը :

Երկու քոյրեր , մին 15 եւ միւսը 17 տարեկան , սովոր էին միշտ ի միասին պառկիլ , մին եղաւ առոյգ , կայտառ , իսկ միւսը օր քան զօր նիհարացաւ : Բժիշկը պնդեց որ զատ անկողին պառկին , 6 ամիս չանցած փորձը նպաստաւոր եղաւ . 18 ամիսէն նիհար , չորցած աղջիկը առոյգ , զօրաւոր եւ կայտառ եղաւ , ծանրութիւնն ալ աւելցաւ :

Քաջալերէ տղաքները . երբ տուած գործը կամ դասը պատրաստելէ ետեւ քեզի կը ներկայացնեն , մի' ըսեր . այս չեղաւ , չկրցիր , դուն մարդ ըլլալիք չունիս , քեզի նման անպիտան մը դեռ ծնած չէ , եւն . տասնէն ինն

վտան եղիր որ այդպէս յուսահատեցուցած տղադ երբէք չի պիտի յաջողի , յաջորդ օր աւելի գէշ պիտի կատարէ գործը , իսկ յաջորդ շաբաթ բոլորովին ծուլութեամբ պիտի անցնէ եւ սուտեր պիտի հնարէ ծածկելու համար յանցանքը :

Ըսէ ընդհակառակն . տղա՛ս , այս բոլորովին աղէկ չէ . սակայն անցեալ օրուրնէ աւելի եւս յաջողեր ես , դու մեծ ընդունակութիւն ունիս , պիտի յաջողիս , քիչիկ մը աւելի աշխատէ եւ Աստուծոյ օգնութեամբ պիտի յաջողիս . Ասով պիտի տաս տղուն նոր զօրութիւն . քաջալերել չողոքորթել չնշանակեր . չողոքորթող ծնողք չի պիտի յաջողին , ընդ հակառակն արցունքով պիտի հնձեն զոր ինչ սերմաներ են . չողոքորթը կը փնտուէ իր անձնական շահ , քաջալերողը , սակայն , թէ եւ տրտմութեամբ իսկ սերմանէ բերկրութեամբ եւ ցնծմամբ պիտի հնձէ :

Հին , հին առողջապահական կանոն

մ'է դադրիլ ուտելէ ճիշդ այն վայր-  
կենին երբ կերակուր մեծ հաճոյք կը  
պատճառէ . սեղանէ ելած ատենդ  
պէտք է զգաս թէ դեռ կրնայիր ու-  
տել , Սպանիացիք կերուխուսի մէջ  
չատ չափաւոր են , սեղանի վրայ  
ժամերով խօսակցութիւն չեն ըներ ,  
կերակուրը կ'աւարտեն եւ իւրաքան-  
չիւր իր գործին կ'երթայ . ճաշէն  
ետեւ 2—3 ժամ կը քնանան , միջօրէի  
չափազանց ջերմութենէ պաշտպան-  
ուելու համար :

Նա որ մազերը եւ հանդերձները  
անխնամ կը ձգէ օրն ի բուն , ժամա-  
նակ չունենալուն համար , դեռ չէ  
սորված ժամանակի բաժանում . եթէ  
«ամեն քան ժամանակին» հին ոսկե-  
ղէն կանոնը գործադրէ , թափած  
թափթփած եւ հերարձակ չի պիտի  
կենայ ամբողջ օր :

Հոլանտայի Վիլհէլմինա գեղանի  
թագուհին գիւղատնտեսութեան սի-  
րահար է . պալատին մօտ ագարակ

մ'ունի , ուր ա'յնքան կաթ եւ կարագ  
կը պատրաստուի , որ ագարակին բո-  
ւր ծախք ելլելէ ետեւ մեծ շահ մ'ալ  
կը թողու :

Սանդուխէն վեր ելած պահուն  
պէտք է այրը կնոջ առջեւէն երթայ ,  
իսկ վար իջած ատեն կինը առաջ եւ  
այրը ետեւէն :

Միայն թեթեւ հիւանդներու այցե-  
լութիւն կուտան . ծանր հիւանդնե-  
րուն սրպիսութիւնը կը հարցնեն տու-  
ներնին մարդ զրկելով :

Սեղանի վրայ հիւրին ձախ կողմէն  
եւ ձախ ձեռքով կը ներկայացնեն  
կերակուրը , որպէս զի նա աջովը  
առնէ կերակուրը :

Խօսակցութեան մէջ նկատելի կա-  
նոններ են . ուղիղ խօսիլ , որոշ ար-  
տասանել , օտար բառեր չգործածել ,  
սեղանին վրայէն պօռալով ուրիշը չը  
կանչել , խօսողը չընդմիջել , առանց

հրաւէրի այլոց խօսակցութեան չմասնակցիլ, ընկերական ակումբի մէջ գործի վրայ չխօսիլ, գլուխ գլխի չբացուիլ, ոչ ալ ծագրել եւ բամբասել:

Հիւրերը շատ մի՛ սպասցնեն. այրին ավտո, օտարներն բազմոց կը հրամայեն. հիւրընկալ տիկինը այցելող տիկնոջ ձախ կողմը կը նստի, բազմոցին վրայ, եւ երբ երթան, այրին կ'ընկերանայ մինչեւ սենեակին դուռը, իսկ տիկնոջը մինչեւ դուռը, դուռը բաց կը պահէ մինչեւ հիւրը անտես ըլլայ աչաց:

✓ Հնդկաստանի եւ Պարսկաստանի մէջտեղ լեռնաբնակ ցեղ մը կայ. ուր աղջիկն է որ իր ապագայ ամուսինը կ'ընտրէ. սրու որ հաւնած է աղջիկը, կը խրկէ թաշկինակ մը, զոր տանողը երիտասարդին գլխարկին վրայ կը հաստատէ գնդասեղրով մը. երիտասարդը պարտի համակերպիլ եթէ աղքատ ըլլալն չապացուցանէ:

Շուն եւ կատու, երբ անհանգրստութիւն զգան, խոտ կ'ուտեն, ոչխար եւ արջաւ նոյնպիսի վիճակի մէջ տեսակ մը բոյս կը փնտռեն: Բոլոր անասուններ, երբ ջերմ ունենան, քիչ կ'ուտեն, կը հանգչին, շուք եւ օդաւէտ տեղեր կը քաշուին, ջուր շատ կը խմեն: Երբեմն իսկ ջուրի մէջ կը մտնան: Յօդացաւ ունեցող կենդանիներ արեւին տակ կը պառկին: Անդամներէն մին եթէ վնասուի եւ կախուի, անգործածելի ըլլայ, ակուսներովն զայն կ'փրցնեն: Պատեւ բազմիկ մըջիւնը, երբ վիրաւորուի, շուտ կը հասնին ընկերներ եւ բերաննուն հիւթ մը կը նետեն անոր վէրքին վրայ: Երկրանդէ կոչուած կապիկը երբ վիրաւորուի, թաթը վէրքին վրայ կը դնէ եւ կը ճնշէ որ դադարի արիւն, կամ խոտ եւ տերեւ կը դնէ վրան:

Օձը խայթեց մի շուն, սա շատ օրեր զլուխը հոսող ջուրի տակ բռնեց եւ բժշկուեցաւ. ուրիշ մի շունի աչք վիրաւորուեցաւ, գնաց սեղանին տակ

պառկեցաւ, հետի լոյսէ եւ ջերմութենէ. կատու մը վիրաւորուեցաւ եւ 48 ժամ հոսող պաղ ջուրի տակ կեցաւ. պաղ ջուրի բուժիչ սքանչելի զօրութիւնն անասուններ աւելի լաւ են ըմբռնած քան մարդիկ :

Երեւելի մի բնասանեաց վերաբերեալ գեղանի, ծաղկահասակ դուստրը պարտէզ գնաց եւ սքանչելի մի վարդ փրցնելով սկսաւ անյազարար հոտոտել եւ ապա ծաղիկը մազերուն մէջ գետեղեց :

Քիչ մը յետոյ աղջիկը անհանգրստութիւն մը զգաց, մեղամաղձոտ եղաւ, կորոյս իր զուարթ կայտառութիւնն եւ քունը, եւ խիստ գլխացաւ մ'ունեցաւ, ի վերջոյ խելագարեցաւ եւ սննեակին մէջ փակել պարտաւորեցան. էն ճարտար բժիշկներու դեղեր եւ դարմաններ ի զուր փորձուեցան. 14 օրուան դառն տագնապներէ յետոյ թշուառ աղջիկը մեռաւ, առանց վայրկեան մ'իսկ իր նախկին զուարթութեան դառնալու : Յետ

մահուան մարմնոյ քննութիւնն կատարուելով գտնուեցաւ փոքրիկ մի սեւ մամուկ, որ դեռ կ'ապրէր իր բարակ թաթիկներով ուղեղին կառչած :

Ուստի խիստ զգոյշ պարտինք ըլլալ, երբ ծաղիկներ կը հոտոտենք, պէտք է նախ լաւ քննել եւ ստոյգ ըլլալ թէ թերթիկները վնասակար առարկայ մը չեն պարունակեր :

Սափրիչի մը յաշկութիւնները . — Քանատայի Օնգարիօ քաղաքին Առողջապահական Խորհուրդը հետեւեալ օրէնքը դրաւ այն ակէն մարդոց վրայ, որք պաշտօն ունին իրենց նմաններուն մազն ու մօրուքը յարգարելու : «Սափրիչ մը» . կ'ըսէ, «օրէնքը», պէտք է մաքուր ըլլայ թէ՛ անձնապէս եւ թէ սովորութեամբ : Պէտք է յաճախ մարմինը լուայ, եւ բերանն եւ ձեռքերը մաքուր պահէ : Սափրիչութիւնն բնել կ'արգիլուի ամէն անոնց որք մօրթի, մազի մօրթի, կամ մազերու հիւանդութիւն ունին : Արգիլուած է նմանապէս սափրիչու-

Թիւն ընել անոնց, որք հիւժարտա-  
 ւոր են եւ կամ վարակիչ աստի մը  
 ենթակայ են» : Սափրիչ մը մաքուր  
 պէտք է ըլլայ, եւ լուայ իր ձեռ-  
 քերը ամէն մէկ գործողութենէ վերջ :  
 Պէտք է, նմանապէս, որ առողջ  
 ըլլայ, զերծ ո՛ր եւ է վարակիչ աստէ,  
 որուն միկրոօր կրնայ ուրիշի փոխան-  
 ցել, անոր հպելով : Հիւս, բան  
 մ'ալ կրնան պահանջել նոյն ինքն  
 սափրիչները . հարկ է որ յաճախորդ-  
 ներն իրենք եւս մաքուր ըլլան, եւ  
 զերծ ո՛ր եւ է միկրոօրային հիւանդու-  
 թեանէ, գոնէ՛ մազի եւ մորթի հիւան-  
 դութիւն չունենան :



Լրագիր կարգա՛ւ . — Միշտ ճշմար-  
 տախօս ու վստահելի թերթ մը գնէ.  
 եւ ինքզինքդ ծանօթ պահէ աշխարհի  
 մէջ պատահած նորանոր իրաց : Ան  
 որ լրագիր չկարդար, ինքզինք կրդ-  
 զիացեալ, մեկուսացեալ դիրքի մը  
 մէջ կը դնէ, իբր թէ ո եւ է այցե-  
 լութենէ զրկուած, բանտարկուած  
 ըլլար : Այս հեռագրի եւ շոգեչարժ

եւ կիքտրաչարժ մեքենաներու դա-  
 րին մէջ, արուեստներու եւ գիտու-  
 թիւններու ամէն մասերուն նկատ-  
 մամբ միշտ կարեւոր գիւտեր ու փո-  
 փոխութիւններ տեղի կ'ունենան, եւ  
 ան որ լրագիր չկարդար, շուտ պիտի  
 տեսնէ որ թէ ինք եւ թէ իր գործ  
 շատ ետ են մնացած, զարգացում եւ  
 յառաջդիմութիւն իսպառ հեռացած  
 են իրմէ :

Իբրութեան համար Օրացոյցիս  
 ծայրը լրագրաց ցանկ մ'եմ դրած .  
 ընտրէ անոնցմէ մին . եթէ բաժնե-  
 գինը վճարել դժուար կուգայ քեզի  
 առանձին, մի քանի ընկերներով  
 թերթ մը բերել տուր եւ կարդա-  
 կարդալէ ետեւ նուիրէ տեղւոյդ վար-  
 ժարանի գրադարանին, որ Հայ ման-  
 կաին եւս, իտղայ ախոց, վարժուի լրա-  
 գիր կարգալու :



«Աստրախանէ (Ռուսիա) կը հա-  
 դորդեն թէ նոյ . Ձին Ղուբայի Ե-  
 կեղեցիին մէջ կարդացուեր է էջմիա-  
 ծինի Սինուդին մէկ հրամանն, որով

ասկէ վերջ ամուսնացող երիտա-  
սարդներէն և երիտասարդուհիներէն  
բժշկական վկայական պիտի պահան-  
ջուի՝ նոյն իսկ նշանն օրհնուելէ  
առաջ : Այս կարգադրութիւնն եղած  
է Աստրախանի Առաջնորդարանին ա-  
ռաջարկով , վէնէրախտերէն է՛ն սոս-  
կալիին , այն է՛ ֆրանկլիսիսի առաջ-  
քը առնելու համար : Սինօղը խիստ  
հրաման տուած է , որպէս զի այս հը-  
րամանը գործադրուի : Զանցառու  
քահանաները պատասխանատու պիտի  
ըլլան : Ժողովուրդն ուրախութեամբ  
ընդուներ է այս կարգադրութիւնը : »

\* \* \* Ամուսնութիւնը՝ ամէն քաղա-  
քակրթուած ժողովուրդներու մէջ ,  
հաստատ օրէնքներու համաձայն այր  
և կնոջ միութիւնն է : Իր բնական և  
ընկերական կրկնակի նպատակն է  
ծնունդ , որդեոց բնական և բարո-  
յական դաստիարակութիւնը կամ  
բարեկրթութիւնը , զանոնք առա-  
ջինի մարդիկ և օգտակար քաղա-  
քացիներ ընելու համար : Սա կարծ  
նախարանէն կը հասկցուի թէ՛ ա-

մուսնութիւնը գործողութիւն մ'է որ  
ընկերութեան ամենաբարձր յարգան-  
քը կը կրէ և ընտանեկան երջանկու-  
թիւնը կ'արտադրէ : Փիլիսոփաներն  
ամուսնութիւնը չափահաս այր և կը-  
նոջ բնական միճակն համարած են .  
չափահասութիւնն արբունքն շատ  
տարիներ ետքն իր կատարելութիւնը  
կը գտնայ , երբ գործարանները կա-  
տարեալ զարգացման մէջ և ծննդա-  
կան գործողութիւնները կատարելու  
կարող ըլլան : Ամուսնութիւնն յար-  
մար հասակ , գործարաններու կա-  
տարեալ զարգացում և բաւական ոյժ  
կը պահանջէ : Սիրոյ զգացումներէ  
աւելի տեւողական զգացումներ  
պէտք է : Ամուսնութեան ամէնէն  
յարմար , ամէնէն արգասաւոր ժա-  
մանակն էրիկ մարդուն համար քը-  
սանընթացէն մինչեւ քառասուն և կը-  
նոջ համար՝ քսանըմէկէն մինչեւ ե-  
րեսուն տարիքն է : Վաղակատար կը  
կոչուին այն ամուսնութիւններն որք  
այս տարիքներէն առաջ տեղի կ'ու-  
նենան . անագան կ'ըսուին անոնք որ

եաքը կը պատահին . իսկ անհատներս  
 կ'ըսուին անոնք որոց մէջ ամուսին-  
 ներուն մէկուն տարիքը շատ անցած  
 կ'ըլլայ : Ծնողք կրկնապէս կը մե-  
 ղանչեն երբ իրենց տղաքը կազմա-  
 կան կատարեալ զարգացումէն առաջ  
 ամուսնացնեն . նախ որովհետեւ իսկ  
 կ'ըլլան, բազմակրկնակ յոգնութեանց  
 պատճառաւ կը ջլատին , երկրորդ՝  
 որովհետեւ անոնց սերունդը , այս  
 վաղակատար ամուսնութեան և ըս-  
 պառման վնասը վերջը կը կրէ , ինչ  
 որ մեծ դժբախտութիւն մ'է : ամբողջ  
 տոհմին , ամբողջ համայնքին համար :

Մասնաւորապէս կ'նոյ վաղակա-  
 տար ամուսնանալը շատ ցաւալի է :  
 Ծնողներու այս իսկապէս մեղանչելի  
 աճապարանքէն՝ ալջիկն իրեն պէտք  
 եղած զօրութիւնը չի կրնար առնել .  
 իր հասակը , կուրծքն անհամեմատ  
 կ'ըլլան , արգանդն իր բնական ծա-  
 ւալն ստացած չըլլալով , սաղմ մը չի  
 կրնար պարունակել և ոչ ալ անոր  
 կատարեալ զարգացմանն համար  
 պէտք եղածները հայթայթել :

Ամենքդ ալ քիչ շատ գիտէք թէ  
 քառասունըհինգ տարեկան էրիկ  
 մարդու մը և երեսունըհինգ տարե-  
 կան կ'նոյ մը գործարաններն երիտա-  
 սարգութեան կենդանութիւնն և զօ-  
 րութիւնը չունին : Երեսունըհինգէն  
 վեր եզոյ կ'իներուն չըսեմ ամբողջը,  
 բայց մեծ մասը գիրութիւն մը կ'ըս-  
 տանան : Այս գիրութիւնը ծննդա-  
 կան վատթարութեան մէկ նշանը չէ՞  
 միթէ . անտարակոյս : Սա բացատ-  
 րութիւններէն կը հասկցուի թէ անա-  
 զան ամուսնութիւնն ըլլա՛յ ամուսնոց  
 վրայ , ըլլա՛յ իրենց տղայոց վրայ ,  
 գէշ աղղեցութիւն կ'ընէ բնակա-  
 նարար :

Անհամեմատ ամուսնութիւն , ասոր  
 վրայ ալ քիչ մը ծանրանալու է :  
 Պէտք է որ օրէնքով այս տեսակ ամ-  
 ուսնութիւններն արգիլուին : Երի-  
 տասարդներ երբ հարստութեան հա-  
 մար տարիքոտ կ'իներու հետ կ'ամուս-  
 նանան , ի՞նչ կ'ըլլայ իրենց վախ-  
 ճանը , դիտած էք արդեօք : Քանի  
 մը տարիներ անոնց հետ կեանք մը կը



վարեն , — երիտասարդներն հետըզ-  
հետէ կը նիհարնան , վատուժ , գձուձ  
մէկ բառով ապուշ արարած մը չե՞ն  
դառնար : Ատիկա անժխտելի իրողու-  
թիւն մ'է կարծեմ : Երիտասարդ կի-  
ներ ալ երբ տարիքոտ վաւաչտանե-  
րու հետ ամուսնանան , ժամանակէն  
առաջ կը թարշամին , որովհետեւ  
գժկամակութեամբ իրենց ամուսնոց  
ցանկասիրութեան կ'յանձնեն ինք-  
զինքնին : Եթէ հին ազգաց պատմու-  
թեան էջերը թղթատած էք , կը յիշէք  
անշուշտ թէ Հռոմայեցւոյ օրէնքներն  
այդ ամուսնութիւնները կ'արգիլէին ,  
և ամուսնութեան հասակի համար  
սահման մը որոշած էին , որոնք որ  
օրինազանց գտնուէին , երբեք չա-  
մուսնանալու կը դատապարտուէին :  
Փորձառութեան վրայ հիմնուած դի-  
տողութիւններն և խորհրդածութիւն-  
ները կը պահանջեն որ ամուսնու-  
թիւններն երկու տարբեր խառնու-  
ածքի [()] բաղադրութեամբ կատա-  
րուին , այսինքն մաղձտան աւշոտին  
և արիւնոտը ջղոտին հետ ամուսնա-

նան . փորձուած է որ այս բաղա-  
դրութեամբ եղած ամուսնութեանց  
որդիներն առոյգ , կայտառ առողջ  
կ'ըլլան . երկու նման խառնուածքի  
ամուսնութիւնները լաւ վախճան մը  
չեն ունենար : Ամուսնութեան համար  
նկատի առնելիք կարեւոր կէտ մ'ալ  
կայ , որ է երկու ամուսնոց ախտա-  
ւոր կամ հիւանդ վիճակը , որուն  
վրայ այնքան թեր ու դէմ կարծիք-  
ներ փոխանակեցին թերթերէ ոմանք :

Գրեթէ ամէն ամուսնացող այսօր  
մինակ հարստութիւն կը պահանջէ ,  
ու երբէք ուշադրութիւն կամ հոգ  
չընել կազմուածքի ախտերու և քիչ  
կամ շատ ծանր հիւանդութիւններու՝  
օրոնք , հարկ էր որ , ամուսնութեան  
աննուաճելի արգելքներ ըլլային .  
ընտրութիւնը թէ՛ բնական թէ՛ բա-  
րոյական կերպով առողջ եղող ան-  
ձանց վրայ ըլլալու է . փափաքելի է  
որ իմաստուն օրէնքներով արգիլ-  
ուէին հիւանդոտ , ժառանգական  
ծանր հիւանդութեան մը սերմերը  
կրող անձանց ամուսնութիւնները ,

որովհետեւ ասոնք ուրիշ բարիք մը չունին աշխարհին այլ միայն գձուձ, հիւանդոտ տղաքներ պարգեւել, ուրոնք նաեւ իրենց կարգին, վատթար ցեղ մը կը յարատեւեն :

Հարսնցու աղջիկի մը գէշ կազմութիւնն իր ամուսնութեանն արգելք ըլլալու է : Հետեւապէս այն ծնողքներն որք իրենց որդւոցը կազմութեան մէջ ժառանգական կամ ստացական ախտ մը կը տեսնեն, իրենց օգտին, կամ աւելի իրենց սերնդեան օգտին համար հմուտ բժիշկի մը դիմելու են : Սակայն դժբախտաբար շատ քիչ ծնողքներ կան որք այս կերպով կը վարուին, գրեթէ միշտ ընտանեաց ետութիւնը՝ կամ անձնական շահն է որ զիրենք սերնդեան և համայնքին վնասուց կը մղէ . մեք չենք վախնար այս խօսքն ըսելու . որովհետեւ ծնողք իրենց տղայոց երջանկութեանն և պատշաճ ամուսնութեանը վրայ հսկելու չափ իմաստութեամբ չեն վարուիր : Խիստ փափաքելի է որ հոգեւոր իշխանու-

թիւններն իրենց իրաւասութիւնը բանեցնեն այս մասին : Յրանկատաւոր մը, խոյլոտ մը, ուռականաւոր մը կամ ժառանգական ու երգէ ախտով վարակուող մը եթէ օրէնքի համեմատ, ամուսնութենէ բացէ ի բաց մերժուէր, մարդկային ցեղին կատարելագործութեան ճամբուն մէջ որքան մեծ քայլ մ'առած ըլլալու էր : Գիտենք որ այս տեսակ օրէնք ընդդիմութիւններ պիտի ունենայ և ասոր դէմ պիտի առարկեն որ այսպիսի օրէնսդրութիւն մը անհատական իրաւունքի դէմ է, բայց առարկութիւնը թէեւ հաւանեցուցիչ ալ ըլլայ, ըստ ինքեան կը մերժուի, երբ մէկ քանի անհատներու շահը ընկերութեան և ամբողջ համայնքի մը շահուն զոհուիմենք շատ լաւ համոզուած ենք թէ, մարդիկ այս գործողութեան բարի վախճանը պիտի ճանչնան մօտ ատեններն իսկ . ուստի այն օրէնքն որ բնական մարդուն և հետեւաբար բարոյական մարդուն կատարելագործութեան համար պիտի հաստատուի,

բարձր բարոյականութեան օրէնք մը  
եղած պիտի ըլլայ, մինչդեռ ասող-  
ջարանութեան, բնասօսութեան կամ  
կազմագիտութեան սկզբունքները չը  
պահող օրէնսդրութիւն մը ըստ ինք-  
եան տկար ու անկատար է միան-  
գամայն :

Կ. Տ. ԱԼԼԱՀՎԷՐՏԻ



# Բ Ժ Շ Կ Ա Կ Ա Ն

## 1. Տ Ն Ա Կ Ա Ն Դ Ե Ղ Ա Ր Ա Ն

Գլխու ցաւ . — Վարդի ջուր եւ ճերմակ քացախ մէկտեղ խառնէ , եւ օրը 2-4 անգամ մէջը լաթ մը թաթ- խէ եւ զլխուն ցաւած մասին վրայ դիր :

Այրուցք . — Կտաւը կաթի մէջ թաթխէ եւ առաւօտ եւ երեկոյ այ- րած տեղին վրայ դիր . 2-3 օրէն կ'անցնի :

Աչքի ցաւ . — Ո՛ր եւ է նիւթ երբ աչքիդ մէջ մնայ մի՛ շփեր , հապա մէկ ձեռքովդ վերի կափարիչը հնար եղածին չափ վեր բարձրացուր , միւս ձեռքովդ ալ վարի կափարիչը վեր տար , եւ յետոյ վերի կափարիչը վա- րինին վրայ անցուր , սովորաբար մէջի նիւթ կը հեռանայ : Ապակիի կտոր ուրիշի մը հանել տուր :

Հարբուխ . — Պաղ ջրով լողանք , հարբուխ , պաղառութիւն եւ թոքե- րու բորբոքում կ'արգիլէ . վարժուէ եւ զաւակներդ մանկութենէ վար- ժեցուր պաղ լողանքի :

Պաղ ոսք . — Անկողին մտնելէ ա- ռաջ ոտքերդ պաղ ջրով լուա եւ ա- պա հաստ հալջուռով մը ամուր չփէ :

Մեղուի խայք . — Ծխախոտի հիւթ ստոյգ դարման է — կ'ըսեն — մինչեւ իսկ եթէ վառած սիկառին թաց ծայ- րով խայթած քին վրայ ձնչես կանցնի իսկոյն :

Կայծ աչաց մեջ . — Պաղ ջրի մէջ թաթխուած լաթ դիր աչքիդ վրայ երբ կայծ ցատքէ . մի՛ շփեր բնաւ :

Ականջի աղս . — Եթէ չորնայ ա- կանջին մէջ եւ կարծրանայ աղտը , շարաթը անգամ մը ականջի դգալով պէտք է մաքրել , եթէ ոչ լսողու- թիւն կը դժուարի եւ ականջ կը

խուլնայ . լոյժ ազտը պէտք է ա-  
կանջին :

Ականջի խօսիլ . — Ասի կը պատ-  
ճառի ուղեղին մէջ մեծաքանակ ա-  
րիւն ֆաւաքուելէ . ուստի հարկ է  
արեան ուղղութիւն փոխել շացօղեայ  
տեղեր շրջելով , առատ ջուր խմելով ,  
եւ ստքեր պաղ ջրի մէջ դնելով :

Նասր . — Սոխը 3-4 ժամ քա-  
ցախի մէջ դիր , կեղուէ , կլոր մը  
կորէ , եւ նասրին վրայ կապէ .  
կրկնէ մի քանի անգամ եւ նասրին  
մաշկ զիւրաւ մը կը հանուի :

Կոկորդի ցաւ . — Քնայփ մեղր կը  
յանձնարարէ . ամէն օր դգալ մը մեղր  
եռացուր գաւաթ մը ջրի մէջ եւ օրը  
2-4 դգալ խմէ , թէյիդ մէջ ալ մեղր  
դիր :

Քոլիքա . — Առանց իւղի աղէկ ե-  
փած բրինձ , խորոված հաց եւ թէյ ,  
այս բլլայ միակ ուտելիք . լուծում  
անցնելէ ետեւ 2 օր ալ միայն այս

թող ուտէ , ջուր տրուելու չէ . ա-  
րաբիոյ խէժի ջուր ատեն ատեն թող  
խմէ , 4 տրամ խէժ 100 տրամ ջուրի  
մէջ լուծէ . սովորաբար 24 ժամէն  
ծարաւը կ'անցնի :

Երկու հոգի ձեռք . բազուկ , սրունք  
եւ ոտք շփելու են . տաք ջուրի շի-  
շեր անկողինի մէջ . զուտ բօւ կամ  
օղի , մէկ ապուրի դգալ 15 բոպէն  
անգամ մը , մինչեւ ներքին տաքու-  
թիւն սկսի , եթէ չտաքնայ կը մեռնի ,  
թէ լուծում ունենայ թէ չէ , Բժիշկը  
կանչէ մինչ ասոնք կ'ընես :

Կարմիր աչք . — Երբ հարուածով  
աչք կարմրի , տաք ջրի մէջ լաթ մը  
թաթխէ եւ վրան դիր . կրկնէ մինչեւ  
անցնի : Երբ աչքիդ մէջ կիր երթայ  
ջրախառն քացախով լուա :

Կսրուածք . — Սեւ պղպեղի փոշի  
առատ դիր կտրուածքին վրայ եւ  
կապէ :

Օձի խայք . — Սայթուած տեղին

վերի կողմը պինդ կապէ լաթով .  
ծծէ խայթած քր եւ թուք . եթէ բեր-  
նիդ մէջ բացուած վէրք չկայ . առք  
ջրով լուա խայթած քր եւ հեղուկ  
ամօնեաք դիր վրան , բժիշկ կանչէ :

Կոկորդի բորբոս . — Անձեռոց  
մը խիստ պաղ ջրի մէջ թաթխէ ,  
քամէ եւ վիզդ փաթթէ վրան մամ .  
լաթ — բարակ—մուշակապա — փաթթէ  
ստոր վրայէն ալ դատ անձեռոց մը ,  
եւ գիշերը այսպէս պտուկէ , ցաւ  
կ'անցնի եւ ուռը կ'իջնայ . հասարակ  
աղ պաղ ջուրի մէջ հալեցուր եւ կար-  
կարա ըրէ :

Վեքեք . — Կրակարականէն կտոր  
մը վառած ածուխ փոշի ըրէ եւ —  
հարկաւ պաղ — ցանէ վէրքին վրայ :

Անմաքսողութիւն . — Երախայները  
ստամոքսի թթուութիւն եւ անմաքսու-  
թիւն կունենան դաւաթ մը կաթի  
մէջ դիր 3-4 փոքր դգալ կիրի ջուր  
— դեղավաճառներն կը ծախեն —  
եւ ասով կերակրէ մանկիկը :

Հազ . Լայնաբերան անօթի մը  
մէջ լից 4 քաչ եւ 12 արամ նշա-  
սրբի ոգի . հազ ունեցողը թող անկո-  
ղին չմտած կանգնի այս անօթին  
քով , որոյ մէջ տաք աղիւս մը ձգե-  
լով շոգի մը կելլէ , թող շնչէ այս  
շոգին եւ էն խիստ հազն խակ կը  
բուժուի :

Տկաք բոք . — Որոյ թոքեր որ ակար  
են , թող ձայնական երաժշտութեան  
հետեւի աշխոյժիւ , առտու իրիկուն  
եկեղեցին ձայնաւորութիւն ընէ ,  
եթէ կ'ուզէք , որով թոքեր պիտի  
զօրանան :

Շուկե խաժուած . — Երկաթը կրակի  
նման տաքցուր եւ վէրքը այրէ շուա .  
եթէ ոչ խաժուողն ալ կատաղի կ'ըլ-  
լայ . յետոյ դիմել բժիշկի :

Շիլ աչք . — Առողջ աչքը կապէ  
եւ շիլ — շաշը — աչքը կ'ստիպուի  
ուզիդ տեսնել . կամ աժան ակնոց մը  
գնէ , ապակիներն հանէ եւ շիլ աչ-

քին վրայ գալիք ապակիին տեղ թի-  
թեղ մը անցուր որոյ մէջտեղը ծակ  
ըլլայ, ասիկա շարունակ թող գոր-  
ծածէ, շատ չիլ աչքեր այսպէս բուժ-  
ուած են :

Շնչարգելութիւն . — Լաւ մեղր 16  
տրամ եւ 8 տրամ հնդիկ իւղ մէկտեղ  
խառնէ . առտու երեկոյ փոքր դգալ  
մը կեր :

Յուրճե խայթուած . պառչիֆ . եթէ  
շուտ չանցնի, լուա սքիրքօի մէջ  
լուծուած ֆեաֆիրիով եւ վրան քար-  
իւղ եւ վազիլին դիր :

Կաթուածի եւ կուրծքի շնչարգե-  
լութեան իբր դարման Նուֆէլանա կը  
յանձնարարէ մանանէխի թուղթ . իբր  
անմիջական դարման, սր կեանք իսկ  
կ'ազատէ . նաեւ գլխու եւ ակոսայի  
ցաւի, գլխու պտոյտի ականջի խօ-  
սելու, զգայազրկութիւն, կուրծքի,  
ստամոքսի եւ կոնակի ցաւերու խիստ  
օգտակար է մանանէխի թուղթը :

Յօդակաթուածը դարմանելու եւ  
բժշկելու յարմար մէթօան է նախ  
զգուշանալ այնպիսի բաներէ որք ա-  
նոր ծագմանը կը սատարեն : Ուստի  
այս պատճառաւ սնունդի մասին  
ընդհանուր չափաւորութիւն մը ի գործ  
դնելով հանդերձ, պէտք է մասնա-  
ւորաբար հեռու կենալ շատ մսեղէն  
ուտելէ կամ բնասպիտաւոր կերա-  
կուրներէ : Հետեւաբար պէտք է ա-  
ւելի կանաչեղէնով, աղցանով, պտու-  
ղով եւ ասոնց նման բաներով սնու-  
նիլ : Ոգելից բ'պելի կարելի եղածին  
չափ քիչ գործածել : Զգուշանալու է  
շարունակ նստողական զբաղումէ եւ  
մտաւորական յոգնութիւն պատճառող  
գործերով զբաղելէ : Պէտք է ընդ-  
հատարար, բաց օդի մէջ շարժումներ  
ընել, մարմնական գործունէութիւն  
մ'ունենալ, Ասով մարսողութեան  
հիւթանջափումը կը դիւրանայ եւ  
մինչեւ մէկ աստիճան մզաթթուին  
բիւրեղացման առաջը կ'առնուի :  
Հեծելութիւնը, հեծանիւով արշա-  
ւելը, լեռնէ վեր ելելը, պարտէզի

մէջ հողի հետ աշխատելը . կամ մե-  
թոտաւոր մարմնամարզը պէտք է  
մարդուս առօրեայ զբաղմանց մէջ  
իրենց յատուկ ժամերն ունենան  
ընդհատարար . կաշեւոր — ալքալին  
— հանքաջուր խմելն ալ շատ օգտա-  
կար է , վասն զի ատիկա դիւրաւ կը  
լուծէ բիւրեղացած մրուրները : Այ-  
սու հանդերձ պէտք է որ այս տե-  
սակ դարմանումներ բժիշկի մը տուած  
հրահանգին համեմատ գործադրուին .  
վասն զի այն տաեան միայն կարելի  
կ'ըլլայ նպաստաւոր արդիւնք մը  
ձեռք բերել :

Հարրուխի եղանակին մէջ ամէն կող-  
մէ կը փոնգտան եւ կը հազան : Չզու-  
շութիւն գլխու հարրուխէն (coryza)  
որով կ'սկսի ցնցղատապը : Ժընէվցի Մ.  
Ա. Բիւնյա հեաեւեալ խառնուրդը կը  
յանձնարարէ իբրեւ ազդու՝ դեղ հար-  
րուխի . Բօքսինի քլօրաջրատ եւ  
մանեղոջ՝ հինգական կրամ , եւ վազէ-  
լինի իւղ՝ 100 կրամ : Այս դեղն որ  
ամէն 3 ժամ կրկնուելու է , ըստ հե-

զինակին շատ աւելի ազդեցիկ եւ  
տեւական է քան քօքսինի պարզ  
լուծաջուրը : Աւտօիկ ուրիշ պարզ  
դարմանում մը . — Ա. փին մէջ լեցր-  
նելու է ալքոլախառն մանեղոջի 10-20  
կաթիլ եւ երկարօրէն շնչելու է անկէ  
բխած գոլորշիները : Այս գործողու-  
թիւնը քանիցս կրկնելու է մէկ օր-  
ուան մէջ :

Պ Ա Ն Ս Ս Մ

- Ա. 5 տիրհէմ դարչին
- 5 » անխոն
- 5 » գարէնֆիլ
- 5 » դէնձէֆիլ

Ասոնք ամէնքն ալ սաճախ մէջ լաւ  
մը ձեծէ եւ փոշիացուր . յետոյ առ

- 5 տիրհէմ աֆիօն
- 5 » սարը սապրո
- 5 » զաֆրան

եւ ասոնք նաեւ վերի փոշիացու-  
ցածներդ . ամէնքը մէկտեղ 400 տիր-  
հէմ զուտ խաղողէ շինուած օղիի մէջ  
դնելով . շիշի մը մէջ լեցուր եւ մա-  
յիսի յունիսի տաք արեւին առեն-



ները , ամիս մը արեւին մէջ կախէ : Ամիսէ մը ետքը սքանչելի պալտամ մը կ'ունենաս :

### Պորժածութիւնը

1. Երբ պաղտութիւնով փորի սաստիկ ցաւ ունիս , վերոյիշեալ պալտամէն անուշի դգալ մը քիչ մը պարզ ջուրով խմէ , իսկոյն կը բժշկուիս :

2 Երբ պաղտութիւնով փորհարութիւն ունիս , անուշի դգալով առտու իրիկուն մէյմէկ դգալ աւնելով կը բժշկուիս :

3. Երբ դանակով ձեռքդ կտրուեցաւ , իսկոյն մաքուր լաթով մը կապէ եւ վրան պալտամ լեցուր առատօրէն մինչեւ որ վէրքին վրայի կապած լաթդ լաւ մը թրջի : Առաջին օրը 3 անգամ լաթին վրայ լեցունելով թրջէ . երկրորդ օրը երկու անգամ՝ առտու եւ իրիկուն նոյնպէս թրջէ . երրորդ չորրորդ օրերն ալ մէյմէկ անգամ թրջէ նոյնպէս : Հինգերորդ օրը լաթը քակած առենդ պիտի տեսնաս որ բլորովին բժշկուեալ է վէրքը :

4. Եթէ ակռադ ցաւի , բամբակի կտոր մը պալտամով թրջելով ցաւած ակռայիդ վրայ դիր , եթէ հարուխի պատճառաւ է , իսկոյն ցաւը կը կտրի :

5. Եթէ հիւանդ մը շարունակ մէկ կողմին վրայ պառկելով , ան կողմի մարմինը բացուեալ է , վրան դիր պալտամով թրջուած լաթ մը եւ բացուածքը կը բուժէ :

Աս եւ ասոր նման բաներու մէջ ընտանեկան լաւագոյն դեղ մ'է սոյն պալտամը եւ կարժէ որ ամէն տունի մէջ գտնուի :

ՄԻՀՐԱՆ



### 2. ՏՆԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ

#### Հիւանդին սեճեակը

1. Մութ , խաւար սենեակի մէջ մի զներ հիւանդը , լուսաւոր եւ զուարթ թոյ ըլլայ սենեակը եւ վառարան — սօպա — ունենայ , եթէ հնար է :

2. Եթէ հիւանդը ջերմ ունի , կամ աչքի , եւ ուղեղի եւ ուրիշ հանգիստի

կարօտ հիւանդութեամբ կր տառապի, տան աղմուկէ հեռի սենեակ մը յատկացուր հիւանդին, քանզի նա շուրջը դիտելու եւ խօսելու տրամագիր չէ, այլ հանգստեան է կարօտ :

3. Երբ սակայն արկածէ մը փնտսուած է հիւանդը, ընտանիքին մօտ սենեակ մը դիր, որ հնար ըլլայ հետը խօսակցիլ. որով նա զուարթութիւնը եւ մտքի հանգիստը կարենայ պահել եւ զուարճանալ, դիտելով շուրջի շարժումներ, իրենց գործով դբազողներ, եւ լսել անոնց խօսակցութիւն. դիւրին ալ կըլլայ պէտք եղած ծառայութիւն մատուցանել անոր :

4. Հիւանդին սենեակը գարշահոտ տեղերէ հեռու պէտք է ըլլայ :

5. Պատուհանները դիւրաւ բացուելու են. շատ կարասի մի՛ դներ հիւանդին սենեակին մէջ, մանաւանդ երբ փոխանցիկ է հիւանդութիւնը, յիշէ որ բրդեղէնները աւելի երկար կը պահեն ո՛ր եւ է հոտ քան բամպակեղէնները, ուստի բրդէ վարագոյրներու պէտք չկայ, լաւագոյն է հիւան-

դին սենեակը ընաւ վարագոյր չդնել, սակայն երբ չես ուզեր սենեակը մերկ, լերկ եւ անպաճոյճ թողուլ բարակ նիւթէ եւ բամպակէ վարագոյրներ դիր, որք կրնան դիւրաւ լուացուիլ :

6. Նաեւ բրդէ ծածկոցներով բազմոցներու եւ աթոռներու պէտք չկայ հիւանդին սենեակին մէջ, փայտէ կահ կարասիք եւ խփրէ աթոռներ լաւագոյն են. մաքուր տախտակամած աւելի լաւ է քան գորգ, միայն անցքին մասը նեղ գորգ մը կրնաս դնել անցուղարձի ատեն ոտքով աղմուկ չպատճառելու համար :

7. Արկածեայ հիւանդին անկողինը սենեակին այն կողմը պատրաստէ ուր ամէնէն աւելի հանգիստ կրնայ ընել, ընտրէ էն լուսաւոր կողմը վէրքը լաւ քննելու, դարմանելու եւ կապելու համար : Ծաղկախոտ ունեցողը դրան եւ կրակարանին մէջտեղ պառկեցուր պատճառը այս է. կրակը առանց օդի չկրնար վառիլ, օդի հոսանքի պէտք ունի, տաքութեան ծխնելոյզէն վեր

ելած ատեն դրան եւ պատուհանին միջոցով օդի հոսանք կը գոյանայ, որով ծխնելոյզը ապականեալ օդը մաքրելու միջոց կ'ըլլայ, ասով ալ հիւանդութեան ծաւալումը կ'արգիլուի:

8. Յայտնի է որ երբ մէկը հիւանդին եւ կրակարանին մէջտեղ կենայ, կողոզուի հիւանդին արձակած վարակիչ նիւթով, մինչ երբ նա դրան եւ հիւանդին մէջտեղը կենայ թարմ օդի հոսանք վարակիչ նիւթ դէպի կրակարան կը մղէ:

9. Երբ սենեակը դեռ չէ գործածուած, նախ կրակ վառէ հոն եւ ապա հիւանդը հոն փոխադրէ, ասով խոնաւութիւն կ'անհետանայ: Մերուկ մը կուրծքի հիւանդութենէ բռնուեցաւ, անկողին դրին եւ կուրծքին վրայ խարան — եագը — փակցուցին, եւ թողուցին որ քրանի Չմրան սկիզբն ըլլալով կրակի պէտք կար: Վառարանը վառած ատեննին սենեակը մուխով լեցուեցաւ. խեղճ հիւանդը արդէն գժուարաւ կը շնչէր, ծուխն

ալ միանալով խիտ ցաւալի վիճակի վերածուեցաւ. հարկ եղաւ դուռ եւ պատուհան բանալ. ծխնելոյզէն ծածեռնիկ մը լողորովին մրտած վարինկաւ եւ սկսաւ սենեակին մէջ թռչալ, պատերը սեւցնելով: Այս անպատեհութիւններ կ'արգիլուէին եթէ հիւանդը դեռ հոն չփոխադրած վառարանը կրակէին:

10. Երբ ծխնելոյզը ծուխը չքաշեր, լրացիր մը վառէ եւ մէջը բռնէ, ասով օդը կը տաքնայ եւ ծուխը վեր կ'ելլէ:

### ԱՆԿԿՈՂԻՆ

11. Էն լաւ անկողինը մազէ շինուածն է. սուղ ըլլալուն համար ամէն մարդ չէ կարող գնել. փետուրէ անկողին բնաւ մի' գործածեր, հիւանդը մէջ կը թաղուի եւ վէրք անհնար կ'ըլլայ պէտք եղածին պէս դարմանել: Նաեւ երբ փետուրները թրջին, անկողինը չէ հնար շտկել: Բարակ չոր խոտէ անկողին շատ աւելի լաւ է. նախ որ սուղ չէ, եւ ապա առողջապահիկ տլ է, եւ սա

առաւելութիւնը ունի, որ եթէ աւ-  
րուի կրնաս պարպել, ծածկոցը լուալ  
և նորէն լեցնել նոր բարակ չոր խոտով  
աննշան ծախք մը լնելով միայն :

12 Շատ լայն անկողին աննպաստ  
է հիւանդին : քանզի երբ մէջտեղը  
պառկելու ըլլայ եւ պէտք մ'ունենայ,  
հիւանդապահը կամ անկողինին վրայ  
ելլելու է եւ կամ բոլոր մարմնով  
վրան երկննալու է, որով շատ յոգ-  
նեցուցիչ կ'ըլլայ ծառայել հիւանդին :  
Եթէ ուրիշ անկողին չունիս մէջտեղ  
տախտակ մը դիր վրան ծածկէ եւ  
թող հիւանդը ասոր միայն մէկ կողմը  
գործածէ, ասով մէկ անկողին եր-  
կուքի բաժնած կ'ըլլաս :

13. Անկողինի սաւաններ փոխել  
ուզած ատենդ, երբ հիւանդը անկա-  
րող է ելլել, սա'պէս ըրէ. — փոխելի  
սաւանները մինչեւ անկողինին կէսը  
ուրիշ, նոր սաւանը, կէս ուրիշ, և  
սաւանց սաւանի եղած տեղը տարածէ,  
և հիւանդը նոր տարածած սաւանին  
վրայ սահեցուր, մնացեալ մասը վեր-  
ցուր եւ նորը տարածէ անոր տեղ :

14. Հիւանդը անկողին չդրած  
լաւ է տախտակամածը լաւ մը սրբել  
տաք ջրի մէջ կիրի քլոր խառնելով :  
Եթէ այս չես կրնար գտնել, կտոր  
մը չմարած կիր ալ ջուրին մէջ գնե-  
լով նոյն գործ կը տեսնէ : Եթէ ճեղ-  
քերուն մէջ կիր մնայ մի հաներ,  
մանրէները կը ջնջուին եւ անուշ եւ  
հաճելի հոտ մը կարճակէ կիրը, եւ  
փոխանցման արգելք կ'ըլլայ : Սեն-  
եակը սրբելէ ետեւ լաւ մը չորցուր,  
կրակարանը վառէ եւ յայնժամ սեն-  
եակը պատրաստէ հիւանդին համար :  
(Շար. զալ տարի)

3. ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆ  
ՄԱՋ, ԵՂՈՒՆԳ ԵՒ ԱԿՈՒՆԵՐ

Մ Ա 2

Առողջարար է

1. Օրը երկու անգամ գլուխը  
սանտրել փոքր ինչ ձէթով գլխուն  
մորթը չփելով :
2. Ամէն 4—6 շաբաթ մի անգամ

մազերը կտրել, որով անոնց աճում  
յառաջ կը մղուի :

3. Հնար եղածին չափ գլուխը քիչ  
իւղոտել, օժանելիքն ալ ասինն մէջ  
պէտք է հալեցնել եւ քսելէ ետեւ  
վրձինով բոլոր մազերուն հաւասար  
ապէս բաժնել զայն :

4. Ետքաթը մէկ անգամ մաքրել  
գլուխը էն լաւ կերպն է հաւկիթի  
դեղնուցը ջրով խառնել եւ մազերուն  
եւ գլխուն մորթին քսել շփելով,  
ասով ոչ թէ միայն ազտ եւ փոշի կը  
հեռանայ մորթին ծակտիքներէն, այլ  
գլխի թեփերն ալ կը ջնջուին եւ մոր-  
թին արտաշնչութիւնը կը կանոնաւորի :

5. Տղոց մազերը կարճ կտրել եւ  
չարաթը մէկ անգամ թէփի կամ օ-  
ճառի ջրով լրուալ :

6. Թողալ որ մօրուքը երկնայ,  
որով պաղառութիւնը կարգիւղի .  
պէխերն ալ շնչուած օդը կը տաքըր-  
նեն եւ թոքերուն տեսակ մը օդի  
մեղմացուցիչ կ'ըլլան . ակռայի ցաւի  
եւ կոկորդի բորբոքման ալ արգելիչ  
են դէմքի մազերը :

### Ս. պառօզ է

1. Չափէն աւելի իւղոտել մազերը,  
քանզի մորթը չձծեր խզը եւ մակե-  
րեսին վրայ մնալով կը ծթի, ասով  
մազերուն աճումը կը խանգարուի :

2. Թանձր է շատ մեղրամով պա-  
րունակող օժանելիք գործածել, մա-  
զերը թանձր եւ կպչուն կ'ըլլան :

3. Գլխուն մազերը պինդ կապել,  
ասով մազերուն աճումը կ'արգիւղի  
եւ գլխու ցաւ կը պատճառի :

4. Ուրիշին սանտրը եւ վրձինը  
գործածել, չափահասներ եւ փոքրեր  
իրենց սեփական սանտրը ունենալու  
են. որքան ուշադիր ըլլանք այս կէ-  
տիս այնքան լաւ ըրած կ'ըլլանք :

5. Բուռն կերպով սանտրել եւ  
վրձինել, քաշելով եւ ցնցելով, մեղմ  
կրկնումներով եղած արգելքներն  
վերցնելու է. մազը որքան թոյլ  
ձգուի, այնքան լաւ է. գոնէ գիշեր-  
ները պէտք է ազատ ձգել մազերը :

6. Մետաղէ սանտր կամ վրձին  
գործածել, ազտ եւ փոշի ասոնցմով

չենք կրնար կատարել ապէս հեռայնել կը ժանգոտին ալ եւ վատ հետեւանք կ'ուենենան :

7. Մազ բերող զեղեր եւ ներկեր գործածել . ասոնց հասուցած վնասը խիստ ծանրակշիռ է . ինչպէս դէմքի հաւար գործածուած ներկեր եւ փոշիներ : Մազի հիւանդութիւնն այլ հիւանդութեանց նման բժիշկի պէտք ունի :

Ե Ղ Ո Ւ Ն Գ

Առողջարար է

1. Զեռքերու եւ ոտքերու եղունգները միշտ մատերուն ծայրերուն հաւասար պահել ոչ ծայրէն ներս եւ ոչ ալ դուրս :

2. Եղունգին տակի հաւաքուած աղտը . ձեռք լուացած ատեն . վրրձինով մաքրել եւ կամ փութ ծայրով փայտով մը :

3. Եղունգին արմատին վրայ ծալլուող մորթը միշտ փթամատի եղունգով ետ մղել :

4. Ոտքին փթամատին եղունգը այնպէս կտրել որ կարճանայ բայց չնեղնայ . ձեռքի մատերուն եղունգներն ալ այսպէս կտրելով ձեռք հետըզհետէ բարեձեւ կ'ըլլայ :

Ապառողջ է

1. Եղունգը ծամել , ասով մատին ծայրերը անպաշտպան մնալով կ'սկսին կարճանալ եւ ուռիլ . այս սովորութիւն գարշելի եւ վնասակար ալ է . քանզի թունաւոր մուտք կը գտնան մատներուն մէջ եւ բորբոքում եւ ուռեցքներ կը պատճառեն :

2. Եղունգներն չափազանց կարճ կտրել , քանզի մատները յայնժամ անկարող կ'ըլլան իրենց պաշտօն ճշդիւ կատարել եւ չեն կրնար բռնել եւ գործել ինչպէս պէտք է :

3. Եղունգներուն արմատին մօտ բուսած փոքրիկ մորթեր քաշել փրցրնել . ասով հետզհետէ վէրքեր յառաջ կուգան :

4. Ոտքին բթամատի եղունգ մրկաւորով կամ զմեկինով կրճատել եւ

ծայրերը կտրել, եթէ այսպէս ընենք եղունգ մօրթին մէջ կը թողուի. եւ ցաւի եւ վէրքի պատճառ կ'ըլլայ. բթամատն ճնշող կօշիկներէն զգոյշ կեցէք :

**ԱՎՈՒՆԵՐ**

**Առողջարար է**

1. Ամէն կերակուրէ ետեւ քաղջ ջրով բերանը ցօղուել, մաքրութեամբ միայն ակռաներուն շուրջի քարի գոյացում կ'արգիլենք :

2. Ակռաները առտու եւ երեկոյ կարծր վրձինով մաքրել, եթէ կ'ուզէք. ջուրին մէջ քանի մը կաթիլ քրոնեայի ջուր, սրիթթօ կամ նանէի ոգի կաթեցնելով :

3. Ակռաներուն ներսը, գուրսը եւ վրան մաքրել

4. Վրձինը ակռային արմատէն դէպի պսակը — գլուխը — շարժել եւ ոչ թէ աջէն ձախ, ինչպէս կ'ընենք սովորաբար, առաջին կերպով միայն ակռաներուն մէջի կերա-

կուրի մնացորդներն կը հեռացուին :

5. Ակռաներուն մէջաեզերը ամէն կերակուրէ ետեւ բթածայր կակուղ փայտով մը մաքրել :

6. Ծամել, այս է ակռաներուն պաշտօնը, ուստի կարծր հացի կտորներ ծամէ, որ զօրանայ ակռային ծամելու զօրութիւնը :

7. Մաքրութեան խնամ տանիլ ի մանկութենէ, տղայք մաքուր կտաւով կամ սպունգի կտորով թող մաքրեն ակռաներին : Ապա կակուղ վրձինով :

**Ապառողջ է**

1. Ակռաները իրենց կարողութենէ աւելի գործածել. կուտ, ընկոյզ եւլն. կտրելով. աստնք կը չլաստեն շուտ ակռաներուն :

2. Չափազանց տաք ուտելիք եւ խմելիք, ակռաներն շուտ կը ճաթեցնենք ասանկ ընելով :

3. Կերակուրի կտորներ ակռաներուն մէջ թողուլ, ասով թթու կը գոյանայ եւ ակռայներն կ'աւրէ, ա-

նուշեղէն եւ կարկանդակ խիստ վնասակար են երբ ակօսներուն վրայ եւ մէջտեղ մնան . քանզի լորձուքին հետ միանալով թթու կը կազմեն :

4. Չափազանց կակուղ եւ չափէ աւելի կարծր վրձին , առաջիններն պէտք եղածին պէս չեն մաքրեր . վերջիններն կը վնասեն ակօսին միտին եւ ակօսներուն կիտուածքը — սըր — կը ճաթեցնեն :

5. Փոշի գործածել , մաքուր օճառ էն լաւն է :

6. Ակօսի ջուրեր գործածել , զգոյշ եղիր , առամնարոյթին դիմէ եւ անոր խրատին հետեւէ :

Քանի կը պակսին ամուսնութիւնները , ա՛յնքան աւելնալու վրայ են ապօրէն կենակցութիւնք : Գաղիական ընտանեկան ազատամտութիւնն այնպէս մը փոխակերպելու վրայ է մեր մէջ երբեմնի ընտանեկան բարքերն որ այժմ ամենեւին ամօթ չի համարուիր ո՛ր եւ է մէկու մը համար ազատ կենակցութիւնը : Կան ոմանք

որ իրենց հոմանիւները մինչեւ անգամ պատուաւոր ընկերութեանց երեկոյթներու ալ սկսած են տանիլ , ե ո՛չ ոք անպատշաճ կ'զտնէ ասիկա : Ոմանք ապօրէն զաւակներ կ'ունենան եւ կը մեծցնեն , մինչդեռ մեծամասնութիւնը կ'զգուշանայ աղէէ , կանանց վրայ այրերէն աւելի քիչ մը ամօթի զգացում մնացած ըլլալուն համար : Բայց այս կերպով ալ ապագայ սերունդը կը փճանայ , ցեղին շարունակութիւնը կը ջնջուի , անճիտութիւնը կուգայ : Մենք դատապարտելէ աւելի այդ անճինքը , որ ամուսնանալու նիւթական եւ բարոյական կարողութիւնն ունենալով հանդերձ ապօրէն կենակցութեամբ ժամանակ կ'անցնեն , կուզէինք որ հրապարակաւ ջատագուէին , արդարացնէին իրենց ընթացքը : Ասոնց մէջ խոհական , փորձ , ուսեալ մարդիկ կան . մեր ամուսնական արդի պայմաններուն խստութեանը պատճառաւ է որ հեռու կը փախին ընտանեկան կեանքէ , ե կամ երիտա




սարդութիւննին ապօրէն կենակցութեամբ անցնելէ յետոյ, վերջին պահուն կը մտաբերեն սրբազործել ապարդիւն միութիւն մը . թող բանիւ և գրով պահանջեն, ազդեցութիւննին ի գործ դնեն բարեփոխելու և թեթեւցնելու անոր ծանր լուծը, ոչ միայն ամուսնալուծումը վեղարաւորաց քմահաճոյքին չենթարկելով, այլ օրէնքի կարգ անցնելով, այլ և ի հարկին բնաւորութեանց անյարմարութիւնն ալ ամուսնալուծութեան պատճառներուն մէջ դրնելով : Միւս կողմէ, կարծեմ լաւ կ'ընենք եթէ քիչ մը խստապահանջ ըլլանք ազգային պաշտօններու գրութեանց անցած անձերու ընտանեկան բարոյականին մասին : Չեմ ըսեր թէ Յարութիւն Պատրիարքի օրով եղածին պէս մինչեւ ակնարեւա կարդալու երևենք այդպիսեաց դէմ, որք արդարացի պատճառ ալ կրնան ունեցած ըլլալ իրենց ապօրինութեան, բայց գոնէ իրր բարոյական պատիժ, ազգային — եկեղեցական պաշտօններու

չկոչենք զանոնք անխտիր, չքաջաւերենք մեղկ, շուայտ կենցաղը, չը մեծարենք ապօրէն կենակցութեամբ ժամանակ անցընողները : Հաւատանքնութիւն չէ ասիկա, այլ բարոյաֆննութիւն, որ Անգլիոյ և Ամերիկայի նման առաջնակարգ երկիրներու մէջ իսկ կայ : Կը յիշուի թէ անգամ մը Անգլիոյ Խորհրդարանին մէջ աթոռը կորսնցուց, խաղք խայտառակ եղաւ նշանաւոր անձնաւորութիւն մը, իր մէկ խառնագնացութեանն համար :

Ազգի մը հիմն ընտանիքն է : Այսչափ դարերէ ի վեր, Հին Յունաստանէն մինչեւ մեր օրերը, ուր այլ և այլ իմաստասէրք այլ և այլ գաղափարներ մէջտեղ նետած են կանանց հանրականութեան և ըն . վրայ, չէ՛ եղած ազգ մը, ժողովուրդ մը, որ անպայման, ազատ կենակցութեան դրութիւնն ընդունած և կարող եղած ըլլայ այդու իր գոյութիւնը պահպանելու : Յոփութեան, շուայտութեան, զեղծմանց մէջ ինտողնե-

ըր, օրինակի համար Հոռվմայեցիք,  
կործաներ գացեր են : Մարդ արա-  
րածին սերունդը, յես ծննդեան,  
բազում ինամքներու կը կարօտի .  
այր և կնոջ փոխադարձ պարտաւո-  
րութեանց հիման վրայ միայն կարե-  
լի է ապահովել սերունդին բարոյա-  
կան և ֆիզիքական զարգացումն և  
տեւականութիւնը : Ուրեմն կ'արժէ  
որ ա'լ քիչ մը պարսաւենք զանոնք  
որ չար օրինակ կ'ըլլան ուրիշներուն  
ալ՝ իրենց ընտանեկան ապօրէն, և-  
սասիրական կենցաղովը . կ'արժէ որ  
միջոցներ խորհինք և գրենք ալ մեր  
բարոյական անկման ընթացքը կա-  
սեցնելու համար, ամուրիներն յար-  
մար ամուսնութեանց և ոչ թէ բա-  
ցարձակ ժուժկալութեան տանջան-  
քին յորդերելով, և Դպրեվանքն Ըն-  
ծայարանի փոխելով, և ամուրի կղե-  
րին ալ ամուսնանալու թոյլտուու-  
թիւն ընելով :

ՀՈՐՈՅ



# ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ

## 1. «Ի՛նչ ՊԷՏՔ Է ԸՆԵՆ ՄԵՐ ԱՂՋԻԿՆԵՐԸ»

Ամերիկեան թերթ մը իր բաժանորդներուն մէջ մրցման կը դնէ հետեւեալ նիւթը. «Ի՛նչ պէտք է ընենք մեր աղջիկները» բազմաթիւ մրցողներու մէջէն ստորե գրուած պատասխանը կ'ստանայ մրցանակը : Ի՛նչ պիտի ընենք մեր աղջիկները : — Նախ , կորովի և ողջամիտ քրիստոնեաներ , յետոյ տուէք անոնց տարական լաւ դաստիարակութիւն մը : Սորվեցուցէք անոնց աղէկ կերակուր պատրաստելը , ճերմակեղէն լուալը , արդուկելը , գուլպաներ կարկտելը , կոճակներ կարելը , չապիկ շինելն և իրենց բոլոր զգեստները ձեւել : Թող գիտնան տան հաց եփելն և յիշեն թէ՛ լաւ ու մաքուր խոհարարութիւնը բժիշկի և դեղարանի ծախքերը կը

պակսեցնէ : Ըսէք իրենց թէ մէծիտիէն 20 զրշ.է. և ոսկին հարիւր ութ զրշ. կ'արժէ , և խնայողութիւն ընելու համար պէտք է պակաս ծախսել . թէ՛ եկամուտէն աւելի ծախսողն անպայման պէտք է սպասէ թշուառութեան :

Հասկցուցէք իրենց թէ՛ վճարուած բամբակէ զգեստ մը՝ աւելի կը վայելէ , քան պարտքով գնուած մետաքսէ յըջազգեստը : Թող կանուխէն՝ պզտիկուց՝ գնել և իրենց ծախսերու հաշիւը բռնել գիտնան : Կրկնեցէք իրենց միշտ թէ թեւերը բաց և զոգնոցաւոր համեստ գործաւոր մը , նոյն իսկ փարա մ'ալ չունենայ , հարիւր անգամ աւելի յարգելի է քան տասնեակ երիտասարդ շքեղազգեստ , սնապարծ , և պակասամիտները , որք գրէթէ միշտ ապականուածներ են և իրենց ներքին փտութիւնը կը ծածկեն արտաքին վայելչութիւններու ներքե : Սորվեցուցէք իրենց՝ պարտէզի մշակութիւնն և ծաղիկները տիրելը : Ասկէց ետքը ,

եթէ միջոցնիդ կը ներէ, դաշնակի  
 և գծագրութեան դասեր ալ տուէք:  
 Գիտցէք որ այս արուեստները բոլո-  
 րովին երկրորդական են կեանքի  
 մէջ և զայն երջանկացնելու համար  
 շատ քիչ տեղ կը բռնեն: Մանա-  
 ւանդ թող սորովին արհամարհել սը-  
 նոտի երեւոյթները, իրենց «այո»ն  
 ըլլայ այո, և «ոչ»ն ոչ: Երբ իրենց  
 ամուսնութեան ժամանակը գայ. հա-  
 մոզեցէք զիրենք, որ երջանկու-  
 թիւնը կախում ունի ամուսնուն բա-  
 րոյական նկարագրէն և լաւ յատ-  
 կութիւններէն չէ թէ անոր հարս-  
 տութենէն կամ փայլուն գիրքէն:  
 Եթէ այս բոլորը դուք կշռեցիք և  
 անոնք ձեր խօսքերը հասկցան, վըս-  
 տահ եղէք որ ձեր ազջիկներն եր-  
 ջանիկ պիտի ըլլան և իրենց ճամբան  
 պիտի գտնեն: (ԳՈՒԹԱՆ)

2. ԴԱՍԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ

«Պէտք է առաջուց խնամով պատ-  
 րաստել աւանդելի դասը: Ամէն ան-

գամ որ դասն ափ յափոյ աւանդել  
 ուզենք, պիտի աւելարանենք, էա-  
 կանը աչքէ պիտի կորսնցնենք, պի-  
 տի յոգնինք, նպատակին չպիտի  
 հասնինք: Որպէսզի դասն իր նպատա-  
 կին հասնի, պէտք է առաջուց խորնիլ  
 անոր վրայ, պէտք է ընտրել, հան-  
 դարտ մտք և գրիչ ի ձեռին, այն  
 գլխաւոր գաղափարներն որոց վրայ  
 պիտի ծանրանանք: Պարզենք ուս-  
 մունքը, զգուշանանք ֆոսղներէ,  
 մեր մեծագոյն թշնամիներն են ա-  
 նոնք: Բացի ընթերցանութեան դա-  
 սէն, ուրիշ դասի ատեն գիրք մի՛  
 գործածէք, դաստիարակներ, և ոչ  
 ալ գործածել տուէք ձեր աշակերտ-  
 ներուն, հակառակ պարագային,  
 դո՛ւ, դաստիարակ, գիրքին բան-  
 տարկեալն ես և ոչ վարժապետ, իսկ  
 աշակերտները, ոչ թէ քու, այլ  
 գրքին աշակերտներն են: Ուսուցիչ  
 և աշակերտ իրարու երես պէտք է  
 նային, ամբողջ դասին միջոցին,  
 իրենց աչքերը կ'անցնի տեսակ մը  
 հոսանք որ ուսուցիչն և աշակերտ-

ներն իրարու կը զուգէ, եթէ այս հոսանքը դադրի, դասն ալ դադրած է: Դասէն ետքն է որ աշակերտները պէտք է բանան իրենց գիրքը առջի օրուան դասին վրայէն անցնելու համար. և դաստիարակը պէտք է բանայ գիրքը՝ յաջորդ օրուան դասը պատրաստելու համար: — Վարդապետական եղանակաւ մը մի՛ դասախօսէք: Խօսակցեցէք ձեր աշակերտներուն հետ ընտանեքար, առանց լաւակնութեան, կարելի եղածին չափ պարզ և յստակ կերպով. խօսակցեցէք մեզմ' չեչտով և այնպիսի եղանակաւ որ ձեր աշակերտներն իրենց համարձակութիւնը չկորսնցնեն և հարցումներ ուղղեն ձեզ կամ պատասխանեն ձեր հարցմանց, որովհետեւ անհրաժեշտ է որ ձեր աշակերտները խօսին, եթէ լուռ ու մունջ մնան, ձեր դասն ապարդիւն է, պէտք է անոնց միտքը գործէ, որպէս զի օգուտ քաղեն դասէն, իւրացնեն զայն, կարեւորը դաստիարակին ըրածը չէ, այլ ընել տուածն

է: Հարցուցէք, հարցաքննեցէք. ապահով եղէք թէ ձեր դասախօսութիւնը կը հասնի իր նպատակին: Կաւիճ և զբատախտակ գործածեցէք ձեր բոլոր դասախօսութեանց համար. գրատախտակն անհրաժեշտ գործի մըն է հաւաքական դասախօսութեան համար: Երբ աշակերտներն հասկցած են ձեր բացատրութիւնները. կրկնել տուէք զանոնք աշակերտաց:

Յ. Թ. ՀԻՆՂԼՆԱՆ

3. ՉԲՕՍԱՆՔ

1. Զբօսանքը միայն ֆիզիքական օգտակարութիւն չէ՝ որ կ'ընծայէ մանուկին, կը մարզէ նաև սնորհ զգայարանները, կը զուարթացնէ միտքը, այսպէս կ'ազդուրէ զայն, կը պարգեւէ բարոյական ինչ յատկութիւններ, համարձակութիւն, արթնամտութիւն, եւլն:
2. Զբօսանքը կատարուելու է այնպիսի խաղերով ու մարզանքներով որոնք հաճելի ըլլան մանուկին.

ըստ այսմ, պէտք է որ դաստիարակը սովորի, ուսումնասիրէ զանազան խաղեր՝ ի հարկին առաջնորդելու համար իր սանիկները լաւագոյն զբօսանքի. նոյն իսկ երբեմն մասնակցելով անոնց խաղերուն :

3. Իբր զբօսանք շատ շահեկան կրնան ըլլալ դպրոցական պտոյտներն որք, ռեսուցչաց առաջնորդութեամբ, կը կատարուին դաշտերու, գիւղերու կամ քաղաքներու մէջ՝ զանազան զննութիւններ կամ ուսումնասիրութիւններ կատարելու դիտումով, ուստի եւ, այս կարգի պտոյտներ կազմակերպելու մասին ձեռներէց ու ջանադիր ըլլալու է վարժարանը :

4. Զբօսանքի ժամուն, դաստիարակն աչքին տակն ամփոփ ունենալու է իր սանիկներն և արթուն կերպով հսկելու է անոնց վրայ՝ նախատեսելով վտանգն և արգիլելով սմէն ծայրայեղութիւն :

5. Ծաչէն անմիջապէս յետոյ ներելու չէ մանուկին կատարել մարմ-

նական բռուն շարժումներ, որոնք պիտի մեծաւին անոր մարսուլութեանն և առաջ պիտի բերէին արիւնի համախոնում ուղեղին մէջ կամ արիւնահոսում քթէ :

6. Նկատելով որ ամէն տղայ իր հասակակիցը կը փնտռէ և անոր խաղակցութենէն միայն հաճոյք կ'զգայ մէն մի դասարանի տղաքն առանձին շրջանակներու մէջ պէտք է զբօսցունել և ոչ թէ ամէնը խուռնամբոյս :

7. Ուստի զբօսատեղին ըլլալու է բաւական ընդարձակ և նպատակայարմար. մէն մի տղու հաշուոյն ունենալով առնուազն 5 քառակուսի մէդր տեղ :

8. Զբօսանքի ժամուն ներելու չէ աչակերտաց զբաղիլ ո' և է սերտողութիւնով, ոչ միայն անոր համար որ զբօսանքն իր նպատակին միայն յատկանալու է, այլ որպէս զի սերտողութեանց ժամերուն աչակերտն ունենայ զբաղում և անկտրգութիւն չյարուցանէ դասարանին մէջ :

Պրսկիւսա հին Ատտիկէի աւազակ մըն էր , որ ուղեւորները կողոպտելէ գոհ չըլլալով , զանոնք երկաթէ մահճակալի մը վրայ կը պառկեցնէր , և եթէ սրունքները մահճակալէն դուրս մնային , կը կտրէր այդ դուրս մնացած մասը , իսկ եթէ կարճ գային , այն ատեն ալ զանոնք չուաններով քաշել կուտար , մինչեւ որ անկողնին երկայնութեանը հասնին : Այս աւազակը սպաննուեցաւ Թէսէոսի կողմէ որ մի և նոյն չարչարանքին ենթարկեց զինքը : Շատ գեղեցիկ և ի դէպ է այս նմանութիւնը՝ դպրոցական տղոց համար , որոնք մի և նոյն նախնական դիտելիքները միայն կ'ըստանան , բայց դպրոցէն ետքը ամէն բան կը պահանջուի իրենցմէ :

Եագօպ Թրէպօնիոս ուսուցիչը դասարան մտած ատեն զլիարկը կը հանէր , և աշակերտները խոնարհութեամբ կը բարեւէր : Հարցուցին պատճառն այս իր արտակարգ սովորութեան : Ո՛վ գիտէ , պատասխա-


նեց ուսուցիչը , ո՛վ գիտէ թէ որ մը ասոնցմէ ի՞նչ մեծ մարդիկ յառաջ պիտի գան : Եւ յիրաւի այնպէս ալ եղաւ . քանզի Լուտէր այն աշակերտներուն մէկն էր :

Z U R S U R A N

Տիկ. Ս. Եթէ կերակուրի մէջ չափէն աւելի աղ դրուած ըլլայ մի՛ խռովիր , մաքուր կտաւ մը տարածէ անօթին վրայ , եւ լաթին վրան փ մը աղ ցանէ , այս աղ կերակուրին աղը իրեն կը քաշէ :

Օր. Զ. Մելանի բիծը ճերմակեղէնէն կրնաս հանել լէմոնի հիւթով , երբ բիծը անհետանայ լաթը պաղ ջրով լուա՛ :

Մայր . Հոգ մի՛ ըներ , նորածիններուն մազեր սովորաբար 3 ամիսէն կը թափին եւ նոր մազ կը բուսնի , առաջին տարուան վերջերը մազերը



կը թխանան, ուստի մանկիկիդ մազերը թէ նորէն կը բուսնին եւ թէ տգեղ գոյնն ալ կը փոխուի :

**Օր. Վ.** Մազերն երբ ծայրերէն ճեղքուիլ կ'սկսին, նշան է թէ գրխուդ մորթը պէտք եղածէն աւելի չորցեր է որով մազերուն սնունդ պակասած է, ճեղքուած մազերը ճեղքէն վեր կտրէ եւ գլուխդ խնամէ, մաքուր պահէ :

**Մ. Յ.** Այդ ալիք ալ կ'անցնի, յիշէ այս երգ, «Նա որ անշուք, փշոտ տունկէն հիանալի վարդ դուրս բերէ Նա եւս անշուշտ քու դառն վիշտէն քեզի օգուտ պիտի հանէ» :

**Ք. Ս.** Ստամոքսի հիւանդութեանց օգտակար է տաք ջուրի մէջ թաթխած խաւու մը դնել ստամոքսին վրայ, միշտ կրկնելով. ձերը կարծեմ ճարտար բժիշկի մը խնամքին է կարօտ :

**Ա. Ա.** Խնձորներդ փտաելէ ապահով պահելու ամենալաւ եւ փորձրած միջոցն է, անոնցմէ գոնէ մաս մը, որ ամենայն իրիկել, վստահ եղիր որ անոնք հոն բնաւ չեն փտտիր :



ասկէ զատ մանկական ջերմ՝ մազ-  
թանքներ կը տեղան վրագ, փորձէ  
եւ չես զղջար :

Օր. Է. Ս Յոյներն եւ Հոովմայե-  
ցիք մազերուն թափիլը սոխով կ'ար-  
գիլէին, ճեղքէ հիւթեղ սոխ մը եւ  
կնտակ տեղերը չփէ ատով, փորձեր  
ենք մենք ալ մեր սանուհիներուն  
վրայ եւ յաջողած :

Լ. Կ. Քիթէն վազող արիւնը կըր-  
նաս դադրեցնել սոխին հիւթը լաւ  
քացախի հետ խառնելով եւ քիթդ  
քաշելով :

Ե. Գ. Մեղուի եւ միջատի խայթեր  
կը բուժուին սոխով. ճեղքէ սոխը եւ  
քսէ խայթուած քին վրայ :

Ս. Ե. Գիշերուան համար էն լաւ  
ճրագն է մեր պապերուն գործածած  
ձէթի խանձիղը, միայն թէ պատրոյգը  
չատ վեր մի՛ հաներ եւ մարած ատենդ  
անկողինի սենեակէն դուրս տեղ մը  
մարէ. իճարե՛ կոչուած քաղեաղի  
լամպաներ բնաւ մի՛ գործածեր ան-  
կողինի սենեակդ :

Պատանի. Սառին վրայ քալած ա-

տենդ շտահելու համար էն դիւրին  
միջոցն է կօշիկիդ վրայ ֆեյճե շրջա-  
նակ մը անցնել, կամ քսէ հայրիկիդ  
որ գնէ 20 տրամ թանձր թիրէմէն-  
թին, 60 տրամ նշատրը, 20 տրամ  
պէնզին եւ 70 տրամ սրիրթօ, բո-  
լորը շիշի մը մէջ թող լեցնէ որ հալի,  
այս նիւթէն կօշիկիդ տակը քսէ մի  
քանի անգամ եւ թող որ չորնայ :

Գրավանձառ. Մեր հրատարակու-  
թեանց մեծագոյն մաս սպառած է,  
ունինք միայն Անգլ, լեզուի բանալի  
Գ. տիպ, Աշնան տերեւներ Բ. տիպ,  
Մայրիկին առաջնորդը, Կեանք Սըր-  
բոց Առաքելոց, եւ Բէթթըրսըն դե-  
կավար, Օրացոյցի նախկին տարի-  
ներն ալ չունինք :

Ք. Գ. Կ'առաջարկէք որ մրցանա-  
կաւոր խնդիրներ ալճէպրայական եւ  
երկրաչափական ըլլան, մեր Օրա-  
ցոյց ժողովրդեան ամէն դասակարգի  
համար պատրաստած ըլլալով կ'ու-  
զենք այնպիսի խնդիրներ մատուցա-  
նել որ ամենուն դիւրամատչելի ըլլան :  
Շատերու. Մեր Որբանոց մեծ շը-

նորհակալութեամբ կ'ընդունի բացի գրամական նուէրներէ, իրեղէններ, ինչպէս. ամերիքան, պասմա, պատրաստ հանդերձներ, գուլպայ, կօշիկ, նաեւ ձէթ, ձիթապտուղ, պրտուղ եւ զօզաք: Նուէրներ ամէն ամիս կը հրատարակուին Անեսաքերի կոնքին վրայ:

Տիկ. Ա. Թ. Կողի ցաւը միշտ նշան չէ կուրծքի կամ թոքի բորբոքումի, այլ երբ ջերմ եւ հազ չկայ. աւրրւած, խանգարուած ստամոքսի նշան է, նանէյի թէյ, ստամոքսին վրայ հարտալի խիւս, չփել, պտոյտ, անկողինի մէջ հանգիստ եւ պահեցողութիւն լաւ դարման են բնտանեկան:

Մերուկ. Պազ սոքեր շատ աննրպաստ են առողջութեան, սոքք տաք պահել առողջարանական երեք ոսկեղէն կանոններէն մին է: Արեան շրջան խանգարուելով սոքեր կը պաղին: Առաջին պայմանն է սոքերը մաքուր պահել, մանկութենէ պէտք է վարժուիլ, սոքերը պաղ եւ գազջ ջուրով լողանք ընել, ետքը սոքին

տակը բրդեղէնով մը շփել, որով արեան շրջան կը գրգռի, գուլպայիդ յատակը ոչխարի բուրդ դիր եւ 2-3 օրն մի անգամ փոխէ:

Խոնհարաւ. Օճառին կտորները պահէ, եւ երբ շատնան սօտայի ջուրի մէջ տաշէ եւ եռացուր, երբ ճերմկի պաղեցուր, ասկէ զգալ մը կը բուէ աղտոտ անօթներ լուայու համար:

Յ. Մ. Ո՛վ ըսաւ թէ Սիպերիա վայրի երկիր է, հոն 10,000 բնակիչ ունեցող ամէն քաղաք, բաց ի Յէ, թանգարան ունի, եւ թանգարան քաղաքակիրթ երկիրներու յատուկ է:

Ն. Գ. Այո՛, անմօրուս Ռուսեր հազուագիտ են, Ռուսեր կը հաւատան թէ անմօրուս մարդ մը հոգի չունի:

Յ. Ա. Յանձնուած նուէր իւրացնել շատ ցած, ստորին գողութիւն է, գնչուներն զայս արգիլելու համար նուէր հաւաքողին մէկ ձեռքը թաս մը կուտան եւ միւս ձեռքը ողջ ճանձ մը, զոր պարտի ողջ յանձնել հաւաքուած դրամին հետ:

Ա. Գ. Բախտին կատակները շատ են, Ռուսիայի մէջ միլիոնաւոր մը մեռաւ 300 միլիոն ժառանգ ձգելով իր որդւոյն, որ Գաղղիոյ Քան քաղաքին մէջ հիւժախտէ կը տառապէր, հէգ երիտասարդը մեռաւ այս մեծ ժառանգութեան աէր բլլալէ առաջ, ունայնութիւն ունայնութեանց ամենայն ինչ ունայնութիւն է :

Գ. Հ. Աղլիկ մը մինչեւ 18 տարեկան բլլայ պարտի դպրոց յաճախէ, անկէ ետեւ կուգայ ամուսնացնելու ինքիրն :

Զ. Ն. Ոտքերդ պաղ եղած ատեն չբլլայ որ կրակարանին դէմ բռնես տաքցնելու համար, հեռացի՛ր կրակին քովէն եւ բրդեղէնով մը շփէ :

Տիկի՞ն Ս. Յ. Արծաթ անօթներ իսկ առողջութեան կը վնասեն եթէ թթու կերակուրներ եւ ըպելիքներ անոնց մէջ թողուին :

Ուսանող. Թիթեռնիկի հաւաքածոյ ցեցէ ազատ կը մնայ, եթէ սընտուկին մէջ քեաֆիրի դնես :

Ս. Վ. Ոչ, կը սխալիք, տեսու-

թիւնը ստացող կոյրը առաջի օրեր իր կինն իսկ չէ կարող ճանչնալ, մինչեւ որ անոր ձայնը չլսէ, եւ ձեռքովը անոր երեսը չջշափէ :

Ք. Մ. Ուզեղն ալ, նման մարմնի, սնունդի եւ մարզանքի պէտք չունի, ուստի պարապ ժամանակիդ մէկ մասը կարգալու եւ ուսնելու յատկացուր, սորվէ մանաւանդ խորհիլ, ծոյլ, անգործ միտք կը տկարանայ, ճիշդ ինչպէս անգործ թեւ եւ սրունք :

Օր. Ն. Հիւժախտի դարման չորս տեսակ է, օդ, կերակուր, հանգիստ, եւ մտային անդորրութիւն, այս չորս երբ ի միասին գործածուին վախ չկայ բնաւ :

Օր. Ն. Ակռայի էն լաւ փոշին ցորենի ալիւրն է, տապակի մը մէջ խորովէ, մաղէ անցուր եւ գործածէ, ակռայի փառութիւն ասով կը բուժուի :

Ո. Գ. Գերմանիոյ մէջ դիակիրութիւն արգիլուիլ կը խորհաի, քանզի դիակ այրելով անհնար կ'ըլլայ սպանութեանց հետքը գտնել :

Միհրան. Բիւրակնի մէջ կը գրէք,

«լաւագոյն սովորութիւն չի՞ պիտի ըլլայ, երբ տներ, համայնք ծնունդներու, ամուսնութեան եւ մահերու աստիճան յիշէ մեր որբանոց եւ անոր նուէրներ ընէ. փոխան ծագկեփունջի»

Այո՛, շատ լաւ սովորութիւն մ'է այս. որ մեր Ազգայինք որդեգրած են արդէն, ինչո՞ւ չընենք նոյնը եւ մենք :

Նաեւ ամէն Չապի երկուշարթի օր Որբանոցի տարեկան Պազար կ'ըլլայ : Չե՞ն հաճիր մեր ազնիւ տիկնայք եւ օրիորդք ձեռագործներ զրկել, որ այն առթիւ ծախուին ի նըպաստ հաստատութեան, Բօսթանի կ'ընդունի ծրարներ : Այսպիսիներուն անուններ պիտի ծանուցուին Օրացոյցիս մէջ :

Ա. Գ. Ճաթած սօպաներդ դու կրնաս նորոգել մոխիր, աղ եւ կաւ իրար խառնելով քիչ մը ջրով եւ այս չափախէն ճաթած տեղերը լաւ մը խցելով :

Տիկ. Ս. Թ. Տախտակամածն կրնանք տաք պահել կարպետին տակ 4—5

կարգ լրագիր գնելով, երկու ամիսն մի անգամ փոխէ, արդէն լրագիրներ կան, որ միայն այսպիսի ծառայութիւններ մատուցանելով մեզի օգտակար կրնան ըլլալ :

Սպասուհի. Յանդիմանուելէ զրուերես, քարիզի կանթեղներուն պատրոյգները, դեռ չգործածած, բարկ — սէրթ — քացախի մէջ թաթխէ, չորցուր եւ ապա գործածէ, այլ եւս գարշահոտութիւն չեն արձակեր կանթեղներդ եւ ախիւնդ ալ կը դադարի քեզ յանդիմանելէ :

Ն. Ն. Սենեակդ եղեւինի անտառի հոտով կրնաս լեցնել, եթէ հողէ ամանի մը մէջ եռացած ջուր լեցրնելէ ետեւ վրան փոքր դգալ մը թիրէմէնթիւնի իւղ աւելցրնես : Օրը երկու անգամ կրկնելով կրնաս սենեակէդ վարակիչ նիւթերն ջնջել : Կուրծքի հիւանդութեանց համար ալ շատ օգտակար է այս :

Փ. Ա. Լուսցքդ ձերմակ եւ օճառի եւ աչխատութեան խնայողութիւն կ'ըլլայ եթէ ջուրին մէջ կէս առ կէս

սօտա եւ պօրաքս դնես :

Սպասուհի . Պատուհանի ապակի-  
ներն փայլուն եւ թափանցիկ ընելու  
համար նախ լուս բարկ (ֆեւֆին) քա-  
ցախով եւ սրբէ պարզ ջուրով :

Մայրիկ . Փոքրիկին ձեռքի կոծիծ-  
ները կրնաս ջնջել սա՛ պարզ միջոցով,  
դեղարանէն 3 կրամ քրօմի թթու  
գնէ եւ խառնէ 4 կրամ ջուրի մէջ ,  
այս հեղուկով օրը 2 անգամ թրջէ  
կոծիծները , 4 օրէն կոծիծներուն վրայ  
սեւ կեղեւ մը կը գոյանայ , հանէ այս  
կեղեւը չփելով եւ նորէն թրջէ կո-  
ծիծը նոյն հեղուկով մինչեւ որ բո-  
լորովին անհետանայ :

Մ. Յ. Մարացորենին մազմզուքը  
(քարակ թելերը) ինչպէս նաեւ կեռա-  
սին կոթը խաշելով ջուրը խմէ , լաւ  
դեղ է միզարգելութեան համար :

Գ. Ս. Արար խէժը ջրով հալեցուր ,  
խառնէ հետք գաճ (ալչի) շաղախ մը  
կ'ըլլայ , կտորած ապակիէ , հողէ  
անօթներն տաքցուր , դիր այս շա-  
ղախէն եզերքները , իրարու կցէ ,  
ճնշէ , եւ դիր որ չօրնայ :

Թ. Ն. Սոնաւ տեղերը դիր անօթ-  
ներով չմարած կիր , հոն գտնուած  
առարկաներ այլ եւս չեն բորբոսիր  
(ֆիւֆ) :

Կ. Պ. Կողացաւր , փորի ցաւը եւլն .  
կ'անցնի երբ եռացող ջուրի մէջ 4  
ծալլուած լաթ մը թաթխենք , քա-  
մենք , եւ ցաւած մասին վրայ դը-  
նենք , կրկնէ երբ լաթը պաղի :

Պ. Գ. Հարբուխի լաւ դարման է  
լէմոնի հիւթը , լից լէմոնի հիւթ  
ափիզ մէջ , քաշէ քիթիզ մէջ , որ բեր-  
նէզ դուրս գայ , կրկնէ մի քանի ան-  
գամ եւ կը բժշկուիս , կոկորդի եր-  
կարատեւ բորբոքման ալ այս օգ-  
տակար է :

Օր. Ս. Թ. Զգո՛յշ անուշահոտ նիւ-  
թերէ , Գերման մի բժիշկի գորտերու  
վրայ փորձելով գտաւ որ անհե՛ տե-  
սակ անուշահոտ նիւթ , նման քլօ-  
րօֆօրմի , կը թմրեցնէ , սրտին զար-  
կը կը նուաղեցնէ , եւ եթէ շարու-  
նակուի մահ կը պատճառէ :

Սրիսասարգ . Անբարոյական ծնո-

զոց հնազանդելու կամ չհնազանդելու նկատմամբ մեր անձնական գաղափար կամ համոզում յայտնելու իրաւունք չունինք . Ս. Քրոց պէտք է զիմենք. Տէր Յիսուս կ'ըսէ. «Նա որ չայրր կամ մայրր ինձմէ աւելի կր սիրէ չէ ինձ արժանի». ու Ս. Առաքեալք կ'ըսեն. «Առաւել պարտինք Աստուծոյ հնազանդիլ քան մարդկանց» :

## Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Աստուածաբանական գիււս մը . — Տոքդ. Կրէնսէլ, Տոքդ. Հընդի հետ. Ֆայուսի եւ Հիպէի մէջ . (Փահիրէի հարաւայիւ կողմը . 100 քիլոմէտր հեռի) . պըտղումեան գերեզմանատան մը մէջ գտած է կարգ մը ձեռագրեր որք Յիսուս — Քրիստոսի ցարդ անձանօթ խօսքերը կը պարունակեն : Այս պատիրոսները քրիստոնէական թուականի Գ. դարուն կը վերաբե-



րին , եւ մեծ մասամբ լաւ պահուած են , թէպէտ քանի մը պարբերութիւններու վերջին մասը կը պակսի : Սոյն վաւերաթուղթեր ծանօթութիւն մը կը պարունակեն յայտարարող թէ Քրիստոսի առ թովմաս առաքեալ ուղղած խօսքերը կը պարունակեն : Պապիրոսներու պարունակութեանց հրատարակութիւնը 1904 Յունիսին տեղի պիտի ունենար , եւ թերեւս աստուածարաններուն միջեւ բուն վիճարանութիւն մը յարուցանէ , արդէն ծանօթ բնագրերու հետ ունեցած տարբերութեանց պատճառաւ :

Սարգանաբաղի ապարանք . — Գերման արեւելագէտներու Ընկը պատմական յոյժ կարեւոր գիւտ մը քրեր է Տիգրիսի հովտին մէջ , ուր քանի մը տարիներէ ի վեր պեղումներ կատարել կուտայ հին Ասուրի տեղւոյն վրայ : Երեւան հանուած են հինգ ապարանքներ եւ մեհեան մը , որք շատ լաւ պահուած են : Այս գիւտ ո՛չ միայն կը հաստատէ Սար-

գանաբաղի գոյութիւնը , որ երկար ատենէ ի վեր վէճի նիւթ եղած էր գիտնականներուն միջեւ , այլեւ անոր տիրապետութեան գլխաւոր դէպքերը վերակազմելու կը ծառայէ , որուն վրայ աւանդական , յաճախ եւս առասպելական թուիքներ միայն կային : Երեւան հանուած ապարանքներէն մին ծածկուած է արձանագրութիւններով , որք Ասորեստանի հռչակաւոր թագուհին՝ Շամիրամի այս վերջին շառաւիղին՝ ժամանակի դէպքերուն կը վերաբերին : Այս ապարանք հաւանաբար մին է անոնցմէ զորս Սարգանաբաղ իր մայրաքաղաքին մէջ շինել տուաւ Քրիստոսէ իննդար առաջ : Գտնուած է նաեւ երկաթաքարէ սիւնի մը վրայ փորագրուած կենդանագիր մը , որ Սաղմանասար Բ. թագաւորը կը ներկայացնէ եւ Հերակլէսի արձան մը , առիւծի մորթ հագած , երկուքն ալ յոյժ շահեկան եւ գեղարուեստական առարկաներ :

Բեհիլըմ է անունն այս գարմանալի

տարրին , որ վերջերս բովանդակ  
 գիտնական աշխարհին ելեկարական  
 ցնցում մը տուաւ : Աշխարհի հսկայ  
 միտքերն արգէն իսկ սկսած են գոր-  
 ծել անոր վրայ՝ դնելու անոր կարե-  
 լիութիւններն ի սպաս մարդկութեան :  
 Այս մեծ գեւտն եղաւ կնոջ մը ձե-  
 սամբ ի Բարիզ , եւ իգական աշխար-  
 հին մէջ ցնծութեան բնդհանրական  
 գգացում մը արթնցուցած է : Զար-  
 մանալի գոյութիւն մ'է այն , քանզի  
 կը հազորդէ ջերմութիւն , լոյս եւ ոյժ  
 շարունակական հոսանքով մը , առանց  
 կորուսանելու ո եւ է մաս իր ոյժէն .  
 այսինքն կուտայ եւ կ'այրի բայց չի  
 սպառիր : Լօրտ Քէլվին , աշխարհի  
 նահապետ բնագէտն եւ Սըր Ուիլերմ  
 Քրուքս , անգլիացի համրուաւոր  
 տարրաբանը , ցարդ անկարող եղած  
 են գտնել , բացատրել ռէսիյըմին ոյ-  
 ժին ազբիրը : Հաշուուած է որ եթէ  
 15 ստնաչափ երկայն եւ 18 ստնա-  
 չափ լայն սենեակի մը մէջ կէս քի-  
 լօկրամ ռէսիյըմ զետեղութի , ո՛չ մի-  
 այն սենեակը պիտի տաքցնէ եւ լու-

սաւորէ , այլ նաեւ առանց իր ոյժէն  
 մասնիկ մը իսկ կորսնցնելու , դարե-  
 բով պիտի կրնայ ահագին մեքենա-  
 ներ դարձնել հոն : Այս առթիւ սա-  
 կայն պարաինք յիշել թէ այդ սեն-  
 եակին մէջ կենդանութեան շունչ ու-  
 նեցող ս եւ է էակի մը ապրիլը կա-  
 րելի պիտի չլլար , քանզի ռէսիյըմի  
 շրտորոք ճառագայթք պիտի ու-  
 տէին , լափէին ամէն գործարանաւոր  
 մարմին : Բոյոր ուրիշ գոյացութիւն-  
 ներ օդի չափ դիւրահազորդ եւ թա-  
 փանցիկ են ռէսիյըմի ճառագայթնե-  
 բուն առջեւ , որք կը թափանցեն պող-  
 պատի , կապարի , սնդիկի , թիթեղի ,  
 պղինձի , գինկի եւ երկաթի մէջէն  
 իրր թէ այս կոչա մարմինք ալիւրի  
 մաղ լլլային : Նստէ մութ սենեակի  
 մը մէջ , աչքերդ կապէ քառածալ  
 թուշկինակով մը եւ գլխուդ վրայ ան-  
 ցուր կապարեայ տուփ մը , ռէսիյըմի  
 ճառագայթները պիտի տեսնես կա-  
 պարեայ տուփին , թաշկինակիդ եւ  
 աչակոպերուդ մէջէն : Եթէ ցորենա-  
 հափի մէկ տասներորդ ծանրութեամբ



րեօթիցըն կրեա գրպանիդ մէջ շարաթ մը , տարրին ջերմութեան սաստկութիւնը պիտի թափանցէ մարթիդ եւ ետխը պիտի բսնայ հոն : Մորթն այսպէս այրած է մինչեւ իսկ տարրը դնելով պղինձէ խողովակի մը մէջ եւ այն ալ պարփակելով ապակիով : Բեօթիցընի ճառագայթք կը թափանցեն մեզ ծանօթ ամէն գոյացութեան մէջէն : Բեօթիցընով լուսանկար քաշուած է՝ մինչեւ իսկ պատկերելի առարկային երեսը ծածկելով հաստ պողպատեայ թերթով մը :

Միացեալ նահանգաց կառավարութիւնը  $3\frac{1}{2}$  միլիոն դհկ . կը խոստանայ տալ անոր որ կրնայ ամիս մը առաջ օդին փոփոխութիւններն ծանուցանել , այսինքն  $2\frac{1}{2}$  միլիոն դհկ . անոր պիտի տայ որ օդին ջերմութեան վիճակը մէկ ամիս առաջ կը գուշակէ , եւ օրէնք մը կը գտնէ , որով հնար կ'ըլլայ օդին փոփոխութիւն կանխաւ հաշուել , մնացեալ 1 միլիոն դհկ . անոր պիտի տայ որ կըր-

նայ մէկ ամիս առաջ անձրեւի գալուստ ծանուցանել :

Օրացոյցի հետաքրքրական իրողութիւններ ձեզ հաղորդեմ որ զարմանաք .

Հոկտեմբեր Յունուարի հետ միշտ միեւնոյն օր կ'սկսի , Ապրիլն ալ Յուլիսի հետ , Դեկտեմբերը Սեպտեմբերի հետ , Փետրուար , Մարտ , եւ Նոյեմբեր միշտ միեւնոյն օր կ'սկսին , Մայիս , Յունիս եւ Օգոստոս միշտ տարբեր օրերով , այս նահանջ տարիի մէջ կը փոխուի : Դարագլուխը բնաւ չսկսիր չորեքշաբթի , ուրաթ կամ շաբաթ օր , սովորական տարին միշտ սկսած օրով կ'աւարտի , Օրացոյցները 28 տարի միայն կը փոխուին , յետոյ նորէն առաջին տարինն յար եւ նմանը կը կրկնուի մինչեւ 28րդ տարին :

Գերման տարրալոյծ մը գտաւ թէ մեղանի մէջ վտանգաւոր միջրոպներ կը վիտան , փորձեց մուկի վրայ , որ

է օրէն մեռաւ : Ուստի գրչին ծայրը  
լեզուին դպցնել վտանգաւոր է : Գոր-  
ծածելէ ետեւ կաղամարը գոցեցէք :

Անգլիացի տարրալոյժ մը կակուղ  
փայտը կարծրացնելու համար եռա-  
ցող շաքարջրի մէջ կը դնէ մինչեւ որ  
յագենայ :

Բամպակի տունկն ալ իր թշնա-  
մին ունի , փոքրիկ , մութ կանանչ  
միջատ մէջ այս , Թէքսասի մէջ 280  
միլիոն շիլինի = 6 դնկ մլաս է պատ-  
ճառած . այս միջատ տարին 75 մը-  
ղոն կը ճամբորդէ , եւ ո՛չ տաքէ ո՛չ  
ալ ցուրտէ կը վախնայ . էգը տարին  
3 — 700 հակիթ կ'ածէ , բամպակի  
տունկի 3 — 700 պատիճներուն մէջ ,  
մէկ ամիսէն այս հակիթներ ձագե-  
րու կը փոխուին : Ասոնք ջնջելու մի-  
ջոց դեռ չէ գտնուած :

Ժավայի մէջ սարդի ոստայն մը  
կայ , ա՛յնքան կարծր որ միայն դա-  
նակով կրնայ կտրուիլ : Միււրիսի

եկեղեցիին մէջ մեծ սարդ մը կար .  
որ կանթեղներուն ձկթը կը խմէր : —  
Թէքսասի մէջ սարդ մը կայ , որ 4  
ոտք երկայն եւ 2 ոտք լայն պալուն  
մը կը շինէ . զայս թելով մը ծառի մը  
ճիւղին կը կապէ , յետոյ ձագուկները  
գլուխը ժողովելով պալօնը կը մտնէ .  
կը կտրէ թելը եւ կը թռչի պալօնով :  
ուրիշ տեղ մը գտղթելու եւ առեն  
մ'ալ հոն հաստատուելու համար :

Կալիֆրոյի հանրածանօթ վէլիգ-  
քայի աղահանքին մէջ Գէլպուրկ  
գեանափոր քաղաքը կայ քար - աղէ  
շինուած տուներն եւ փողոցներն յս-  
պիտակ են , մայր եկեղեցին աղէ է  
շինուած եւ ելեքտրական լուսով լու-  
սաւորուած : Հանգուցեալ Ալէքսանդր  
Չարը անգամ մը այցելեց այս քա-  
ղաք , եւ եկեղեցիին բերեղանման  
փայլունութենէն ա՛յնքան յուզուե-  
ցաւ որ Խորանին նուիրեց ազաման-  
դազարդ Խաչ մը : Այս քաղաքին մէջ  
փոխանցիկ եւ ծանր հիւանդութիւն-  
ներ անձանօթ են , ծերութեան բնա-

կան մահով կը մեռնին հոն մարդիկ :

Պոլիվեայի մէջ տեղ մը կայ , ուր գիշերը ջուրը կը սառի , մինչ ցերեկը ա՛յնքան տաք կ'ընէ , որ երբեմն մարդոց մորթերուն վրայ ուռեր կը դոյանայ :

Նիւ Եօրքի մօտ տեսակ մը շերամի որդ կը բուծեն , որ փոխան թթենիի կաղնիի տերեւով կը սնանի . ամէն տեսակ եղանակի փոփոխութեան կը յարմարի այս նոր շերամ , կաղնիի թանձր տերեւը ակործով կ'ուտէ , եւ մեր շերամներուն նման մետաքս կը հիւսէ . մեր շերամներ որդերուն էն զգայունն (նազիկ)ն են , որ երբ օդին բարեխառնութիւն իրենց չյարմարի եւ շերամուներ չպատասպարօւի , կը դադրին շարժելէ . երբ թութի տերեւներ իրենց նուրբ ճաշակին չհամապատասխանեն , երբ անոնք հոգէն ո՛րեւէ քիմիական հիւթ ծծած ըլլան , յայնժամ այս ազնուազարմ որդ կը դադարի ուտելէ , անօթի մնալ կը նա-

խրնարէ , չզպչիր տերեւներուն . Եթէ փոթորկի ատեն տերեւով շծած կենք մեր շերամներ առաջին որոտման կը կտրեն թելը եւ սարսափահար կ'ըլլան : Ամերիկայի նոր շերամը սակայն ասոր նման ջղային եւ զգայուն չէ . եւ սքանչելի ակործակն չզադրիր . ո՛չ տաքին , ո՛չ ցուրտին , ո՛չ փոթորկի եւ ո՛չ որոտման ատեն . ականջ չկ'ստեր եւ իր կաղնիի տերեւը կը լափէ :

Սաթը (ֆեհրիպար) կը գնահատուի մեծութեան , գոյնի եւ թափանցկութեան համեմատ բաց — գեղինը աւելի արժէք ունի քան մութ — գեղնագոյնը , մասնաւորապէս կը փնտռուին այնպիսիներ , որոց մէջ քարացեալ միջասներ կը գտնուին . որոց համար շատ սուղ գին կը վճարեն :

Վլատիկովիասի մէջ 11 տարեկան տարօրինակ աղջիկ մը կայ , որ ինչ բանի որ մօտենայ , գոյն իրեն կը քաշէ , երբ սեղանի մը մօտենայ վը-

րան գտնուած բոլոր առարկաները շարժիլ կ'սկսին , չորնալու համար փուռած լաթերը գետինը կը թափին , երբ այս աղջիկ պարտէզ մտնէ :

Ձիւրիտի թանգարանին մէջ աղջիկ մը կայ , որոյ ամբողջ մարմին սեւ փայլուն մազերով ծածկուած է . շրթունքներուն վրայ կատուի նման պեխեր ունի , այս աղջիկը խելացի ալ է :

Մրջիւնները . բազդատմամբ իրենց մեծութեան ամենէն մեծ ուղեղն ունին , քան ո՛ր եւ է ապրող կենդանի :

Քիմպրըլիի հանքերուն մէջ սեսուչը դիտեց որ գործաւորին մէկը ոտքը հաստատ պահել ջանալով մեծ դժուարութեամբ կ'աշխատէր . կասկածելով մէկդի հրեց գործաւորը , եւ ահա ոտքին տակէն ելաւ աղամանդ մը սքանչելի , որ էն խոշորն է եւ հինգ միլիոն սկի կ'արժէ :

Օրիորդք Ռոզա եւ ԺողէՅինա

մէջ քերնուն մօտ միացած են իրարու , թաղանդով մը , երկու քը բնութեամբ եւ ճաշակով իրարմէ կը տարբերին , 26 տարեկան են եւ քաջառողջ :

Թիպէթ անցեալ տարի բացուեցաւ աշխարհի , Թիպէթցին աղտոտ հանդերձ կը հագնին . մէջքը գօտի մը ունի . որ պահարան է իրեն համար . ծոցը կը պահէ փայտէ պնակ , ջուրի թաս , կօրեֆե , քթախոտախ տուփ , գլխարկը . ստակի սոպրակը , եւ ծրար մը թէյ . ծնելէն ի վեր մազերը ո՛չ սանաորուած եւ ո՛չ լուացուած են , եւ երեսն ի վար կը կախուին , կռնակէն սակայն հիւսուած են մետաքսաթելով , կարմիր ջուխայով եւ փղոսկրի մանեակներով , բուստերով եւ ազնիւ քարերով : Չախ ականջը օղ կը կրէ . եւ դաստակին համրիչ կ'անցնէ , որ իրեն պատուոյ առարկայ ալ է :

Անգլիացի հնախոյզ . — Բէթրի , գտաւ թէ նախնի ժողովուրդներ սովորութիւն ունէին հին ձեռագրերու

Թերթեր իրարու վրայ փակցնելով խաւաքարտեր շինելու եւ անոնցով մոմեաներու պահարաններ պատրաստելու, ուստի նա կարգ մը մեհեաններու պահարաններէն ձեռագրերու թերթերը զատելով մաքրած է եւ գտած է Հովերոսի եղիականէն մաս մը, եւ Պղատոնի գրութիւններէն կտոր մը, եւ դարձեալ Եւրիբիտէսի մէկ քերթուածը, զոր երկար ատենէ ի վեր շատեր փնտռած, բայց գտնելու կարող եղած չէին: Բէթրիի գիւտը դեռ հազիւ մէկ ասրեկան է, ուստի մեր սրտեր կը լեցուին յոյսով որ օր մը Ս. Գրոց ամենէն հին ձեռագրեր ալ ի լոյս պիտի գան:

Ինքնաշարժ կառքերէն յետոյ, կարգն եկած է ինքնաշարժ կօշիկներուն՝ որոց հնարիչներն են Բելքէր եւ Կէլքէ անուն երկու ճարտարագէտներ. ինքնաշարժ կօշիկները ճիշդ սահնամուձակի կը նմանին եւ սովորական կօշիկներու կը կցուին. փոքրիկ շարժիչ մը կը բանեցնէ անուակ-

ներ որք սահնամուձակին մէջ տեղաւորուած են: Այս նորահնար կօշիկներով մարդ պիտի կրնայ ժամը 20 քիլօմէթր տեղ երթալ: Ուղղուելու համար կը բաւէ միայն սրունքներուն շարժումը, ինչ որ մեքենականութիւնը շատ կը դիւրացնէ: Կենալու համար պէտք է փոքրիկ չուան մը քաշել որ կցուած է կօշիկներէն մէկուն, այս չուանն իրր զսպակ կը ծառայէ: Եւ ստոր շնորհիւ է որ գնացքը կ'արագանայ կամ կը դանդաղի:

Բարիզցի հրագրակազիր Տէլքուր փոքրիկ գրքոյկ մը հրատարակած է, որուն մէջ կը յայտարարէ թէ՛ ի Բարիզ յատուկ գործարաններ հաստատուած են, որոց միակ զբաղումն է արհեստական ձուկ պատրաստել: Ձուկի թեփամաշկներ կը շինուին եւ անոնց մէջ կը լեցուին ձուկի մնացորդները, թափուկներ, որոնցմով պատրաստուած ձուկերն յար եւ նման են նոր ջուրէն ելած թարմ ձուկերու: Պահածոյ ձուկերու ճշմարիտ գործարաններ ալ

կան , ազկերի , անձրուկի , խեցգետինի եւլն . պատրաստութեան համար : կարիտոսները , այն համեզ կարիտոսները , զոր այնքան անյագօրէն կը լափենք գարեջուրին հետ , գիտէ՞ք ինչով կը պատրաստուին եղեր , կարգ մը գործարաններու մէջ : — Պարզապէս ձիու թոքով , սխտորով եւ մարկարինով , որովհետեւ լաւ իւզն ըստամոքս կ'աւրէ եղեր : Այս անմարսելի բաղադրութիւնն ամենայն հանդարտութեամբ եւ անխղճութեամբ կարիտոսի պարապ պատեաններու մէջ լեցնելով ծախու կը հանեն :

Մտթէն Անգլիացի հնարիչի մը գիւտին արձագանգը կ'ըլլայ , որ մեծ յեղաշրջում պիտի կատարէ եղեր մասուլին մէջ : Ասիկա հետաքրքրաշարժ դրութիւն մ'է . որով կարելի պիտի ըլլայ առանց մելանի տպագրել , պարզ երեկտրական հոսանքի մը շնորհիւ : Ատոր համար կը բուէ նախապէս մասնաւոր նիւթով մը թըրջուած պարզ թուղթը դնել գրերուն

վրայ , եւ երեկտրական հոսանքն անցընել գրերուն մէջէն : Այս կերպով տպագրուած բանն այնքան մաքուր , այնքան յստակ կ'ըլլայ որ տեսնողը պղինձի վրայ փորագրութենէ յետոյ տպուած պիտի կարծէ : Այս հրաշալի արդիւնքն յառաջ բերող նիւթն այնքան աժան եւ զիրամառայելի է եղեր որ ութածակ 400 երեսնոց գրքի մը տպագրութեան համար գործածուած սովորական մելանին գնէն 12<sup>1</sup>/<sub>2</sub> անգամ պակաս կ'արժէ :

Յրանսացի համբաւաւոր միքրոպաբանը , Ռօլէն , կարեւոր յայտնութիւն մ'ըրած է այնպիսի բանի մը մասին , որ ամենքնիս ալ կը հետաքրքրէ : Յրանսացի գիտունը , խորազննին քննութիւններէ յետոյ , կ'յայտարարէ թէ , արծաթ դրամները բացարձակապէս զերծ են ո եւ է միքրոպի ներկայութենէ : Արծաթը քիչ նպաստաւոր է միքրոպի զարգացման , եւ գիտունն աւելի որոշակի կ'ըսէ թէ՛ միքրոպները մեծ հակակրութիւն մը

ունին զէս ի արծաթը , ճիշդ մարդոց  
հակառակը , որք այնքան կը սիրեն  
այդ մետաղը . սրուն սիրոյն համար  
չեն քաշուիր զիրար ուսելէ :

ՀՆՏԱՔՐՔԻՐ

## Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

### ՆՊԱՐԱՎԱՃԱՌԸ

Չմեռ էր , գիշերը սկսած ըլլալով  
վաճառականները իրենց վաճառա-  
տուններուն փեղկերը գոցել սկսած  
էին , ձիւնը իր սպիտակ սաւան փը-  
ռած , տարածած էր Բերայի մեծ  
փողոցին սալայատակին վրայ :

Պագգալ Գոսթի փողոցը կանգ-  
նած իր խանութին փեղկերը գոցե-  
լու վրայ էր . երբ ապակիներուն մէ-  
ջէն նշմարեց որ իրեն ծանօթ դա-  
տարկապորտ Մանօլ խանութին ներ-  
սը բաներ մը կ'ընէր : Սեղանին վրայ  
դրուած կարագի կէս քաշնոց գունտ



մը Մանօլ վերցնելով գլխուն վրայ  
 զետեղեց եւ ապա իր հելլենական  
 լայն գլխարկը վրան դնելով լաւ մը  
 տեղաւորեց :

Այս տարօրինակ գողութեան վրէժն  
 անմիջապէս լուծելու համար Քօսթի  
 խանութը մտաւ եւ դուռը փակեց ,  
 յետոյ յանկարծակիի եկած Մանօլի  
 կոնակը փայփայելով եւ ձիւնը կօ-  
 չիկններէն թոթուելով ըսաւ , կեցիր  
 Մանօլ , մի՛ աճապարեր :

Մանօլ աչքերն դէպ ի դուռ ուղ-  
 զելով ի դուր ազատ անցք մը կը  
 փնտռէր : Կեցիր , բարեկամս , քիչիկ  
 մը տաքնանք , ըսաւ Քօսթի , առանց  
 ո՛ր եւ է յուզում ցոյց տալու , որքա՛ն  
 ցուրտ կ'ընէ այս գիշեր . իրաւ որ  
 առանց քեզի տաք բան մը հրամցը-  
 նելու անկարելի է որ երթաս . ծօ՛ ,  
 ճամբան կը սառիս : Քօսթի այսպէս  
 խօսած ատեն վառարանի մինչեւ բե-  
 րանը փայտ կը լեցնէր :

Տօգնապալից էր խեղճ Մանօլի

կացութիւն . կարագը պահած էր ,  
 եւ անանկ տեղ մը , որ հարկ էր իս-  
 կոյն հեռանայ : Տաք բան մը հրամ-  
 ցընել — ասի բնաւ գործին չէր գար :  
 Քօսթի , սակայն , այս խորհուրդնե-  
 րուն վերջ տուաւ , բռնեց Մանօլը եւ  
 վառարանին ճիշդ մօտիկը նստարանի  
 մը վրայ նստեցուց : Խեղճ Մանօլ ,  
 ո՛չ աջ եւ ո՛չ ձախ կրնար շարժիլ .  
 իրեն ետին ալ խանութին սեղանը  
 կար , մինչ Քօսթի առջեւը տնկուեր  
 կեցեր էր , անանկ որ շարժիլ իսկ  
 անհնար էր եղած :

Մանօլ կ'զգար որ կարագը իր մա-  
 զերուն վրայ լաւ մը կը տեղաւորուի ,  
 ուստի խնդրեց որ արտօնէ իրեն տուն  
 երթալ :

Ոչ , ոչ , դռնեց Քօսթի , բնաւ եր-  
 բէք , ատանկ անգթութիւն կրնամ  
 բնել ես , ոչ , բարեկամս , քեզի չեմ  
 թողուր . մինչեւ որ տաք բան մը չը  
 խմես : Նաեւ քեզ չճանձրացնելու հա-  
 մար պատմութիւն մը պիտի բնեմ ,  
 հա՛ նայիմ նստէ տեղդ . այս ըսաւ  
 եւ Քօսթի նորէն տեղը հրեց Մանօլը



որ երթալու համար ոտք էր ելած :

Օ՛, հոս շատ տաք է, թոթովեց վարպետորդի գողը եւ նորէն փորձեց տեղէն ելլել :

է՛, խենդութիւն չուզեր, գոչեց Քօսթի, անդդ նստէ, ասանկ ցուրտ գիշեր մը քիչիկ մը տաք խմելիք քեզի մնաս չի պատճառեր, նստէ Մանօլ, նստէ, այդքան անպարելու հարկ չկայ, ես ալ տուն պիտի երթամ, հոս չի պիտի մնամ, զայս ըսաւ եւ Մանօլի կռնակը աթոռին կրթնցուց հուժկու բազուկներովը :

Քայց, ըսաւ Մանօլ, Շիչլի պիտի երթամ, կովերը պիտի կերակրեմ, փայտ կոտրեմ, կ'աղաչեմ թողէք որ երթամ :

Պարապ խօսքեր պէտք չէ, Մանօլ, թող այս գիշեր ալ կովերը քիչ մը ուշ կերակրուին, կը տեսնեմ որ շատ կը յուզուիս եւ անհանգիստ կ'ըլլաս : Ի՛նչ կայ ծօ, ըսաւ վարպետորդի նպարավաճառը, հեգնաէան ծիծաղով մը :

\* \* \*

Տաք ըմպելիին (փուճջ)ը հիմակ պատրաստ էր, նպարավաճառը երկու գաւաթ լեցուց եւ դրաւ սեղանին վրայ, շոգիի ամպեր վեր կ'ելլէին, եւ եթէ այս անիծեալ կարագը չըլլար Մանօլ հոգի պիտի տար այս ըմպելիին համար :

Մանօլաքի, քեզի քիչ մ'ալ քթթըր հաց պատրաստեմ պայմանով որ վրայի կարագը դուն քսես, ըսաւ Քօսթի, այնպիսի անտարբերութեամբ որ Մանօլ կը կարծէր թէ ըրածը անձանօթ էր նպարավաճառին : Տապկած սառ ալ կայ. եթէ կ'ուզես անկէ ալ կրնաս ճաշակել, շարունակեց նպարավաճառը :

Խեղճ Մանօլ, ներսէն եւ դուրսէն տաքնալով անտանելի կացութեան էր մատնուած, զլխարկին տակ պահուած կարագին հալելը կ'զգար արդէն, եւ թաշկինակը բոլորովին իւղոտած էր կաթիլ կաթիլ երեսն ի վար հոսող կարագի քրտինքներն սրբելով : Քօսթի, իբր թէ բոլորովին անտեղեակ՝ Մանօլի կ'ըսէ թեան, շա-

բունակ փայտ կը նետէր վառարանին մէջ, որոյ առջին նստած էր Մանօլ սաքերը կրակարանին հպած :

Սարսափելի ցուբտ կ'ընէ այս գիշեր, բաւ Քօսթի, ցնցուելով եւ սարսուալ կեղծելով: բայց առ ինչ է ծօ, Մանօլաքի, դուն կը քրանիս կոր նէ', կերելի թէ մտողը մինակ ես եմ, ծօ, գլխարկդ ինչո՞ւ չես հաներ, կեցիր հանեմ ես եւ սեղանին վրայ դնեմ :

Ոչ, ոչ, գոչեց Մանօլ, երկու ձեռքերով գլխարկը կոխելով, ձգէ զիս որ երթամ, անհանդիստ կ'ըզգամ, հիւանդ եմ, կ'ազաչեմ թող որ երթամ, այլ եւս չեմ կրնար հոս կենալ :

Հալած կարագին<sup>\* \* \*</sup> հոսանքը սկսաւ խեղճ Մանօլի երեսն եւ վիզն ի վար վազել, հետեւանք երկու ձեռքով գլխարկը կոխելուն, բոլոր հանդերձներ իւրոտեցան, վիզն ի վար մարմինին վրայէն հոսեց հալած կարագը եւ կօշիկներուն վրայ իսկ տարած-

ուեցաւ, խեղճ Մանօլ կարծես իւրով լեցուած տակառի մը մէջ ինկած եւ ելած էր :

Է', պիտի երթաս հէ', լաւ, գիշեր բարի Մանօլաքի, գոչեց Քօսթի անվերջանալի քրքիջներով, կամբք բուկդ է, կրնաս երթալ: Միայն թէ — պօռաց Քօսթի Մանօլի ետեւէն, երբ այս փողոց էր ելած — գիտցած ըլլաս որ այս գիշերուան ինձ պատճառած զուարճութիւնդ տասն քաչ կարագի հետ չեմ փոխեր:

ԻՄԱՍՏՈՒՆ ԴԱՍԱԻՈՐԸ

Ատենօք դատաւոր մը կար որ իր դատական նուրբ արարքներով հըռչակաւոր էր եղած եւ ամէն տեղ տարածած էր իր համբաւ,

Ձին հեծած գէպի դատաւորին քաղաքը կ'երթար կրօնաւոր մը, որ սաուգէ թէ արդեօք բոլոր լսածները ստո՞յգ էին այդ դատաւորին նկատմամբ :

Ճամբան ծերուկի մը պատահեցաւ,

Տէր իմ, ըստ սա աղերսական ձայնով, գթա ինձ, յոգնած եմ, սա դիմացի քաղաքը կ'ուզեմ երթալ. զիս ձիուդ ետին նստեցուր :

Կրօնաւորը հաւանութիւն տուաւ, ծերուկը ձին հեծաւ : Երբ սակայն քաղաքին դրան հասաւ ծերուկը ձիէն վար իջննչ կը մերժէր :

Ինչո՞ւ ձիէն չես իջներ, հարցուց կրօնաւորը ծերուկին :

Ի՞նչ պէտք է իջնես եւ ոչ թէ ես ըստ ծերուկը անպատկառ ձայնով :

Բայց ձին իմս է, անիրաւ մարդ, պատասխանեց կրօնաւորը յուզմամբ :

Է՛հ, ահա քաղաքը հասանք. ըստ ծերուկը, կ'երթանք դատաստիին եւ նա անշուշտ ինձ ի նպատակ վճիռ պիտի արձակէ, երբ տեսնէ քեզ առոյգ եւ յաղթանդամ, իսկ զիս տկարակազմ եւ ծեր :

Եթէ այդպէս վճռէ, ըստ կրօնաւորը, ան ատեն բոլոր իմ լսածներս սուտ պէտք է ըլլան, անձամբ պիտի ստուգեմ : Զայս բտելով դատարան հասան, սակայն հարկ եղաւ սղա-

սել, քանզի երկու դատ կար արդէն սկսած :

Մտավաճառ մը եւ ձէթավաճառ մը դատ ունէին, առաջինը ներկայացած էր արիւնոտ հանդերձներով, իսկ միւսը ձէթով աղտոտած :

Մտավաճառը պատմեց, այս մարդուն խանութի գացի ձէթ գնելու, գրպանէս ափ մը դրամ հանեցի որ վճարեմ, դրամս անոր ցանկութիւն գրգռեց, իսկոյն ձեռքս բռնեց, իբր թէ զինքը կողոպտած ըլլայի, եւ զիս հոռ բերաւ ձեր առջին :

Ձէթավաճառը պատմեց, այս մարդուն շիշը ձէթով լեցուցի, ուղեց որ սակի մը փոխեմ, երբ գորոցոս բացի, ափ մը դրամ կորցեց, եւ պիտի փախչէր. բայց բռնեցի եւ հոս բերի : Դրամը իմս է :

Հոս թողէք դրամը եւ վազը եկէք, հրամայեց դատաւորը :

Երկրորդ դատը սկսաւ, գեղջուկ մը եւ ուսուցիչ մը ներկայացան կը-

նոջ մը հետ ի միասին : Ուսուցիչը  
կը պնդէր թէ գեղջուկը իր կինը  
առաւ փախաւ , գեղջուկը կը պնդէր  
թէ կինը իրենն է , եւ շատ տարի-  
ներէ ի վեր հետը ամուսնացած : Կինը  
համր էր եւ բառ մ'իսկ չէր խօսեր :

Հոս թողէք կինը , ըսաւ դատա-  
ւորը եւ վաղը եկէք :

\* \* \*

Կարգը եկաւ կրօնաւորին և ծերուկին  
Տէր դատաւոր , ըսաւ կրօնաւորը ,  
Ձեր քաղաք կուգայի վաճառք գնե-  
լու համար ճամբան այս թշուառա-  
կան ծերուկը խնդրեց որ զինքը  
ձիուս վրայ նստեցնեմ , գութս շար-  
ժեցաւ , ետիս հեծցուցի ձիուն վրայ ,  
հիմակ կը պնդէ որ ձին իրենն է :

Դատաւորը մօրուքը ձեռք առաւ ,  
եւ գլուխը քերեց — նշան մտահո-  
գութեան , վաղը հոս եկէք . ձեր-  
նիդ առ այժմ թող իմ ախոռս պահ-  
ուի , հրամայեց դատաւորը :

\* \* \*

Յաջորդ առաւօտուն ատեն բաց-  
ուեցաւ :

Դու կը պնդես , ըսաւ դատաւորը  
ձէթավաճառին , թէ մաւվաճառը  
դրամդ յախշտակեց գզրոցէն , սակայն  
ես քու ձեռքերէդ անցած դրամը  
գաւաթ մը ջուրի մէջ դրի , եւ ձէթի  
նշոյլ իսկ չգտայ ջուրին երեսը , ուս-  
տի կը վճռեմ որ դրամը մաւվաճա-  
ռինն է , եւ քեզի ալ 30 դաւազանի  
հարուած :

Ապա ներկայացան գեղջուկ եւ ու-  
սուցիչ լսելու իրենց վճիռ :

Կինը մէջտեղ կանգնեցուց դատա-  
ւորը եւ ըսաւ , այս երկուքն ալ կի-  
նը կը պահանջեն եւ չեն կրնար ապա-  
ցուցանել իրենց ըլլալն , կինն ալ  
համր է եւ չուզեր լուսարանել խըն-  
դիրը :

Ուստի այս առաւօտ այս կնոջ  
յանձնեցի իմ գրասեղանիս կարգադ-  
րութիւնը , գրիչ , թուղթ , կաղա-  
մար եւ գրեանք , նա այնպիսի կա-  
նոնաւոր կերպով մաքրեց , զետեղեց  
եւ կարգադրեց որ վստահ եմ թէ  
գիւղացի գործաւորի մը կին անհնար  
է որ այսպէս կարենայ , կինը , ուս-

տի , ուսուցիչին տուէք , իսկ գիւղացիին 30 գաւաղանի հարուած :

Կարգը եկաւ կրօնաւորին եւ ծերուկին :

Դատաւորը ծանօտ կանչեց եւ ըսաւ որ այս երկուքը ախտը տանի , նախ կրօնաւորը ախտ տարուեցաւ , սա ձիերուն մէջէն ո՛րն է քուկդ , հարցուց դատաւորը :

Ահաւասիկ այս է իմ ձիս ըսաւ կրօնաւորը :

Հաւ , դուրս ելիր , եւ թող ծերուկը ներս մտնէ , ըսաւ դատաւորը : Ծերուկը ախտ մտաւ ,

Քու ստացուածքդ կը ճանչնա՞ս , բարեկա՛մ , հարցուց դատաւորը ծերուկին :

Ձիս , անշուշտ , հարիւր ձիերու մէջէն իսկ կրնամ որոշել զանի , ահա սա է իմ ձիս , պատասխանեց ծերուկը :

Դատաւոր նորէն իր աթոռ նրստաւ , եւ հրամայեց որ ձին կրօնաւորին տան , իսկ ծերուկին 30 հարուած :

\* \* \*

Կրօնաւորը խոնարհութիւն ընելով դատաւորին առջեւ , հարցուց թէ ինչպէս կարող եղաւ գիտնալ թէ ձին իրեն կը վերաբերէր եւ չէ թէ ծերուկին , մինչ երկուքն ալ ճանչցած էին միեւնոյն ձին :

Հա՛ , ըսաւ դատաւորը , այդ շատ դիւրին է , քու հակառակորդդ շիտակ է որ ճանչցաւ ձին , սակայն ձիւն չճանչցաւ զնա , մինչ երբ դու մօտեցար ձիին , սա ճանչցաւ զքեզ եւ ամէն կերպով հասկցուց մեզ թէ իրեն քով եկողը բուն իր տէրն է :

Կրօնաւորը նորէն խոնարհութիւն ըրաւ դատաւորին առջեւ , երկար եւ բարեկեցիկ տարիներ մաղթեց , եւ տուն վերադարձաւ փորձառութեան պաշարը զգալապէս ճոխացած վիճակի մէջ :

Ամսոյս 23ին , Խարբերդի ընդհանրէն Մ. Կարապետ Կօչկակարեանի տան մէջ , տակաւին նմանը չստեւած ու չտեսնուած գիտական արտաքոյ կարգի նոր երեւոյթ մը տեղի ունեցաւ : Յիշեալն 3 — 4 ամիսէ ի վեր

հիւանդ էր . քթին վրայ պզտիկ վէրք մ'ունէր եւ վիրաբոյժը կ'ղարմանէր զայն շատոնց ի վեր : Նոյն առաւօտ սովորականին պէս իր անկողինն ու տակը փռուած կապերտը վերցնելով , հիւանդին կենդանագիրն իր մարմնոյն մանրամասնութեամբ հանդերձ , մերկ , ճերմակ ու կուրծքը միայն կանաչորակ , իր պառկած երկու յարկէ սենեկին չոր յատակին վրայ դրոշմուած կ'տեսնեն : Դիտողին անակնկալ մը կ'պատճառէր այս հողադառնանկարը , ա'յնչափ գեղեցիկ ու յատակ որ գլխուն մազերը , աչքերուն սառնենին ու ծիածանը , կողերուն նիհար ոսկրները , ոտքին եղունքներն ու քթին վրայի վէրքը մինչեւ իսկ խիստ սրոշ կը տեսնուէին : Սարբերդի ընդհանուր համայնքը , Թուրք թէ Հայ , այր թէ կին , Մ. կարապետին լուսանկարը տեսնելու կը վազէին : Տքդ. Միքայէլ եւ Հայ թէ օտար հաստատութեանց ծանօթ ուսուցիչներ հոն դիմեցին , սակայն երկար բարակ քննութենէ յետոյ ըս-

տոյգ ու բանաւոր բացատրութիւն մը չկրցան գտնել : Յիշեալ բժիշկը պատկերին ճակատին ու կուրծքին տեղէն քիչ մը հող , վիրաբոյժին դեղն ալ միասին առնելով մեկնեցաւ : Յարդ ստոյգ բացատրութիւն մը չսեցինք : Հիւանդին սենեակն արեւելքի ու հարաւի կողմն Յական փոքր լուսամուտներ ունի , որք իրարու հետ ուղիղ անկիւն մը կը կազմեն , եւ արեւուն կենսատու շողերն անկէ ճիշդ հիւանդին ճակտին վրայ կ'իյնան : Սենեակին յատակն ալ տեղւոյս սովորութեան համեմատ կովածրիք ու օղիի մսեա քսուած էր : Պատկերը մինչեւ իրիկուն մնալով , դիտողներու ձեռքի շիւումին ու լուսոյ ազդեցութեան տակ աւրուեցաւ քիչ մը : Վերջապէս , անյուժելի մնալուն համար , տեղւոյս հոշակաւոր մեկնիչն ու հիւանդին բարեկամ Մ. Յովհաննէս Դանիէլեանը հրաչք մը սեպելով , քերեցին զայն , Գիտուններու լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրենք այս երեւոյթին վրայ :

Սէլմա Քանց անուն աղջիկ մը , որ 1880 Օգոստ. Տին ծնած էր Պատէնի Գրտութեան Վէրդհայմ քաղաքին մէջ , պարզ բերեզակի մը զաւակ , բայց շատ խելացի ըլլալուն , ժամանակէն առաջ վարժարան դրուեցաւ : Վեց տարեկան հասակին մէջ ուղեղատապի հիւանդութեան հետեւանքով սաքերն ու ձեռքերն անդամալուծուեցան : Գարմանող բժիշկը թէեւ յուսաց որ աղջիկն իր տարիքին չընորհիւ կրնայ տոկալ եւ բժշկուիլ , բայց այս յոյսն ի դերեւ ելաւ : Ուրիշ բժիշկներ ալ կոչուելով աղջիկը մօտակայ հիւանդանոց մը տարուեցաւ խնամուելու , բայց ամէն դարմանն ու խնամք ապարդիւն մնացին եւ աղջիկը մնաց ձեռքով ու ոտքով անդամալոյծ որոց ամէն ոյժը , կարծես խելքին վրայ աւելցաւ : Խեղճ աղջիկն հօրը տունը դարձաւ իր խորթ մօր խնամքին եւ անկեղծ հոգածութեան տակ բաւական տտեն մնալէ ետք . չքաւորութեան դառնութիւնն պղտրով , փորձեց իր միակ անվթար

մնացած անդամով — լեզուովը — աշխատիլ իր անդամալոյծ միւս անդամներուն պակասն գգալի չընելու համար : Նախ եւ առաջ սկսաւ վարժուիլ լեզուով եւ շուրթներով գործածել ուտելիքի սպասները , շուրթներով կ'ըռնէր պատառաքաղն եւ լեզուովը կ'անջատէր կերակուրին պատանները . տակաւ այնպէս մը վարժուեցաւ որ հեղուկ ուտելիքով լեցուն դգալն ալ առանց թափելու բերնին կը տանէր : Ապա յաջողեցաւ բերնով գրելու , իր գիրերուն կանոնաւորութիւնն ու մաքրութիւնը տեսնողին զարմանք կը պատճառէին : Կարդալու ատեն բերնով կը դարձնէր գիրքին թերթերը : Վերջապէս յաջողեցաւ բերնով կարել , շուրթներով ասեղը կը կանգնեցնէր սեղանին վրայ , որուն առջեւ կը նստէր միշտ : Թելին մէկ ծայրն սքանչելի ճարպիկովթեամբ մը լեզուին ծայրովը կը ըռնէր եւ կապ մ'ընելով թելին միւս ծայրն ալ ասեղին ծակէն կ'անցընէր : Հնարագիւտ եւ չափազանց յարա-

տեւութեան ոգևով օժտուած այս աղ-  
ջիկն ամէն օր կ'աշխատէր նոր գիւ-  
տերով ընդարձակել իր գործունէու-  
թեան ասպարէզը : Տասը տարեկան  
հասակին մէջ հիւսելու ասեղ եւ  
դերձան խնդրեց : Մայրը տուաւ զա-  
նոնք իրեն , թէպէտ բնաւ չէր յու-  
սար որ աղջիկը պիտի կրնար հիւսել :  
Բայց որչափ զարմացաւ երբ երկար  
բացակայութենէ մը ետք տեսաւ որ  
աղջիկն հիւսել սովորած էր եւ կը  
հիւսէր : Նոյն իսկ հիւսուածքի մը  
սկզբնական կանոնները , գորս նոր  
սկսող մը անպատճառ ուրիշի մը հիւ-  
սելը տեսնելով կը սովորի , այս աղ-  
ջիկն ինքնիրեն սովորած էր : Մէկ  
ասեղը բռնելէն անմիջապէս ետք ,  
թելը բերնովը ձախ ուսին կողմը կը  
քաշէր եւ հիւսուածքի թելը կը դար-  
ձընէր , դարձեալ բերնով : Այսպէս  
պարզ հիւսուածքն յառաջ տանելով ,  
անցաւ կեռասեղով գործելու եւ սփոր  
պարզ տեսակէն անցաւ մինչեւ նուրբ  
եւ դժուարին ասեղնագործութեան :  
Սէլմա մաքուր ու կանոնաւոր գրել

սովրելուն պէս , ասեղնագործութեան  
մէջ ալ նշանաւոր եղաւ , իր սուր  
միտքն անդադար կերպով յառաջ կը  
մղէր զինքը . գծագրել ալ սովրեցաւ,  
եւ այնպիսի կատարելագործուած  
կերպով , որ իր ասեղնագործութեա-  
նը նկարներն ինք կը յօրինէր : Շնոր-  
հիւ իր գործունէութեան եւ իր խորթ  
մօր սիրազեղ հոգածութեան Սէլմա  
ուրախ կ'անցընէր իր օրերը , շատ  
հանգիստ էր եւ ամենեւին չէր ըզ-  
գար գրեթէ իր ձակատագրին դառ-  
նութիւնը . չէր դժգոհեր բնաւ , այլ  
ընդհակառակն իր քով գտնուողներն  
ալ կ'ուրախացնէր փոքրիկ , զեղեցիկ  
եւ աւուր պատշաճի բանաստեղծու-  
թիւններով , եւ իր բարեկամութիւնե-  
րը , որք անկեղծութեամբ կը սիրէին  
զինքը , իրենց դժուարին ու նեղ  
ժամերուն մէջ , աշխարհէ ձեռք քա-  
շած այս աղջկան կ'երթային խորհուրդ  
եւ սիրոփանք գտնել : Սէլմայի ան-  
դամները շահեցան , այլ այլաձեւե-  
ցան . ձեռքերն ու ոտքերն երկար ու  
վտիտ մնացին : Բայց իր թարմ դէմ-



քը , որուն վրայ երկու մտացի կապոյտ աչքեր կը շողային , մանկամարդի գեղածիծաղ երեւոյթն եւ հաճելի տեսքը չէր կորսնցուցած : Այն միակ գործարանը , որ զարմանահրաշ գործիք մ'եղած էր իրեն համար , այսինքն լեզուն , տակաւ սոսկալի երեւոյթ մ'առաւ : Բարակ , տափակ ու սրածայր , ու այնպիսի անհեթեթ երկայնութիւն մ'ունէր , որ կրնար մինչեւ աչքերն հասնիլ : Բայց հակառակ լեզուին այս երկարութեան , Սէլմա խօսած պահուն կը ջանար զուրս չձգել զայն բերնէն : Երկայնութենէն աւելի զարմանալի էր այդ գործարանին առաձգականութիւնն ու դիւրակորութիւնը : Իսկ մօրն ըսածին նայելով , Սէլմայի լեզուին այդ ամէն հանգամանքները գործածմամբ զարգացած էին . առաջին մանկութեան ատեն անոր լեզուն տարբերութիւն չունէր ուրիշ ազոց լեզուներէն : Սէլմա 1903 Հոկտ. 20ին մեռաւ երկօրեայ հիւանդութենէ մը ետքը :



## ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

Կ'ուզես հարկաւ որ հաւերգ, մա-  
նաւանդ ձմրան մէջ, երբ այնքան սուղ  
է հաւկիթ, շարունակ ածեն: Ուստի  
գարին խորովէ, առք ջրով եփէ եւ  
այս ջուրը խմցուր: Կտաւատի իւղէն  
եղած ու ֆեֆդիլ կոչուած նիւթը թէփի  
հետ խառնէ առք ջրով եւ կերցուր,  
եղինճի սերմ խաշէ եւ գարիի հետ  
խառնելով կերցուր, կաղնիի ալիւր  
ձէթի մրուր եւ ասոնց նման առքը-  
նող քաներ կերցուր եւ պիտի յաջո-  
ղիս շարունակ հաւկիթ ունենայ:

Ծմմբական թութուն հաւկիթին կե-  
ղելի պարունակած քառպօնաթ աը  
չօն սիւլֆաթ տը շօի կը փոխէ: որով  
կեղեւը կը թանձրանայ եւ օդի ան-  
թափանց կ'ըլլայ: ուստի հաւկիթը  
երկար ատեն կը դիմանայ, երբ ծծըմ-  
բական թութուով օծենք կեղեւը:

Լուիքը. — Ամէնուն ծանօթ սե-  
կամ կանանչ միջատ մէ: գարնան  
պտղատու ծառերուն եւ վարդենինե-  
րուն կը բռնատիրէ: Այս միջատները  
հազարներով կը բազմանան. գլխաւո-  
րաբար կը բնակին նոր ծիւերուն եւ  
թփիկներուն վրայ:

Դարմանք. — Զարձատիչ գործիքով  
(ըիւլվէրիզաթէօն) ծխախոտի լուծա-  
չուր ձարձատելու է:

Թաւամազ Լուիք. — Այս միջատն  
ալ կը յարձակի խնձորենիներուն վրայ  
եւ անոնց փայտը կը ծակծկէ, եղած  
գարմաններուն կը դիմադրէ: միջա-  
տասպան հեղուկներն բնաւ ազդե-  
ցութիւն չունին, էն լաւ միջոցը, ձրմ-  
բան ժամանակ իր թրթուրին հաւ-  
կիթներն ժողվելէ կը բաղկանայ:

Չիքապսուղի որդը. — Շատ վնասա-  
կար միջատ մէ, երկու շրջան ունի,  
մին տերեւներուն իսկ միւսն ալ ձի-  
թապտուղի հատերուն մէջ կ'անցնէ:

Դարմանք. — Մարտի վերջերը կամ

Ապրիլի սկիզբներ ասոր թրթուրը ան-  
րեւներուն վրայ տեսնուած ատեն սա՛-  
լուծաջուրը ձարձատելու է.

100	լիտր ջուր
2	քիլկրմ. նաֆթալին
5	» քարիւղ

Նաֆթալինը ջրոյ մէջ հալեցնելէ  
յետոյ քարիւղը աւելցնելու է: Այս  
թիթեռնիկները բոլորովին ոչնչացնե-  
լու համար հետեւեալ միջոցն ի գործ  
դնելու է.

Ապրիլի, մայիսի, օգոստոսի, սեպ-  
տեմբերի կամ նոյեմբերի մէջ, Զի-  
թաստանին մէջ տեղ տեղ 6—7 մէթր  
անջրպետով քարիւղախառն մացառ-  
ներ, յարդեր վառելու է: Թիթեռնիկ  
ները կրակին շուրջը կը հաւաքուին,  
ժողուելով ոչնչացնելու է:

Ծառերուն մամուռները. — Ծա-  
ռերը մաքրելու ատեն բունը ծածկող  
մամուռներն ալ մաքրել անհրաժեշտ  
է: Նախ հետեւեալ լուծաջրով թրջե-  
լու է ծառին բունը եւ ճիւղերը.

Երկաթի ծծմբատ	30	քիլկրմ
Ջուր	100	լիտր

Այս գործողութենէ յետոյ մամուռ-  
ները դիւրութեամբ քերուելով կրնան  
քակուիլ: —

Կբաձեփում. — Այս վերի դարմանը  
ընելէ 15 օր ետքը ծառերը կրածե-  
փել պէտք է: Այս գործողութիւնը  
ընելով, կեղևին տակ ապաստանած  
թրթուրներու հաւկիթները կ'ոչնչա-  
նան:

կրաքար	10	քիլկրմ.
Ջուր	100	լիտր

Որդեր. — Շատ որդեր կան. որոնք  
ծառերուն ներսի մասերուն մէջ մըտ-  
նելով, ծառին շուտով չորնալուն  
պատճառ կ'ըլլան:

Ատոնց առաջքն առնելու համար  
հետեւեալ լուծաջուրն գործածելու.

Ջուր	100	լիտր
սեւ օճառ	2	քիլկրմ
քարիւղ	1	լիտր

Աճառը տաք ջուրին մէջ հալեցնել  
պէտք է. երեք դարման կը բաւէ:

Քարիւղին տեղ բեւեկնոյ իսկու-  
թիւնն ալ կրնայ գործածուիլ:

Կաթնտու կով ունենալու համար  
հետեւեալ պայմաններուն ուշադիր  
գտնուելու է.

1. Երջիւրները բարակ եւ պզտիկ  
ըլլալ.

2. Մորթը կակուղ եւ փայլուն ըլլալ.

3. Չորսէ աւելի ծիծի պտուկ ու-  
նենալ.

4. Կաթնային գեղձը հաստ ըլլալ.

5. Կաթն, Գեղձին վերջացած մա-  
սին մէջ կազմուած փոսին խոր գըտ-  
նուիլ:

6. Բերնին մէջ լեզուին տակ գրա-  
նուած ակռայաձեւ մտտ ելեւէջները  
ճիւղաւոր ըլլալ:

7. Կարելի եղածին չափ իր յետոյքը  
կազմուած միզանցքին տրամապիծը  
լայն ըլլալ:

Թթենիներուն գօսացումը դարմա-  
նելու համար հետեւեալ լուծաջուրը  
պատրաստեցէք եւ զայն ամպոտ օր

մը կամ արեւը մարը մանելէն յետոյ  
ձարձատիչներով սրակեցէք ծառին ամ-  
բող կանանչ մասին վրայ:

Երկաթի ծծմբատ 2 տրամ  
ջուր 2 1/2 քաշ

Ասկէ զատ հողն ալ փորելով, ար-  
մատները ծածկող հողն եւս թրջելու  
եւ փորուած տեղն ալ լեցնելու է.  
1—2 անգամ տերեւներուն սրակումը  
կրկնելու է, շաբաթը անգամ մը:

Տարին չորս անգամ իւրաքանչիւր  
եղանակի սկիզբը (գարուն, աշուն  
եւն.) ձեր հաւերուն մաքրողա-  
կան տուէք. այս առթիւ իրենց խմե-  
լու ծառայող ջուրին մէջ սիւզֆաթ ջր  
սոս կամ սիւզֆաթ ջր մանրիկի խառ-  
նեցէք. մէկ քաշ ջուրի մէջ մէկ  
ապուրի դգալ Մէկ օր ամբողջ պէտք  
է այս ջուրը ձեր հաւերուն տրա-  
մադրութեան տակ գտնուի. որ ուրիշ  
ջուր չի գտնելով, կը պարտաւորին  
անպատճառ զայն խմել:

Գետնախնձորները պահելու **Արիակ**  
216 — Օր. Հաւաք. 06 10

գլխաւոր միջոցն հետեւեալն է .

100 լիթրա ջուրին մէջ 1—2 լիթրա ծծմբական թթուութեամբ ելցնելով գետնախինձորները թրջել եւ չորցնելով չոր եւ օդասուն տեղ մը մթերել պէտք է . թթուախառն հեղուկը փայտեայ ամանի մը մէջ պատրաստելու եւ յանկարծական եռացում յառաջ չբերելու համար . նախ ջուրը լեցնելու եւ յետոյ թթուն եւ փայտէ գաւազանիկով մը խառնելու է . Ծծրմբական թթուութեամբ, որ Պոմէյի թըթուաչափով 66<sup>0</sup> աստիճան կը ցուցնէ, քիլօն 40—50 փարայի կառնուի . 1 լիթրա ծծմբական թթուութեամբ կը կշռէ 1 քիլօ 840 կրամ :

Եթէ գետնախինձորի քանակ քիչ ըլլայ, սրածայր զմեղիով մը աչերը հանելով, ջոր եւ օդասուն տեղ մը պահել կը բաւէ :

ՍԵՊՈՒՀ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Պետւղները խոտորցնելու միջոցը . — Սաշոր եւ պարարտ խաղող, կեռաս, խինձոր, տանձ հասցնելու համար հե-

տեւեալ խառնուրդը գործածեցէք . 100 լիթր ջուրի մէջ 2 քիլօ երկաթի ծրծմբատ «գաճը գըպրըրը» խառնել ու յետոյ պտուղներուն եւ տերեւներուն վրայ սրակել, սա պայմանաւ որ խաղողը գետնի հասունցած . այսինքն  $\frac{2}{3}$  եզած ատենը գործողութիւնը կատարել ու ամիս մը վերջը գործողութիւնը կրկնել . միւս պտուղներուն ալ սոյն կերպով կը կատարուի :

Հաւկիթները երկար ատեն պահելու համար թէեւ շատ մը միջոցներ կան, սակայն ամէնէն ազէկ ու բնաիր միջոցը կրաջուրի (ֆիրէն սոլի) մէջ պահելն է . որ հիմա բոլոր եւրոպայի հաւկիթավաճառները ու երկրագործները մեծաքանակ հաւկիթ պահելու համար սոյն միջոցը կը գործածեն հետեւեալ կերպով .

Նախ եւ առաջ հաւկիթները կտրատներու կամ բզուկներու մէջ կը շարէք քով քովի ծայրերնին վար եւ գլուխնին վեր . բայց ուշադրութիւն ըրէք որ կոտորած եւ կամ շատ հին հաւկիթ չի գտնուի, երբ

մինչեւ վերջը լեցուին հաւկիթները, (բերնէն 5 մատի չափ վար) այն ատեն ձեր կրաջուրը լեցուցէք. որ պէտք է օր մը առաջ պատրաստած ըլլաք սա կերպով. 1 օխա անուշ ջուր առէք ու վրան 4 տր. կիր աւելցուցէք ու խառնեցէք, եւ թողէք որ հանգարտի, հանդարտելէն վերջը, գիրդը (քօրքոս) տակը մնալու պայմանաւ, կամաց մը երեսի ջուրը, որուն մէջ կիրը լուծուած է, կառնէք ու հաւկիթներէն, բերանն ալ գոցելով կը պահէք .

Չափերու ճշգուծեան ուշադրութիւն պէտք է ապա թէ ոչ հաւկիթները կը խաշեն, փորձեցէք ու գոհ պիտի մնաք մանաւանդ որ ծախք ալ չունի :

Ուրիշ միջոց. — Պաղ տեղ մը փոս մը բանալով այս փոսին ներքեւ 10 սանթիմ հաստութեամբ մօխիր լեցնել ու վրան հաւկիթները շարել եւ վրան նորէն 5 սանթիմի չափ մօխիր եւ այնպէս շարունակարար մինչեւ հաւկիթները հատին եւ ամենէն վերջի յարկին վրայ 10—15 սանթիմ

նորէն մօխիր տարածելով գործողութիւնը վերջացնել, այս կերպով պահպանուած հաւկիթները խորովելու չեն գար, որովհետեւ շուտ կը կոտորին:

Մեխակին (գարանփի)ին գոյնը փոխել. — Ինչ գոյնով ըլլայ թող ըլլայ, գոյնը փոխելուն համար իրիկուն առաւ մօխ ջուրով ջրել պէտք է:

Լեղի ձիթաիւղը անուցցնել. — Ներքեւը ծակ երեք հատ տակառ առէք եւ ծակերուն վրայ ալ 10—20 սանթիմի չափ երեք յարկի վրայ ածուխի փոշի դնելու է, եւ ձիթաիւղը եթէ այս ածուխէն քամենք երրորդ տակառին մէջ վազած ատենը լեղի ձիթաիւղը անուշի փոխուած կ'ըլլայ: Իսկ եթէ ձերմկցնել ուզէք այն ատեն յիշեալ ածուխին վրայ յարկ մըն ալ կենդանական ածուխ դրէք, այսինքն կենդանիներուն ու կօրը այրելէն վերջը ձեծեցէք եւ առաջ եկած փոշին գործածեցէք:

Ոջիլոս ցորենին դարմանումը. — Այս տեսակ ցորենները դարմանելու համար լուբիան (ֆաւոլայնա) աղէկ մը ծեծել ու մանրելէն վերջը յառաջ եկած ալիւրի պէս փոշին ցորենին վրայ ցանեցէք, այն ատեն ոջիլները չորս կողմը փախելով կը կորսուին :

Փաթաթեք պահել — Ասիկա շատ դիւրին է 100 օխա ջուրի մէջ 2 օխա ծծմբական թթու խառնել եւ յառաջ եկած խառնուրդին մէջ փաթաթէսները 12 ժամ թողելէն վերջը հանել :

Ուրիօ միջոց . — 100 օխա ջուրի մէջ 5 օխա աղ դնելով եռացնել եւ եռացած ատենը փաթաթէսները 2 ժամ թողելէն վերջը հանել :

Հաւեթուն ձու ամել սալ . — Եղիճի հունար (չարրկան քոխունու) 2 մաս սեւ ցորենով (գարս պուղսայ) եւ 3 մաս վուշի հունտով (ֆեթէն քոխունը) խառնելով խորովել եւ յետոյ մանրելէն վերջը ցորենի եւ կամ կաղինի

ալիւրով խառնել խմոր մը շինել եւ այս խմորը հաւերուն տալ, ասիկա Անգլիացիները գործածելուն համար «Անգլիական միջոցը» կ'անուանուի, եւ այսպէսով եթէ հաւ մը տարին 100 հաւկիթ ածէ այն ատեն 200էն աւելի կ'ածէ :

Կարմիր վարդի գոյնը կապոյթի փոխել . — Վարդենին դեռ ծաղիկ չի բացած 1000 մաս ջուրի 10 մաս երկաթի ծծմբատ (զանը զըպրզը գարս պոյա) հալեցնելով այս խառնուրդով 5 -- 6 անգամ ջրել կը բաւէ :

Հաւկիթին կեղեւը ինչի՞ կը գործածուի . — Մենք հաւկիթը ուտելէն վերջը կեղեւը կը նետենք, մինչդեռ ամենէն լաւ եւ օգտակար սնունդ մը կ'ըլլան հաւերուն եւ ուրիշ կենդանիներու, ասոնք եթէ մանրելով հաւերուն տանք այն ատեն ամածին 2—3 անգամը աւելի հաւկիթ կ'ածեն եւ հաւկիթներն ալ խոշոր եւ պինդ

կ'ըլան, փորձուած եւ հաստատուած է :

Անկուս խնձոր ձեռք բերել. — Խնձորը ուռիի տունկի մը վրայ պատուաստել եւ ասկէ առաջ եկած խընձորը անկուս կ'ըլայ :

Սունկով քունաւորուածներուն դարմանման. — Դգալ մը աղը գաւաթ մը տաք ջուրի մէջ հալեցնելէն վերջը, դգալ մըն ալ մանանեխի հունտ խառնելով յառաջ եկած խառնուրդը խմեցէք, իսկ եթէ սաստիկ ըլլայ այն ատեն հաւկթի ճերմկոց մըն ալ խմեցէք :

ԱՐԵԱԿ Յ. ՄՍՍԿՈՅԵԱՆ





# Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

## ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՄԻՐԱ ՊԷՋՃԵԱՆ

Ազգ. Հիւանդանոցի հիմնադիրը ծնած է 1771 Ապրիլ 10ին ի Եէնի Գաբու. Հայրն էր Կարսեցի վաճառական մահտեսի Պօլոս Ազա Պէղծի, որ 1768ին ատենները Պօլիս եկած էր եւ կը զբաղէր կտաւի վաճառականութեամբ: Պէղծեան՝ իր մանկութեան տարիները՝ հետեւեցաւ Մայր վարժարանի դասերուն, ուր հազիւ նախնական կրթութիւն մը ստացած, 1783ին չուկայ ելաւ՝ մետաքսի առեւտուրով զբաղելու: Քիչ ատենէն, շնորհիւ իր ուշիմ ու խոհական գործունէութեան, յաջողութիւն գտաւ. եւ իրր մետաքսի վաճառական՝ անուն մը շինեց, 1802ին Տիւզեան Յովհաննէս Չէլէպի Տէրութենէն ստանձնած ըլլալով մետաքսի մաքսին վարձակալութիւնը այդ գործին վերակացու կարգեց Պէղծեանը.

որ հաւատարմօրէն ծառայեց Տիւզեան գերդաստանին: Յովհաննէս Չէլէպի այնչափ վստահութիւն ունէր անոր վրայ որ Տիւզեան տան ընդհանուր վերակացու կարգած էր զայն: 1819 Սեպտ. 5ին Պէղծեանին յանձնուեցաւ Արքունի Փողերանոցին վերատեսչութեան պաշտօնը, զոր տասը տարիէ աւելի ժամանակամիջոց մը վարեց: Յարութիւն Ամիրա, իր պաշտօնավարութեան միջոցին հաւատարմօրէն ծառայեց Կայս. Կառավարութեան եւ արժանացաւ մեր Օգոստոս փառ Սուլթանին Մեծ Հօր՝ Երջանկայիշատակ Սուլթան Մահմուտի Բարձր շնորհներուն:

Պէղծեանի բարեգործութեանց գալով, երկար է անոնց շարքը: Կարելի է ըսել թէ վերջին դարերու մէջ ո՛չ մէկ հայ իրեն չափ խնամք տարած է եկեղեցական, կրթական եւ բարեգործական հայ հաստատութեանց բարգաւաճման: Ո՛չ միայն Եէտի Գուլէի Ազգ. Հիւանդանոցին հիմնադիրն ու բարերարը եղած է, այլ իր ջան-

քով ու նւթական օգնութեամբ կառուցած է Մայր Եկեղեցին, Պատրիարքարանը եւ Պէզճեան Ուսումնարանը, Գում-Գարուի դրսի Ս. Յարութիւն եկեղեցին՝ որուն շինութիւնը իր մահէն շատ ետքը՝ 1855ին աւարտեցաւ իր կտակած գումարով. Գում-Գարուի գուրսը մանչերու եւ աղջիկներու յատուկ երկու դպրոց՝ զորս իր ծախքով կանգնած է ի յիշատակ իր Հօր՝ Պէզճի Պօղոսի եւ իր Մօր Վառվառէի Պէզճեան այդ վերջին երկու վարժարաններուն ծախքը մշտնջենապէս ապահովելու համար 250,000 դրուշ տուած է Մայր եկեղեցւոյ, ի հաշիւ անոր շինութեան պարտքին որպէսզի տարուէ տարի քսակը երկու դրուշէն ամսական 1000 դրուշ վճարուի այդ վարժարաններուն: 1824ին Օրթագիւղ հաստատելով իր բնակութիւնը, տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցւոյն հարիւր հազար դրուշի պարտքը իր քսակէն վճարած է, ինք աւարտած է նոյնպէս Արքունի նաւարանին մէջ կառուցուած Ս. Յարութիւն եկեղեցւոյն շինութիւնը, որուն եկեղեցական զարդերն ու անօթները հոգացած է. ինչպէս շատ մը ուրիշ եկեղեցիներուն: Ինք է որ հիմնած է Բերայի մէջ աղջկանց ասեղնագործութեան վարժարան մը. որուն տարիներ ետքը պիտի յաջորդէր արդի արուեստանոցը: Նորոգած է Մայր Եկեղեցւոյ Ս. Հուսաւորիչ վարժարանը. Գարթալի դպրոցն ու եկեղեցին՝ որուն շրջափակին մէջ ազրիւր մը կառուցանել տուած է: Չանաք Գալէի եւ Կէլիպօլուի եկեղեցիներուն յրաժ օգնութիւններէն զատ, իր շնորհիւ վճարուած են Էտիրնէի եւ Մալկարայի հայ եկեղեցիներուն պարտքերը:

1829ին Պոլսոյ աղքատներուն նուիրած է 100,000 դրուշ եւ իր նախաձեռնութեամբ է՝ որ հաստատուած է՝ 1832ին. տնանկաց մատակարարութիւնը, 36 անդամներով, որոնք վեց կարգի բաժնուած էին: Արդի աղքատախնամներուն գաղափարն էր որ կը յղանար Պէզճեան եւ այդ հաստա-

տութիւնը մեծ մխիթարութիւն մը կուտար ժամանակին բոլոր հայ կարօտեալներուն :

Կրօնասէր, աղքատասէր եւ զըզրոցասէր Ամիրան մեծ սէր ունէր նաեւ հայ գրականութեան վրայ : Իր ժամանակակից ամիրաներուն մէջ չի կար մէկը որ այնքան մտերիմ ըլլար իրեն, որքան Գրիգոր Պատուելի Փէշտիմալճեան, իր ատենին Պօլսեցի հայ գրագէտներուն ամէնէն հմուտն ու նշանաւորը : Անոր խորհրդովն էր որ տպագրել տուաւ Գէորգ պատուելիի պարսկահայ բառգիրքը : Պէզճեան սատարած է նաեւ Հայկազեան բառգրքին տպագրութեան, որ այնքան օգտակար եղած է հայ լեզուի մշակման եւ զարգացման տեսակէտով :

Պէզճեան՝ Պատրիարքարանի գործերուն մէջ իր ժամանակին ամենէն ազդեցիկ անձնաւորութիւնը եղած է : Իր ջանքով է որ 1830ին ձեռք բերուած է Կոյս : Հրովարտակ մը՝ որ կ'ապահովէ Երուսաղէմի Ս. փրկիչ Վանքին Հայոց սեպհականութիւն ըլ-

լալը : 1920ին հրաւէր սիրոյ ի միաբանական ձեռնարկին մէջ ինք եղած է գլխաւոր ղերակատարներէն մէկը, թէեւ այդ բանը շատ սուղի նստած է իրեն :

Պէզճեան՝ իբր Պետական պաշտօնեայ եւ իբր Հայ գիտցած է կատարել իր պարտքը : Ժրաջան, աշակուրջ, հանճարեղ, յաջողած է գրեթէ իր բոլոր ձեռնարկներուն մէջ. իր ազգակիցներուն պատկառանք եւ սէր ազդելով եւ իր օրինակովը հրաիրելով զանոնք բարեգործութեան : Այնպէս որ իր մահը, որ պատահեցաւ 1834 Յունուար 3ին, ճշմարիտ սուգ մը եղաւ ազգին համար, եւ ցաւ պատճառեց կառավարական շրջանակներու մէջ ալ, ուր այնքան մաքուր համբաւ մը չինած եւ այնքան սիրուած էր :

Կայսերական արտօնագրով Պէզճեան Յարութիւն ամիրա թաղուած է Մայր Եկեղեցին, որուն մէջ իր կենդանութեանը ատեն ինքն իսկ շինել տուած էր իր գերեզմանը :

# Վ Ի Ճ Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն



Ռուսիոյ Զարբ բոպէն 324 մարգ = 6 զբշ:  
 եկամուտ ունի, ժամը 19,440, օրը 466,560,  
 տարին 170.294,400, ձօն Բօքֆէլլըր կը գերա-  
 ղանցէ Զարբ, նա ունի բոպէն 400 մարգ եկա-  
 մուտ, ժամը 24,000, օրը 576,000, տարին  
 210.240,000, կան 12 Ա.մերիկացիներ որ Զարեհ  
 աւելի հնչուն դրամ կրնան ցոյց տալ, Բօք-  
 ֆէլլըր ունի 1 միլիոտ 200 միլիօն, ձէյ Կուլտ  
 320 միլիօն, Քարնէկիւր տարեկան եկամուտն է  
 100 միլիօն, Ռըսսըլ Սէյճի 32 միլիօն, ձէյ  
 Կուլտի 24 միլիօն և Մօրիսանի 20 միլիօն:

Ճանճը 120 հաւկիթ կ'ածէ, որոյ իւրա-  
 քանչիւրը 3 շաբաթէն կատարեալ ճանճ կ'ըլ-  
 լայ, հետեւապէս մէկ հատիկ ճանճը մէկ ամ-  
 սուան մէջ 25 միլիոտ կ'ըլլայ:

Միջին հաշուով Շուէտ Նորվէկիացիք 50  
 տարեկան կ'ըլլան, Անգլիացիք 45<sup>1</sup>/<sub>2</sub>, Պէլ-  
 ճիացիք 44 տարեկան և 11 ամսուան, Գաղ-  
 ղիացիք 43<sup>1</sup>/<sub>2</sub>, Աւստրիացիք 39<sup>2</sup>/<sub>3</sub>, Բրուսիա-  
 յիք 39, Պաւիերացիք 36 և Սպանիացիք 32<sup>1</sup>/<sub>2</sub>:

Պայքալ է էն խոր լիճ, 1350 մէթրո խոր է,  
 մակերեսը ծովէն 405 մէթրո բարձր է, իսկ

յատակը ծովին մակերեսէն 900 մէթրո վար է:

Հիւս. բեւեռին հասնելու համար 382 քի-  
 լօմէթրո միայն մնացած է մինչ հարաւայինին  
 հասնելու համար գեռ 1242 քիլօմէթրո կը  
 մնայ:

Լոնտոնի կենդանաբանական պարտէզին  
 մէջ կրիաներ կան որ 1<sup>1</sup>/<sub>2</sub> մէթրո երկայն և 1  
 մէթրո բարձր են և 18 ամիս առանց ո' ե է  
 սնունդի կրնան ապրիլ:

Հալանայէ 1903ի մէջ 208<sup>1</sup>/<sub>2</sub> միլիօն, սի-  
 կարա արտածուած է:

Գիտա. որնեքէն մինչ ցարդ 900 հատ միայն  
 գտնուած են, որոց 200 ժ.թ. գարուն մէջ:

Աշխարհիս էն հզոր փարոսը Հէլկոլանտ  
 կղզիին վրայինն է, 30 միլիօն ճրագի զօրու-  
 թիւն ունի արձակած լոյսը, և երբ մշուշ չկայ  
 40-64 քիլօմէթրո տեղ կը լուսաւորէ:

Ժան Քուլօն Գաղղիացին ունի 3<sup>1</sup>/<sub>2</sub> մէթրո  
 երկայն մօրուք որ երբ կ'անդնի անոր 2<sup>1</sup>/<sub>4</sub>ը  
 գետեկը կը փռուի պեխերուն ծայրերը մինչև  
 իրեն ծունկերը կը հասնին:

Լոնտոնի թանգարանը աշխարհացոյց գրեթե  
 մը կայ որ 213 տանթիմէթրո թանձր է. աշ-  
 խարհիս էն հսկայ գիրքն է այս:

Մեծն Պետրոսի արձանը աշխարհիս է. մեծն է, 1 միլիոն 100,000 ֆլւօ կը կշռէ:

Միացեալ Նահանգաց գանձին մէջ 300 թօնօ = 1 տակառաչափ = 1016 ֆլւօ ոսկի կը գտնուի:

Նարոյի ծոցին լուսանկարը աշխարհիս մէջ մէկ հատիկ է, ունի 40 ոտք երկայնութիւն և 5 ոտք լայնութիւն:

Նոր կտակարանը 60 ժամէն կրնայ կարգալ հասարակ ընթերցող մը, օրը միայն 2 ժամ կարգալով մէկ ամիսէն, հիանային սակայն այս է որ 60 տարի շարունակ կրնանք կարգալ Ս. Գիրք և միշտ ու շարունակ նոր իմաստութիւն գտնել անոր մէջ:

Ափրիկէի Վ. քիթ օրիս ջրվճի 35 միլիօն ձիու զօրութիւն ունի, Նիսկարան միայն 7 միլիօն:

Միացեալ Նահանգներ 1902ին տրտադրեցին, 81 միլիօն տակառաչափ քարիւղ, Ռուսիա 80<sup>1</sup>/<sub>2</sub> միլիօն մինչ աշխարհիս մնացեալ մասերն 16 միլիօն միայն:

Ստորերկրեայ ջուրերը եթէ ցամաքը ողողէին 3000 ոտք բարձրութեամբ պիտի ծածկէին երկիրը «Անդունդին աղբիւրներ բաց»

ուեցան» կ'ըսէ Ս. Գիրքը ըրհեղեղի նկարագրութիւնը բրած տան:

Բոլոր երկրի վրայ 838,216 ֆլւօմէթրօ երկաթուղի կար, որոյ 421,571ը Ամերիկայի կը պատկանի, 296,051ը Եւրոպայի, մնացեալը Ասիայի, Ափրիկէի, և Աւստրալիայի միայն Միացեալ Նահանգներ ունին 325,777 ֆլւօմէթրօ երկաթուղի, Գերմանիա 53 700, Ռուսիա 52,399, Գաղղիա 44,654, Եւրոպայի գիծերուն համար ծախսուած է 8872 միլիառ ֆրանք, մնացեալներուն համար 90<sup>1</sup>/<sub>3</sub> միլիառ, ի միասին 170 միլիառ ֆրանք: Այս գումար եթէ լիբայի վերածենք և քով քովի շարենք 11 800 ֆլւօմէթրօ տեղ կ'երկարի, 6800 երկաթուղիի վաճառարարձ կառք պէտք է զայն փոխադրելու իւրաքանչիւր 10,000 ֆլւօ տարողութիւնով:

Ամերիկայի մէջ տարին 30 միլիօն կեղծ սկուայ կը պատրաստուի, տարբեր գոյներով, Հիւսիսային և միջին Եւրոպա տժգոյն սպիտակ կ'ուզէ, Սլաւիա և Իտալիա կաթի նման ճերմակ կ'ուզեն, Չին, Ճարան, և Ռուսիա մէկ մաս կապտագոյն և սեւի մօտ:

Չուլուներն վազող ժողովուրդ են, ոմանք 6 ժամէն 90 ֆլւօմէթրօ կրնան վաղել, ժամը 12-13 ֆլւօմէթրօ երթալ սովորական է:

Իւրաքանչիւր Հոլանտացիի 23/4 քիլօ ծխա-  
խոտ բաժին կ'իյնայ-տարեկան. Պէլճիքացիի  
21/4, Թուրքիացիի 2, Հիւս. Ամերիկացիի 13/4,  
Գերմանք, Գաղղիացիք, Սպանիացիք, Իտա-  
լացիք. և Անգղիացիք միայն 550 կրամ:

Աշխարհիս մեծագոյն եկեղեցիներն են, Ս.  
Պետրոսի Տաճարը ի Հռոմ, որ 54,000 հոգի  
կրնայ պարունակել, Միլանի Մայր Եկեղեցին  
37,000, Հռոմի Ս. Պողոսի Եկեղեցին 35 000,  
Քոլօնիայի Մայր Եկեղեցին 30 000, Լոնտոնի  
Ս. Պողոսի Եկեղեցին 25,000, Նոյնչպի նաև  
Պոլօնիայի Ս. Բէթրօնիսիօսի Եկեղեցին, Հռոմի  
Ս. Յովհան Եկեղեցին 22,000 Նօթր Ծամ ի  
Բարիզ 21 000, Նիւ Եօրքի անցեալ տարի  
կառուցեալ Եկեղեցին 18 000, Վիեննայի Ս.  
Ստեփաննոս Եկեղեցին 12,000, Պոլօնիայի Ս.  
Տօմինիկոս Եկեղեցին 11,400, Միւնիխի Ֆրա-  
ուէնքիբրհէ Եկեղեցին 11,000, Վենետիկի Ս.  
Մարքո Եկեղեցին 7,000

Կոյր կիներուն կրկնապատիկը կոյր սլրբէ  
կան աշխարհիս մէջ:

Էն մեծ թնդանօթը Բրուքի գործարան  
ձուլած է. 1180 քիլօ ծանր է. և 19 քիլօմէթր  
հեռու ուռմբ կ'արձակէ, մէկ անգամին ալ  
6000 մարքի (6 զրշ.) վաւօդ կ'սպառէ:

Յէթօն կոչուած օձ մը կայ որ ամէն կեն-  
դանիէ աւելի կողոսկր ունի-320 զրդ, նոյն  
օձէն հատ մը մեռաւ Բարիզի կենդանաբա-

նական պարտեղին մէջ երկու տարի, 5 ամիս  
և 3 օր ծով պահելէ ետև:

Տեսակ մը մուկ կայ որոյ սիրտ ըսպէն 150  
անգամ կը զարնէ, մինչ խոր քնոյ մէջ միայն  
ըսպէն 15 անգամ:

Կատարելութեան հասած կէտ ձուկը 100  
թօնօ կը կշռէ, այս հաւասար 80 փիղի կամ  
400 արջու ծանրութեան, էն մեծ կէտ ձուկը  
21-22 մէթրօ երկայն է:

Ներկայիս միայն 10,000 փիղ կան աշ-  
խարհի մէջ, 1875ին անոնց թիւը քառորդ  
միլիօն էր:

Ձին, ժիրաֆը ընձուղա և ջայլամը ցա-  
մաքային կենդանեաց մէջ էն խոշոր աչքերն  
ունին:

Մարդոց կէտը 17րդ. տարին չթեւակոխած  
կը մեռնին, 1000էն մէկը 60 տարեկան կ'ըլլայ:

Մարդուս հասակը 50րդ. տարիէն սկսեալ  
կը կարճանայ մինչև 90րդ. տարի 3 ասնթիւ-  
մէթր կը կարճանայ մարդ:

Ուղեղին ծանրութիւնը չէ նշան իմացա-  
կանութեան, Եւրոպացւոց ուղեղը միջին հաշ-  
ուով 1390-1418 կրամ կը կշռէ, 35 լուսնոտ-  
ներու ուղեղներ 1420-1560 կրամ կշռած է,

2 յիմարներու ուղեղ 1415 կրամ կշռած է, լուսնոտները մեծ ուղեղ ունին:

Գերմանիոյ առաջին օրաթերթը 1524ին հրատարակուեցաւ:

Եւքաթանի մէջ (Ամերիկա) 64 հաս լքեալ քաղաքներ կան:

Բոլոր աշխարհի մէջ Յունիսն է միակ ամբոս սրդոյ մէջ էն շատ ամուսնուած իւններ կը կրնքուն:

Սինա լեռան վրայի Սուրբ Կատարինէ վանքը 1400 տարի է ի վեր ոչ մի կին մտած է:

Աշխարհի թղթերուն իւրաքանչիւր 100 քաշի միայն 6 քաշը գրքի համար կը գործածուի:

Ամէն բողե 67 մահ է 70 ծնունդ կը պատահի երկրագունտիս վրայ:

Քալիֆօրնիայի մէջ շարքի բանջար կայ որ  $1\frac{1}{2}$  մէթրո երկայնութիւն է 90 քիլո ծանրութիւն ունի:

Եւրոպական Ռուսիոյ մէջ 1901ին 8681 սպաննութիւն գործուեցաւ, ըսել է օրական 20 հաս:

Բարիկը 2,600,000 բնակչաց 1,200,000 օտար կամ գաւառացի են:

Աշխարհիս ամենափոքր համալսարանը Ափրիկէի (Սիերա Լեօնէի) մէջ է, ունի 20 ուսանող և 5 բրոֆէսոր:

Հռովմ 2684 տարեկան է, Մարտէլ 2500. Բասըլ (Գերմանիա) 1913ին 1000 տարեկան պիտի ըլլայ:

Ամերիկայի մէջ 1902 1903 երկամ ուղիի արկածի զոհ եղան 3554 մեռեալ և 49,997 վիրաւորեալ, կորուստ 48 միլիօն ֆր. Մեծն Բրիտանիոյ մէջ 1902ին ոչ մի հատիկ մահ պատահած է երկամ ուղիի պատճառաւ. միայն 2 հաս 1903ին:

Նիւ Եօրքի թրամվայներէն 1903ին 558 մահ է պատճառուած, Լոնտոնի թրամվայներ որ 10 անգամ աւելի են քան Նիւ Եօրքիիններուն միայն 158 մահ են պատճառած:

Շուէտ է երանելի մայրն աշխարհի, հոն 1000էն միայն  $16\frac{1}{2}$  մահ կը պատահի:

Աշխարհիս մէջ կան 3064 լեզուներ և 1000է աւելի կրօնքներ, այլ և կին մարդոց թիւ գրեթէ հասասար է. մարդոց կենաց տեւողութիւնն է միջին հաշուով միայն 33 տարի:

Սուրբ Լորէնս գետ (Հիւս. Ամերիկա) տարուան 4 ամիսը շարունակ սաստով ծածկուած է:

Նորվեկիոյ Համրֆելտթ քաղաքը ձմրան մէջ ամբողջ 28 օր արև բնաւ չտեսներ:

Քօրալ (բուստ) շատ կամայց կ'աճի, միայն մէկ մէթրո 333 տարուան մէջ:

Աչքով տեսնուած երկնից կամարին վրայ 120 միլիօն աստղեր կը գտնուին:

Եւրոպայի մէջ էն երկայնակեացներն են Շուէտացիք, Սլոանիացիք էն կարճ կեանք ունեցողներն, Շուէտի մէջ կենաց միջին տեւողութիւնն է 50, Անգլիոյ մէջ 45, Պելճիքայի մէջ 44, Գաղղիոյ մէջ 43, Աւստրիոյ մէջ 40 Բրուսելոյ և Իտալիոյ մէջ 39, Պալէստինոյ մէջ 36, Սլոանիոյ մէջ 32:

Հողանտայի Պրէօք քաղաքը աշխարհի էն մաքուրն է, ունի 2700 բնակիչ, ով որ փոքոր թղթի կտոր մը նետէ 6 զր. տուգանք կուտայ, տարին մի անգամ լուացարար կիներ ամէն տուն տանիքէն մինչև փողօցին դուռը շփելով կը մաքրեն, և ներսի և դուրսի պատերը պատանա կ'ընեն, կառավարութիւնը ընել կուտայ զայս և բնակիչք փարս մը չեն վճարեր այս մաքրութեանց համար:

Էն լաւ հանքածուխը Աւստրալիա կը գտ-

նուի, որոյ մէկ թօնօն 500 խորանարդ սաք կազ կ'արտադրէ, ուրիշ տեղի հանքածուխները հազիւ ասոր կեսը կ'արտադրեն:

Հիւսիսային բււեւոնին 382 քիլօմէթրօ տեղը դեռ չէ խուզարկուած, Հարաւային բււեւոնին հասնելու դեռ 1242 քիլօմէթրօ կը մնայ:

Յարդ ծանօթ 13,000 տեսակ ձուկերուն 2275 տեսակը անոյր ջուրի մէջ կ'ապրին:

Ատլանտեան օվկիանին ցարդ չափուած մասերուն էն խորը 8491 մէթրօ է, այս՝ Բօրթօ Բիքոյէ 160 քիլօմէթրօ հեռի տեղն է:

Եւրոպայի մէջ ամէն օր 63,880,000 կով կը կթուի:

Հուայթ Սթար ընկերութեան Պայթիկ շագենաւը 221 մէթրօ երկայն, 23 լայն և 15 խոր է, ունի 23,000 թօնօ տարողութիւն, 13,000 ձիւզ գորութիւն, 16-17 հանգոյց արագութիւն, 3000 ծամրօրդ կրկն ամակ, ունի 300 նաւազ և ամէն հնարաւոր միջոց գործածուած է ուղեւորաց հանգստութեան համար:

Մէկ տարուան մէջ հատ մը ցորենը 800 հատ կ'ըլլայ, Բ. տարին 640,000 հատ, Գ. տարին 512 միլիօն, հատ մը ցորեն 40 հաղարակրամ կը կշուէ, սոյա 512 միլիօնը 20,480 քիլօ:



Մագի երկայնութեան առաջին միջանակ շահեցաւ, Օր. Ռօզ, ունէր 1 մէթր և 83 սանթիմէթր երկայն մազ, երկրորդ միջանակ արուեցաւ 1 մէթր և 79 սանթիմէթր երկայն մազ ունեցողի մը և երրորդը 1 մէթր և 53 սանթիմէթր ունեցողին:

Ճարտնցիք մարտութեան մասին Հօլանտան կը գերազանցեն, Թօփօ ունի 800 բաղնիք որ 1800 հոգիի համար հատ մը ըսել է, որը 300,000 հոգի կ'այցեղին այս բաղնիքները, էն փառաւոր բաղնիքին մէջ 10 փարա վճարելով կրնան լուսացուիլ:

Սովորական Թրէնը Գաղղոյ մէջ ժամը 93 քիլօմ' ճամբայ կ'առնէ, Անգլիոյ մէջ 85, Գերմանիոյ 82, Պելճիոյ 79, Հոլանտայի 77, Աւստրիոյ 73, Իտալիոյ 72, Ռուսիոյ 61, Տաշիմարքի 57, Թուրքիոյ 42, Պուլկարիոյ 35, և Յունաստանի մէջ 33:

Հրաբուխներուն զոհերն են 79ին Պոմպէի, 50,000 մեռեալ. 1667ին Տամախա, 80,000-1693ին Արկիլիս 100,000-1703ին Եէաօ (Ճարտն) 210,000-1731ին Բեքինի մօտ 120 000-1746ին Բէրու 18,000-1755ին Լիզլոյն 50,000, 1797ին Անտեան լերանց 40,000-1812ին Գարաբաս 12,000 1868ին Բէրու 20,000-1883ին Ժափա 35,000-1895ին Ճարտն 51,000-1902ին Սէն Բիէռ 40,000:

Ամերիկայի մէջ Սթէյս ծուլութեան միջոցը գտեր է, այժմ' զայն ջնջելու միջոցը կ'ուսումնասիրէ ֆալսիսան:

Եթէ աշխարհս իր ծաւալին համար 100 զր. արժէ, լուսինը պիտի արժէ 60 փարա իսկ Արեգակը 40 միլիառ գահեկան, ասով հասկըցիր իւրաքանչիւրի մեծութիւնս:

Մեր գործածած Թունանշաններ թէ և Արաբական կը կոչենք սակայն Արաբները զանոնք Հնդկական կը կոչեն 1-9 և ոչինչ համարուած սակայն ամենակարեւորն Օ (զէրօն) Հնդկական ծնունդ ունի:

Վոլկայի (Ռուսիա) դաշտերուն մէջ տարուան 90 որը կ'անձրեւէ հարաւային Գերմանիայի մէջ 131 օր, Գաղղիոյ, Հիւսիս. Գերմանիոյ և Ֆինլանտայի ծոցին մօտ 155 օր, Բօլնիայի մէջ 158, Հոլանտայի 170 Իրլանտայի Արեւել. կողմը 208, որքան ծովու մօտ այնքան շատ անձրեւային օրեր, դէպի ներս ցամաքը սակաւածիւ, Կեդրոնական Եւրոպայի մէջ երկու անգամ' աւելի անձրեւոտ օրեր, քան Արեւել. մասին մէջ:

Աշխարհիս ամենէն բարձր բնակարանը Գիպեդի մէջ մենտոտան մ'է, երկրիս մոսկերեւոյթէն 5340 մէթր բարձր, իսկ Մ'օն Պրանի դիտարանն հազիւ 4700 մէթր բարձրութեան վրայ շինուած է:

Չինական օրագիր մը (Բեքինի Թանր) եօթն տարբեր լեզուով կը հրատարակուի, չինարէն, ճարտնեքէն, անգլիերէն, գերմաներէն, ֆրանսերէն, և իտալերէն։

Գերմանիոյ և գերմանական ստացուածոց մէջ Պիդմարքի անուան 301 արձան կամ յիշատակարան կը գտնուի։

Ռուսիոյ մէջ, մանաւանդ ի Բեդերսպուրկ փողոցները գինով վիճակի մէջ գտնուողներուն անուաններն և հասցէները կը հրատարակուին և յատուկ ազգերով հանրային տեղեր կը փակցուին, առանց նկատողութեան աննելու անոնց ընկերային գիրքը կամ սեւը։

1879էն մինչև 1900 հրդեհի դէմ ֆրանսական սպանտագրական ընկերութիւնը 326 միլիօն ֆր. տուրք վճարած են տէրութեան, այնինչ այսչափ ժամանակամիջոցի մէջ բաժնետէսք 308,898,700 ֆր շահարածին տուած են։

Յրոնասայի մէջ այսօր 44,888 քիլօմէթր երկաթուղի կայ և 5408 քիլօմէթր թրամուէյ։

Ռատիօմը, որ վերջին ամենէն հրաշալի գիւտն է, կարող է 30 հարիւրամէդր հաստութեամբ երկաթեայ բլրքներ թափանցել։

Մէկ միլիաւր՝ արծաթ գլումով 5 միլիօն

քիլօկրամ կը կշռէ, սակիով 322,580 քիլօկրամ և 1000 ֆրանց պանքիօթներով 1780 քիլօկրամ։

Մարդուս արմուկն ութ սակր ունի, ձեռքի սփն հինգ և մտաները 14։

Սոխակի երգը մէկ ու կէս քիլօմէդր հեռաւորութենէ կը լսուի։

Ճարտնի թատրոններուն մէջ հականիշ չեն տար, այլ դուրս ելնողին ափին մէջ թատրոնին անունը թաց կնիքով կը դրոշմեն։

Չինու մէջ հինգ օրուան բանտարկութեան կը դատապարտուի այն մարդն որ կը բարկանայ և իր բարկութիւնը կը ցուցնէ բազմութեան մէջ։

Պօսքնէ զարնուած հեռագիր մը վանքուօ վըրի և Աւստրալիոյ ճամբով ճիշտ 2360 վայրկեանէն կամ 39 ժամէն աշխարհիս շրջանը կ'ընէ։

Աշխարհիս ամենէն հինաւուրց ծառը կօս կղզւոյն մէջ կը գտնուի. անիկա սօսի (չընար աղաճը) է, որուն տակ կը դատախօսէր Հիբոկրատս Այսօր 2500 տարեկան է. իր բունը տարը մէդր տարածութիւն ունի, և երկու ամենէն խոշոր ոտտերը կը վնասներով ամրապնդուած են, ամէն գարնան տերև կուտայ։

Մարդկային կմտաբք 208 սակր ունի, առանց հաշուելու ահաւները:

Ձինու մէջ ժամացոյցները մերիններուն ճիշդ հակառակն են, հոն ժամացոյցի տարտակը կը դառնայ և սլաքները կեցած են:

Իրլանտայի մէջ տարին 208 օր կ'անձրուէ, Անգլիոյ մէջ 150 օր. Սիպերիոյ մէջ 60 օր, իսկ Ձինու մէկ քանի գաւառներու մէջ տարին հազիւ մէկ քանի օր:

Մանիլայի մէջ 2-3 մէդր երկայնութեամբ բոլորովին անփաստ օձեր մուկերն հալածելու համար կատուի տեղ կը գործածուին սուսուներու մէջ:

Յրանսայի խնայողական սնտուկներուն մէջ 694,876 ֆրանքի 14,473 հաշիւ կայ երեսուն տարիէ ի վեր լքուած:

Յրանսայի անհատական հարստութիւնը 196,235 միլիօնի կը հասնի, թէ՛ ֆրանսական և թէ՛ օտար ֆոնտոներով ունեցած գումարն է 86,882 միլիօն, ըսել է միջին հաշուով մէն մի բնակչի գլուխ 2250 ֆրանք դրամագլուխ և 82,25 ֆր. հասոյթ:

Արեւն երեք հարիւր քսան և չորս հազար անգամ աւելի ծանր է Երկրէն:

Հոյանտա և Պելճիքա ամենէն շատ ծխախոտ կ'սպառեն, տանցով վերջը կուգան Զուրիցերիա, Պրագիլիա, և Թուրքիա:

Անգլիոյ Պանքոյին պանքնօթները տար փարսոյով կը շինուին:

Ճարտնի շատ վաճառատուներու մէջ յաճախորդին ապրանք ցուցնելէ առաջ թէյ և կարկանդակ կը հրամայեն:

Աշխարհիս ամենէն մեծ սակիի ձյլը 70 քիլօ կը կշռէ և Աւստրալիայի մէջ արծաթի հանքէ մը հանուած է 1888ին:

Ձինու մէջ թէյին քիլօն 2 զրշ. է:

Չոյլամի հաւկիթը մէկ քիլօ 350 կրամ կը կշռէ, և պարունակութիւնն ալ 24 հասարակ հաւկիթի կը հաւասարի:

Աւաջին երկաթուղին Անգլիոյ մէջ շինուեցաւ 1825ին, Յրանսայի և Աւստրիոյ մէջ՝ 1828ին, Միացեալ Նահանգաց մէջ՝ 1829ին, Պելճիոյ և Գերմանիոյ մէջ՝ 1838ին, Ռուսիոյ մէջ՝ 1838ին և Իտալիոյ մէջ՝ 1839ին:

Դաշնակի ձայնն ուելի անուշ կ'երնէ երբ պատէն քիչ մը հեռու դրուած ըլլայ:

Ծովու բոլիբօտը (սխտարօտ) արարչագործութեան ամենէն յամուս կենդանին է, եթէ երկուքի բաժնես, երկու կ'ըլլայ, և եթէ վեց մասի բաժնես կէս երկուսանեակ բոլիբօտ կ'ըլլան:

Հինաստիժանի լեզուն բարեկամ բառին հոմանիշը չունի, և պէտք է եղբայր ըսել:

Խտալիոյ մէջ խաղի թուղթերը կառավարութիւնը մենաշնորհ ըրած է, և տարին 29 միլիոն կը շահի:

Յրանաացիք 25 գիր ունին, հաս մ'ալ կայ որ կասկածելի է, այն է W գիրը:

Սանտուիչեան կղզիներու բնակիչները 12 գիր ունին, Պերմանցիք 18, Անգլիացիք, Հսլանտացիք և Գերմանք 26, Սպանիացիք և Աբլափունները 27, Սբանտինալցիք և Արաբացիք 28, Պարսիկներն և Ղպտիք 32, Վրացիք 35, Հայերը 38, Ռուսերը 41 և հին Մուկօֆցիք 43:

Սմենէն շատ գիր ունեցող լեզուն սանսկրիգն է, 50 գիր ունի, բայց գիրերուն շատ կամ քիչ ըլլայր փաստ մը չունի: Բռաի կողմէ անգլիերէնն ամենէն հարուստ լեզուն է, անգլիերէն կամ անգլիացած 350 հազար բառ ունի, որսց մեծագոյն մասն արուեստի և գիտութեանց բառեր են: Եէյքսրիք որ Անգլիացի հեղինակներու մէջ ամենէն շատ բառ

գործածողն եղած է, 16,000 բառ գործածած է: Միլտոն հաղիւ 8000 բառ և այսօր զարգացած մարդ մը իր գաղափարներն յայտնելու համար 3-4000 բառ միայն կը գործածէ: Անուս մարդ մը սովորաբար 500 բառի պէտք ունի, և գիւղացիք 200 բառով իրենց գործը կը լմեցնեն: Արուեստից և գիտութեանց յատուկ թերթերէն զատ՝ Օրագիր կամ գիրք կարդալու և հասկնալու համար 2000 բառ գիտնալը կը բաւէ, և այս ալ սորվելը մեծ բան մը չէ կարծեմ:

Երբ օդը հանդարտ է, ուղեւոր աղաւնի մը կրնայ 1150 մէրը տեղ թռչիլ մէն մի վայրկեանի մէջ:

Բնագէտները փորձով գտեր են թէ մեր աւանդուածն մէջ 45 տեսակ ճանճ կայ:

Հաշիւ եղած է որ Յորգանսն գետը տարին 6,500,000 թոնո ջուր կը թափէ Մեռեալ Ծովուն մէջ:

Սմենէն շատ ձեռնոց Գերմանիոյ մէջ կը շինուի, այս սպրանքին համար 1000 ֆապրիքայէ աւելի կայ հոն:

Սթոքհոլմի մէջ 15,000 հեռաձայնի գործակալութիւն կայ, ըսել է 17 բնակիչի համար մէկ հեռաձայն:

Անգլիոյ Պանքայլին մէջ իբր հետաքրքրական առարկայ մէկ միլիոն իրանոց պանքնօթ մը պահուած է որ այս օրուտն պանքնօթնե-րուն պէս 1792ին տպուած է, միայն թէ սա փարբերութիւնը կոյ որ գումարը, թուականն և արկղակային ստորագրութիւնը փոխանակ տպագրուած ըլլալու, ձեռքով գրուած են:

Ամբողջ աշխարհի մէջ 3064 լեզու և 1000է աւելի կրօնք կոյ. էրիկ մարդոց թիւը կանանց թիւին հաւասար է: Մարդկային կեանքի տեւողութիւնը միջին հաշուով 33 տարի է, և հազարէն մէկ հոգի միայն 100 տարի կ'ապրի:

Եւրոպայի և կարելի է աշխարհիս ամենէն հարուստ քաղաքը Զուիցերիոյ Պալ քաղաքն է, 124 հազար բնակիչներէն 180 միլիոնատէր կան, 174 հոգի 500,000 Ֆրանքէ մինչև մէկ միլիոն ունեցողներ. 170 հոգի կէս միլիոնոց են. և 895 հոգի ալ 100 000 Ֆրանքէ մինչև 500,000 Ֆրանք ունի, 15 տարուան մէջ քաղաքին հարստութիւնը 300 միլիոն աւելցեր է:

Անգլիա տարին 800,000 քիօ խաւաքարդ կը գործածէ քարդ-բօսդալ շինելու համար:

Մէկ թօնօ զինկօ արտագրելու համար հինգ թօնօ անուխ պէտք է:

Նիւ Եօրքի մէջ տարին հազար թօնօ թուղթ կը գործածեն երկոթուղիի տամակ շինելու համար:

Եւրոպայի ամենէն քիչ բնթերցատէր ժողովուրդը Ռուսիացին է, վերջի մարդահա-մարէն հասկցուած է որ վից միլիոն բնակիչ-ներէն չորս միլիոնը կարգալ գրեւ չեն գիտեր:

Եթէ Յրոնտայի Լ'նկերային Լիքիտասիոնը կատարուի, շարժուն և անշարժ կալուածներն հաշուելով՝ ամբողջ պարագ մճարուելէ վերջ՝ մէն մի բնակիչ 6477 Ֆրանք կ'էլնայ:

Կեանքը երկաթուղի մ'է, տարիները՝ կու-յարաններ են. վերջին կոյարանն է մահը. բժիշկները՝ հնոցպաններն են, և քահանա-ներն ալ քօնաի.թթօնները:

Սովորութիւն եղած է ըսել թէ առանց ստակի բան մը չըլլար, ս'ըջափ սխալ է այս կարծիքը, առանց ստակի պարագ կ'ըլլայ:

Համերու իշխանութեան մէջ լուս թիւնն է որ կը տիրապետէ:

Զուիցերիոյ մէջ գարոցէն բացակայ մնացող մանչ մը կամ աղջիկ մը դրամական առ-գանքի կ'ենթարկուի: Հիւանդութեան տանն ներելի է, բայց երբ կասկածուի թէ սուա-

հիւանդ է, կառավարութիւնը բժիշկ կը ղրկէ, և եթէ այս կասկած հաստատուի, այն ատեն իր ծնողք բժիշկին այցեգրինը վճարել կը պարտաւորուին:

Վերջին վիճակագրութենէ մը կը հասկընանք թէ՛ Մեծն-Քրիստանիոյ մէջ ընդամենայն 136 հազար Հրեայ կը գտնուին:

Գերմանացի գիտուն մը կ'ըսէ թէ՛ մարդու մը յիշողութիւնն ամառ ստենի աւելի զորաւոր կ'ըլլայ քան թէ ձմեռը և թէ յիշողութեան էն գէշ թշնամիներն են չափազանց սեռունդ, չափազանց մարմնական և մտային աշխատանք:

Լոնտոնի մէջ չորս հարիւր կրօնական, 47 բժշկական և 23 կրտաւագիտական թերթ և հանդէս կը հրատարակուին:

Նիւ Եօքքի Բնական Պատմութեանց թանգարանին թիթեանիկներու հաւաքածոն, իր տեսակին մեջ, աշխարհիս էն ընտիրներէն մէկն է ասոնց նմոյշները հաւաքուած են երկրագունտիս ամէն մասերուն մէջ, շատ մը մասնագէտ հաւաքիչներու միջոցով:

Սարա-Պերնտրի վերջին 5-6 տարուան մէջ ստացած գրամը, միջին հաշուով տարեկան 20,000 Անգլ. ոսկի կը հասնի, մինչդեռ 1872

թուականին Բարիդի «Օտէոն» թատրոնին մէջ ամսական 8 ոսկի միայն կ'ստանար:

Նարվեկիոյ մէջ էրիկ կնիկ միասին, երկաթուղիով ճամբորդելու համար փոխանակ երկու տոմսակ գնելու, միայն 1<sup>1</sup>/<sub>2</sub> տոմսակի գին կը վճարեն:

Մանչէսթրի մէջ Վեպտեմբերէն մինչև Մարտ ամիս, գիշերային վարժարաններ բաց են, ասոնք երկու սեռի համար են, կ'աւանդուին արհեստական, առեւտրական, գիտական, գրական և լեզուագիտական ծիւղեր, և սակայն մուտքը ձրի չէ, ուսանողն իբր մուտք բան մը վճարելէն զատ, իր դպրոցական պէտքերն ալ ինք հոգալու է:

Մեծ-մարդերու ձեռագիրները հաւաքող Յրանաացի մը կ'ըսէ թէ՛ Քրիստափոր Բոլոմպոսի ստորագրութիւնը 800 անգլ. ոսկիի գնելու համար շատ մը անձեր պատրաստ են:

Ռուսիոյ Արքայական գաւազանը զուտ ոսկիէ շինուած է և երեք անգլ. ոտք (մէկ մէթը) երկայնութիւն ունի, վրան բանուած զարդարանքներուն մէջ զետեղուած են 268 հատ ազամոնդ, 360 հատ սոււտակ (եագուս) և 15 հատ զմրուխտ:



## Զ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք



Ամերիկացի մը լրագրաց մէջ սա ծանուցումը քրաւ Խիստ կարճ ժամանակամիջոցի մէջ ամենաջնջին մէկ դուժարով մեծ հարստութեան տէր ըլլալով որ գաղանիքը իմանալ կ'ուզէ թող 10 դահեկան խրկէ: Հնգարներ դիմեցին իրեն եւ ստացան տպեայ թուղթ մը սպարունակութեամբ. գնէ զոյգ մը նապաստակ. 10 դահեկանի խնդիր է այս. էգ նապաստակը տարին 4-6 անգամ 4-12 ձագ կը հանէ. անոնց իւրաքանչիւր էգը երկու ամիսէն ծնիլ կոկսի. ալ կրնաք հաշուել թէ մէկ տարուան մէջ քանիպատիկ կը բազմապատկուի ձեր 10 դահեկանը. կարճ ժամանակի մէջ առանց դրամագլխի հարսացողը ծանուցումին տէրն եղաւ:

Ուրիշ մը սա ծանուցումն քրաւ 15 դահեկան խրկողին պիտի խրկեմ կարի մեքենայ մը, որով ամէն տե-

ԿՐԿՆԻ ԿՈՏՈՐՈՒՄԻՆ ԵՒ ԶԷԹԵՄԻԱՅՆ ԼՍՈՂՆԵՐ



սակ կար սքանչելի կերպով պիտի կատարէ: Ո՛վ օգուտ չի պիտի քաղեր այսպիսի մի առիթէ. հաղարներ կը խրկեն 15 դահեկանի ջնջին գումարը, ու կ'ստանան խնամով ծրարուած տուփ մը որոյ մէջէն կելլէ, երբ կը բանան, Անգլ. ասեղ մը:

—

Ուրիշ մը սա ծանուցում քրաւ: Ժամանակ գրածէ. ո՛րքան ժամանակ կըսպառի գրիչը մեզանի մէջ թաթխելով եւ կամ գրի մեքենայներով գրելով. մէճիտ մը միայն խրկողին պիտի խրկեմ հրաշալի գործիք մը, որ գրի մեքենայի նման արագ կը գործէ բայց առանց մեզանի. վաչինկթընի սպիտակ տուն իսկ մեքենաս կը գործածէ. անոնք որ այս ծուղակը ինկան ընդունեցին հատ մը Ծաղը-ռի-մատիտ:

—

Չորրորդ մը սա ծանուցում հրատարակեց, կէս տօլար խրկողը պիտի ընդունի պարզ բայց սքանչելի գործիք մը, որով բիւրաւոր մարախներ

կը ջարդունին Երկրագործ դասակարգէն բիւրաւորներ խրկեցին իրենց կէս տօլարը եւ հետեւեալ թղթարեր յանձնեց անոնց տուփ մը. որու մէջ կային երկու տախտակի կտորներ, որոց գործածութեան կերպը թուղթի մը վրայ տպեալ էր. «դիր մարախը» կը յանձնարարէր այս գործիքին հնարիչը, «այս երկու տախտակներուն մէջ տեղը, լաւ մը ճշմէ եւ աճա իսկոյն կը սասակի մարախը»:

—

Նոր հարս — (խոհարարուհիին) Այսօր ամուսինիս պիտի բսեմ թէ կերակուրը ես ձեռքովս եփեցի: Խոհարարուհի — Անանկէնէ թողունք որ այրի կերակուրը, չենէ չհաւատար էֆէնաին:

—

Խմբագիր մը երկու բաժանորդ կը կորսնցնէ սա պատճառով:

Աը երկուտրեակ մը ունէր, ուստի կը հարցնէ խմբագրին թէ ի՞նչ խնամք տանելու է անոնց ահռայ հանած ատենին:



Բը պարտիզպան էր եւ կը հարցնէ խմբագրին թէ ինչպէս ջնջէ մարտիւները որ իր պարտէզ կաւրչակէին:

Խմբագիրը կը պատրաստէ պատասխանները, սակայն անուններն շփոթելով Աին կը յանձնարարէ «վրանին յարդ ծածկել եւ բռնկցնել, որով խպառ կ'ազատիս այդ նշովեց արմատներէն»: Իսկ Բին կը յանձնարարէ «քիչ մը հնդկիկ իւզ խմցնել եւ ակռաներուն տեղը փոխարի կտորով մեղմիւ շփել»: Երկուքն ալ լրագրին մէջ իրենց տրուած պատասխանը կարդալով խիստ կը կատղին. եւ խկոյն կը դադրեցնեն իրենց բաժանորդութիւնը: —

Գերման ընտանիք մը Անգլիոս կը գաղթէն. փոքրիկ Մարթան կը շուարի կը մնայ երբ կը տեսնէ թէ ո՛չ ոք Գերմաներէն կը խօսի: Օր մը դաշտը կերթան, աղաղաղ մը կը խօսի. Մարթա ուրախութեամբ մօրը կը վազէ եւ կըսէ, Մայրիկ միայն ազաղաղը Գերմաներէն գիտէ:

—

Կինը կուզէ գլխարկ մը ունենալ. ուստի վարպետութիւն բանեցնելով ամուսինէն կը խնդրէ որ ձեռք մը նոր հանդերձ շինել տայ իրեն:

Ամուսիներ— Հանդերձ, այս գէշ ժամանակիս ինչպէս կրնամ հանդերձի ստակ գանել. եթէ ուզածդ զոյգ մը ձեռնոց կամ գլխարկ ըլլար, ինչ որ է:

Տիկինը— Է մի՛ խոզվիր, սիրելիս, ես ամէն կերպով պատրաստ եմ համակերպիլ, առ այժմ գլխարկով մը կը բաւականանամ:

—

Կառախումբէն ելած պահուն Գիւղացի մը Օրիորդի մը ետեւէն ձգած երկայն նոր մօտա փէշին վրայ կը կոխէ:

Օրիորդը— Աւանակ, փէշիս վրայ կոխեցիր:

Գիւղացին— Ներողութիւն Օրիորդ, բնաւ չէի կարծեր որ կով մը ատանկ երկայն պոչ ունենայ:

—

Պանգային սնօրէնը (խոհարարին)— Է. Պետրոս այսօր նորէն աղը շատ կէկ փախցուցեր ես:

Պետրոս — Բայց էֆէնտիս, քեզի պէս մէկու մը համար քիչ մը աւելի աղ գործածելը նշանակութիւն չունի. մանաւանդ որ աղը շատ ածան է:

Մայրիկ — Տղաս. ինչ որ այսօր կըրօ նաս ընել, բնաւ վաղուան սի ձգեր.

Տղան — Անանկ է նէ մայրիկ սա մնացած կարկանդակը, որ վաղուան համար պահեցիր, բեր որ ուտեմ:

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

1. Հարցարանի համար խրկուած հարցեր պէ՛տ է մինչեւ Մարտ 1 Ը. Ե. մեր ձեռք գնուի, եթէ ոչ յաջորդ տարին կը պատասխանուի:

2. Ծանուցմանց գինն է 1 ոսկի Օսմ. Օրացոյցի մէկ էջի համար:

3. Նոր հրատարակուած գրքեր կը ծանուցուին եւ կը յանձնարարուին եթէ երկու օրինակ նուիրուին հաստատութեանս գրադարանին:

4. Յօդուածներ, շահեկան, բարձր ու օգտակար, կը հրատարակուին, երբ առ առաւելն օրացոյցի երկու էջ միայն կը գրուին:

5. Օրացոյց ու գողները պարտին մինչեւ Հոկտեմբեր 1 (ը. Ե.) խրկել դրամը եւ քղթատարի ծախքը. քանզի մեր օրացոյցներ սովորաբար Դեկտեմբերի սկիզբ սպառած կ'ըլլան. Ի՛նչեւ կեդրոնատեղին կամ առաջնակարգ գրավանառաց եւ կամ առ

Գ. ՊՍ.ՂՏՍ.ՍՍ.ՐԵՍ.Ն  
ՊՐՈՒՍՍ.

# ՄՐՑԱՆԱԿԱԻՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

1.

Հոս 12 լուցկիէ բաղկացեալ խաչ մը կայ, 4 լուցկի ևս ա՛ռ և խաչը 5 հատ հաւասարակողմ՝ քառակուսիներու պիտի փոխուի:



2.

Ատոր փողոցի լապտեր կ'ըսեն, 9 հատ լուցկիէ կը բաղկանայ, տեղափոխէ միայն 6 հատ լուցկի և կ'ունենաս 4 հատ հաւասարակողմ՝ եռանկիւն, այս 4 եռանկիւններն ալ ճմէկ քառակուսի կը ձեւացնեն:



3.

Ա՛ռ, բարեկամս, 8 լուցկիի զետեղէ զանոնք սեղանիդ վրայ, ճիշդ ինչպէս ես հոս գծած եմ. տպա միայն կին գիրքը փոխէ և սհաւասարիկ գողտրիկ մի խաչ պիտի ներկայանայ աչացդ առջին:



4.

Այս առևն 10 լուցկիէ ձեւացած է, միայն 2 լուցկիի գիրք եթէ փոխես, տանդ գիրքը, առանց ս'էէ ծախքի, կ'ընաս փոխել:



5.

Հոս երեք եռանկիւն կայ. ս'ն, փոխէ միայն 3 լուցկիի գիրք և երեք հաւասարակողմ՝ քառակուսի պիտի ունենաս:



Այս հինգ լուցկիի խնդիրներն ամբողջովին ճշգիւ լուծելով գծագրողը կ'ընդունի Առձեռն բառարան մը : Մէկէ աւելի լուծողներէն քուէն կ'որոշէ մրցանակ ընդունողը :

1.

Ահռելի տեսարան, մին խածեր է և թող չի տար, միւսն ալ անխնայ կը հարուածէ խեղճին քիթէն բերնէն արիւն կը ցտակէ. ո՛րոնք են այս գազաններ :

2.

Բարի լոյս, աղնիւ տիկին :  
 Բարի եկաք, հազար բարի, վեր հրամանեցք :

Շնորհակալութիւն, ժամանակ չունիմ, միայն կարեւոր հարցում մ'ունիմ :

Խե՛ր բլայ, ի՛նչ կայ :

Մի՛ վրդովիք, կ'ուզէի գիտնալ միայն թէ քանի՞ զաւակ ունիք :

Ա՞յդ է եղեր հարցումնիդ, պարագ տեղը դող ելայ. կէտ տուզինա մտնչ ունիմ, որոյ իւրաքանչիւրը քոյր մ'ունի :

Շնորհակալ եմ, հասկցոյ, քնաք բարեւաւ :  
 Երթաք բարեւաւ, նորէն հրամանեցք :

Քանի՞ հոգիէ կը բաղկանայ այս բազմանդամ ընտանիք—հայր, մայր, զաւակներ և երկու ծառաներ ի միասին հաշուելով :

3.

**	**	**
**	**	**
**	**	**
**	**	**
**	**	**
**	**	**
**	**	**
**	**	**
**	**	**
**	**	**

Այս թանկագին հայելին ծննդեանո յիսնամեակին նուէր ընդունեցի, շրջանակին չորս կողմին վրայ 12 ադամանդ կար զետեղուած, անանկ որ, ո՛ր կողմէ որ նայէի, միշտ 12 ադամանդ կը տեսնէի : Ծառաստ աչք անկեց այս գոհարներուն և օր մը անտնցմէ 4ը գոգաներ էր սակայն անանկ վարպետութեամբ որ դարձեալ շրջանակին իւրաքանչիւր կողմի վրայ 12 ադամանդ կը տեսնուէր :

Թէև փոխան 32ի միայն 28 աղամանդ էր մնացած: Բացատրէ, ձեւով, գծագրութիւնով, առանց աւելորդ բառեր շալլելու:

4.

1 2 3 4 5 6 7 8 9 10

22	Այս կարգով սեղան պիտի նստին	44
----	-----------------------------	----

21 20 19 18 17 16 15 14 13 12

Անցեալ տարի ամբան արձակուրդի առթիւ 24 ուսանողներ Պրուսա եկան և պանդոկ մ'իջան. Ողիմպոսի ձիւնապատ դագաթ և քաղաքիս և շրջակայի շահեկան վայրեր այցելելէ ետև վերջին գիշերը փառաւոր և մեծածախ ընթրիք մը պատրաստել կուտան պանդոկապետին: Սեղան կը նստին 24 ուսանողներ. հիւրերը պատուելու համար պանդոկապետը սեղանին պարսպ մնացած ծայրը կը նստի և կ'ըլլայ թիւ 22:

Ընթրիքը կ'աւարտի, աղանդերէն ետև սուրճը կուգայ: Ուսանողներէն մին, Պ. Քոլմպոս, կը հարցնէ թէ ո՞վ պիտի վճարէ ընթրիքին ծախքերը:

Իւրաքանչիւր ուսանող, գլուխը քերե-

լով, գրպանը կը խուզարկէ և կը գտնէ թէ մնացեալ գրամով հազիւ կրնայ ինքզինք Բօլէճին դռնէն ներս նետել:

Ընկերներ, կը գոչէ Պ. Քոլմպոս, տեղերնիդ նստէք, ես կարգաւ կը համրեմ և ամէն 7րդ աղաա կ'ըլլայ վճարումէ: գործերնուդ կուգար, ետքը զոջում չընդունուիր:

Նատ լաւ, կը գոչեն ուսանողներ միաձայն:

Ատոր բեղիք չկայ. կ'ըսէ պանդոկապետը, առանց կուսհելու թէ է'նչ խաղ է որ պիտի խաղան ի մնաս իր գրպանին:

Իւրաքանչիւրը տեղը կը նստի, չարածճի Քոլմպոս կ'սկսի համրել. 1, 2, 3, 4, 5, 6, 7 և 7րդը ձեռքերն շփելով, կը ցտաքէ տեղէն և կը հեռանայ սեղանէն, Քոլմպոս կը շարունակէ միևնոյն ուղղութեամբ, Տրգէն սկսեալ և 7րդը խաղալով, ինչպալով կը հեռանայ սեղանէն: Այսպէս կը շարունակէ Քոլմպոս և ո՞րքան նուազի ուսանողներուն թիւը, այնքան ուժգին արոփել կ'սկսի պանդոկապետին սիրտը: Ի վերջոյ պանդոկապետը միս մինակ կը գտնէ ինքզինք սեղանին գլուխը և կ'ատկուրի 21 ուսանողներուն ձրի և փառաւոր ընթրիք մը տուած ըլլալուն համակերպիլ:

Բացատրէ Քոլմպոսի հնարադիտութիւնն:

5.

Հագիւ թէ այս 21 ուսանողներ քաղաքէս  
 հեւացած էին, ուրիշ 15 նոր ուսանողներ  
 եկան և պանդոկ իջան: Պանդոկին 15 անկո-  
 ղինները արդէն ուրիշ հիւրերէ գրաւուած  
 էին. ուստի պանդոկապետը խնդրեց որ սա-  
 լօնը պտուկին գետնի վրայ տարածուած ան-  
 կողնի մէջ:

Ուսանողները պահանջեցին որ քարե-  
 լաները իրենց տրուի և սկսան պուալ, կան-  
 ջել. հիւրերն ալ ամենեւին զտհողութիւն  
 ընելու արամադիր չէին գտնուեր: Խեղճ  
 պանդոկապետը շուարած, կեցած ի՞նչ ընելն  
 չէր գիտեր: Յանկարծ միտքը խորհուրդ մը  
 եկաւ. Եկէ՛ք, բաւ քաղդին ձգենք որոշում:

Հիւրերը և ուսանողները այս 30 հոգին սալօն  
 սուտի պանդոկապետը այս 30 հոգին սալօն  
 սուտի պանդոկեց և հոն զանոնք շարեց և մեծ  
 շրջանակ մը կազմեց: Յետոյ սկսաւ համրել  
 և ամէն իններորդը դուրս ձգելով 15 ուսա-  
 նողները մնացին. որոնք յաղթանակաւ գրա-  
 ւեցին հիւրերուն քարեօլաները. մինչ 15  
 հիւրերը ստիպուեցան գետին պտուկել:

Ի՞նչպէս շարեց այս 30 հոգին:

Այս հինգ խնդիրներն ամբողջո-  
 վին ճշդիւ լուծողը կ'ընդունի Գա-

լէնտէրի «Եւա»ն Ա. և Բ. հատոր :  
 Մէկէ աւելի ճշդիւ լուծողներէ քուէն  
 կ'որոշէ մրցանակ ընդունողը :

Հետեւեալ հինգ բնարաններու  
 վրայ կ'առաջարկուի գրել, արձակ  
 կամ ոտանաւոր, ճառեր և բարոյա-  
 վէպեր: Գրութիւնք պէտք է միայն  
 Օրացոյցի 2 էջ կամ 50 կարգ գրա-  
 ւեն և ոչ աւելի. ոճը պարզ, մա-  
 քուր աշխարհաբար, յուզիչ և գրա-  
 ւիչ, անանկ որ ընթերցողն ի բարին  
 առաջնորդուի: Լաւագոյնները պիտի  
 հրատարակուին Օրացոյցիս մէջ:

1. Խաղամոլին վախճանը:
2. Ալփօլին գոները:
3. Արբեցողին տունը:
4. Նպասակ կենաց կամ Ինչո՞ւ  
կապրիմ:
5. Յիպար Հայ բնագանի:

Մասնախումբ մը կը քննէ զըր-

կուած գրութիւնները և երեք անձի կուտայ մրցանակ, Ա. միամեայ, Բ. վեցամեայ և Գ. եռամսեայ լրագիր մը, զորն որ ընտրեն Օրացոյցիս վերջը դրուած լրագրաց ցանկէն :

Պատասխան ուղղոյներն պարտին Յ դահեկան նամակի դրօշմ զրկել, մին բութայի համար և մին նամականիւթի և գրագրութեան ծախքերու համար :

Պայմանաժամ Մարտ 1, ըստ նոր տոմարի :

ՄՐՅԱՆԱԿԱԻՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ 1905Ի

Ութսունըֆինգ տարբեր տեղերէ 250 անձինք պատասխաններ զրկեցին, զորոնք երեք դասակարգի բաժնելէ ետե քուէ—վիճակ—ձգեցինք. շահեցաւ

Ա. Մրցանակը, Մեկնութիւն նոր

Կտակարանի, 2221 էջ, լաթակազմ, Համբարձում Հանի Ա. քահանեան :

ՔՊԻ


Բ. Մրցանակը, Մեկնութիւն Չորից Աւետարանաց, 924 էջ, լաթակազմ, Յովհաննէս Բագարճեան :

ՊՐՈՍԱ

Գ. Մրցանակը, Ա. Գրոց Բառարան պատկերազարդ, էջ 635, լաթակազմ, Ճեմիչ Գ. Խշիկճեան :

Ա. մերիկ. Որբանց, Ուրճա

Անաւասիկ 1905ի Օրացոյցի խնդիրներուն պատասխանները



Արարատ

Որթ


Եսայի

3. Բիւրակն

Հրանդ

Ոսք

4.



3 հաս 99 9×99 = 891

5. 3 » 98.9×98 = 882

5 » 48.7×48 = 2326  
 1899

6.

41	49	9
1	33	65
57	17	25

6×48 = 108

8×99 = 792

7. 40×400 = 4000

4900

56×48 = 1008

8. 47×49 = 893

1904

9. Ժառանգութիւն  
 բաժնուած տանն.

10. Հացագործը, երբ  
 վաճառած է հացերը:

ԹՈՒՐԳԻՈՅ ԱՅԺՄԵԱՆ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԸ

1. Արեւելեան Մամուլ, Հրանդ  
 էֆ. Մամուրեան Որդի, Իզմիր. շա-  
 բաթաթերթ, տարեկան 50 դ՛ն.:

2. Արեւելք, Զարէն էֆ. Եռսուֆ-  
 եան, Ղալաթիա, Գամանաս փողոց  
 թիւ 8 Օրաթերթ, 140 դ՛ն.:

3. Աւեսաբեր, Տօք. Հ. Ս. Պարնըմ,  
 Ամերիկեան Խան, Պօլիս, շաբաթա-  
 թերթ 30 դ՛ն. — Տղայոց Աւետարեր,  
 ամսաթերթ եւ պատկերազարդ 6 դ՛ն:  
 Երկուքն ալ հայերէն, Հայատառ  
 թուրք. Յունատառ թուրք. եւ Պուլ-  
 կարերէն (Զօրինձա)

4. Բիւզանդիոն, Բիւզանդ էֆ.  
 Քէչեան, Պապր Ալի Ճատտէսի. թիւ  
 23—25, Պօլիս. Օրաթերթ, 120 դ՛ն.:

5. Բիւրակն, Բրօֆ. Յակոբոս էֆ.  
 Ճէճիզեան, Պապր Ալի Ճատտէսի.  
 թիւ 38, Պօլիս. շաբաթաթերթ, 50 դ՛ն.:

6. Լոյս, Կրօնաթերթ, Տ. Բարգէն  
 Ծ. Վ. Կիւլէսէրեան. Սուլթան Հա-  
 մամ. Վ. Մինասեան տպարան, Պօլիս,  
 շաբաթաթերթ, 54 դանկեան:



7. Ծաղիկ, Անտոն էֆ. Սաքայ-  
եան, Էսկի Չապիլյէ թիւ 72.  
Կրամսեայ 42—54 դահեկան:

8. Հանրագիտակ, Արսէն էֆ. Լու-  
սինեան շարաթաթերթ, 50 դահեկան:

9. Ճերթեյի Շարգիյե. Տիգրան էֆ.  
Ճիվէլէկեան. Պապը Ալի Ճատտէսի  
թիւ 20, օրաթերթ հայաստան թրքե-  
րէն 140—150 դահեկան:

10. Մանգումիի Էֆեբար, Յովհ.  
էֆ. Գայսէրեան, Պապը Ալի Ճատ.  
թիւ 38, օրաթերթ 80 108 դահ.:

11. Մասիս, Տօք. Երուանդ էֆ.  
Մասիս, Ղալաթիա, Գամանտօ փողոց  
թիւ 8, շարաթաթերթ 54 դահեկան:

12. Մեհմուայի Ալպար, Յովհան-  
նէս էֆ. Թօլայիան, Բերա Մեծ  
փողոց թիւ 65, շարաթը երկու ան-  
գամ, 60—85 դահեկան:

13. Սուրհանդակ, Ճերթեյի Շար-  
գիյեի խմբագրութեամբ. օրաթերթ  
75—100 դահեկան:

14. Փունը Համրարձում էֆ. Ալա-  
ճաճեան, Պալըզ Պազար, Նաֆիյէ  
Սան, թիւ 20, շարաթերթ 50 դահ.:

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ

Ի ՊՐՈՒՍՍ.



Իր ՅՅրդ տարին կը բոլորէ այս Յու-  
լիսի 1ին: Ինչպէս ցարդ նայեալն  
նաեւ այսու հետէ կրնգալին, առանց  
ո՛ր եւ է դաւանական խտրութեան,  
որք ու կարօտ Հայ աղջիկներ, որոց  
կը տրուի ծնողական ամէն խնամ,  
ընտանեկան կրթութիւն ու գործնա-  
կան պարզ դաստիարակութիւն: Բա-  
րբարաց յօժարակամ սիրոյ նուէր-  
ներն են եղած միայն ցարզ հաստա-  
տութեանս ՄԻԱԿ հասոյթ, ուստի  
կը խնդրենք Օրացոյցիս իւրաքան-  
չիւր Պատ. րնթերցողէ, տարին գոնէ  
մէկ անգամ յիշել հաստատութիւնս  
իր նուէրով եւ թելադրել ուրիշներ  
նոյնը ընել: Կը խնդրենք նաեւ գնել  
հատ մը օրացոյց և ջանալ որ ուրիշներ  
եւս հետեւին այս օրինակին: Դրամ եւ  
ծրար թղթատարի միջոցով փոխադ-

րելու դրութիւն ընդունուած ըլլալէ ի վեր, ո՛ր եւ է նուէր, դրամ թէ իրեղէն, ապահովապէս կրնան խրկուել մեզ առանց ո՛ր եւ է միջնորդի: Նուէրներ պիտի հրատարակուին Օրացոյցիս մէջ:

Հաստատութեանս մէջ կ'ընդունուին նաեւ միայն տասն ոսկի տարեթոշակով այնպիսի աղջիկներ, որք կը փախաքին լու դաստիարակութիւն ստանալ, բայց անկարող են 20-30 ոսկի վճարել գիշերօթիկ վարժարաններ մտնելու համար: Բացի սովորական գիտութիւններէ այսպիսիք կը սորվին նաեւ Անգլ. Գաղ. եւ Գերմ. լեզուներ, դաշնակ, երգեհոն եւ ձեւագիտութիւն, առանց յաւելուած ական վճարումի:

Դիմել աս Հիմնադիր-Տեսուչ  
Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ  
Պրուսս

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ

1. Առողջ, երջ. և երկար կեանք, սպառ. շրշ.	
2. Առաջնորդ Ամուսնացեաց	»
3. Ասպար կենաց	»
4. Լապտեր Մնողաց	4
5. Աշնան տերեւներ Բ. Տիպ	4
6. Սրբազան Պատմ. տաղաշափեալ. պատկերազարդ. սպառած	
7. Կեանք Տէր Յիսուսի, տաղաշափեալ, պատկերազարդ	4
8. Կեանք Սրբոց Առաքելոց, տաղաշափեալ, պատկերազարդ	4
9. Մայրիկին Առաջնորդը	1
10. Ոսկեղէն Բանալի Անգլ. լեզուի, Գ. Տիպ (տեսակին մէջ եղական) վկայած է Տարթ. է. Բիրս,	15
11. Ուղեցոյց Ս Գիրք ընթերցողաց, պատկերազարդ	5
12. Ընդարձակ Օրացոյց, 320 էջ	3
13. Պարզ Օրացոյց յաւելուածով 128 էջ	1
14. Բեթըրոն Արեւմտաբլ, յուղեւ պատմութիւն	5
15. Հարցարան Ս. Գրոց. պատկերազարդ. հրատարակելի	
16. Ետկար, կամ կորուած և վերստին դանուած	5
17. Զատագովութիւն Ս. Աւետարանի. վեր. Ա. Ամբրիսանեան հրատարակելի	5
18. Արեցողին որդին	2
19. Խաղամուր կամ երեք անգամ մահէ ազատուած. հրատարակելի	2

# ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆ

20, Չափաւեցիար, 20

Կ. ՊՈԼԻՍ

ԱՄԵՆԱՃՈՒՍ ՄՅԵՐԲ

Դպրոցական, Գրական, Գիտական,  
Վիպական եւ այլ գրեանց

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆը պատիւ ունի յայտարարել իր բազմաթիւ յաճախորդաց թէ ամէն տան ունի հարկ եղած անհրաժեշտ գիւրութիւններ կրթական ամէն յանձնարարութիւններ գոհացուցիչ պայմաններով կատարելու, ըստ որում իր գրավաճառական միակ եւ մեծ հաստատութիւն արագբաժնէ վերջին տաք տարիներու մէջ գոյրոցական նորանոր գասագրքերու շարք մը եւ այսպէս հիմնական բարեփոխումներ ներմուծած է մեր կրթական հին մեթոթներուն մէջ :

Զերմայէս կը հրաւիրուին Պոլսոյ եւ գաւառաց կրթական վարիչ մարմինները փութով յանձնարարել իրենց գասագրքերն ի նկատ առնելով գրատանս ընծայած առաւելութիւններն եւ ամէն բացառիկ պայմաններն :

# ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

Տամարական գիտելիք . . . . .	3
Օրացոյց . . . . .	17
Օսմանեան կայսրութիւն . . . . .	97
Հոգեւոր իշխանութիւնք . . . . .	119
Առաջնորդական վիճակներ . . . . .	122

## ՅԱՒԵԼՈՒԱՆՐ

### Կրօնական

Աւետարան . . . . .	131
Յիսուս ի Բեթելեոյ սար . . . . .	136
Խաչ օգնեա ինձ . . . . .	139
Նորաստեղծեալ . . . . .	143
Նայեաց սիրով . . . . .	145

### Քարոյականք

. . . . .	148
-----------	-----

### Բժշկական

1. Տնական գեղարան . . . . .	192
2. Տնական հիւանդապահութիւն . . . . .	203
3. Առողջապահական քերարան . . . . .	209

**Ուսուցչական**

- 1. Խնչ պէտք է ընեն մեր պղնձները 222
- 2. Իստուսանդուծիւն . . . . . 224
- 3. Զբօսանք . . . . . 227

**Հարցարան** . . . . . 231

**Փիսական** . . . . . 244

**Պատմական**

Նպարալաճառը . . . . . 262

Իմաստուն դատաւորը . . . . . 269

**Մերագործական** . . . . . 284

**Կենսագրական** . . . . . 298

**Վիճակագրական** . . . . . 304

**Ջուարեալիք** . . . . . 327

**Կարեւոր ազդ** . . . . . 331


**Մրցանակաւոր խնդիրներ** . . . . . 332


Մրցանակաւոր խնդիրներ 1905ի . . . . . 342

**Թուրքիոյ այժմեան Հայ քերթերը** . . . . . 345

**Մեծեկեան որբանոց** . . . . . 347

**Փանուցումներ** . . . . . 349





6747

2013

« Ազգային գրադարան



NL0031987

